


Ա. ՈՍԿԵՐՉՅԱՆ



ՎՈՎԿԱՍԻ  
ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ  
ՈՒՐՍ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՀԱՅԿԱՆ ԵՎ ՏՆՈՒՄ

1946





ԱՐՏԱՇԵՍ ՈՍԿԵՐՉՅԱՆ

891.71.09

Ո-24

ԱՍՏԻԳՂՍՄ Է 1981 թ.

ԿՈՎԿԱՄԻ ՀԵՐՈՍԵԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ  
ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

26624

26240  
A



Հ. Բ. ՅՈՒՆՏԶՐԱՏ

ԿՐԵՂՅԱՆ

1946

**А. ВОСКЕРЧЯН**  
**Героический образ Кавказа**  
**в русской литературе**  
(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1946

«Муза Пушкина как бы освятила давно уж на деле существовавшее родство России с этим краем, купленным драгоценною кровью сынов ее и подвигами ее героев».

В. БЕЛИНСКИЙ

«Պուշկինի մուսան ասես սրբազործել է Ռուսաստանի վաղուց և վեր գոյութիւն ունեցած հարազատութիւնն այդ երկրամասի հետ, որ նվաճված է նրա զավակների Թանկագին արյունով եւ նրա հերոսների սխրագործութիւններով»:

Վ. ԲԵԼԻՆՍԿԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                 |     |
|-----------------------------------------------------------------|-----|
| I. Առաջարան . . . . .                                           | 5   |
| II. Պատմական նախապայմաններ . . . . .                            | 8   |
| III. «Կովկասը ռուս տաղանդների պոետական հայրենիք» . . . . .      | 11  |
| IV. Պուշկինը Կովկասի առաջին երգիչ . . . . .                     | 18  |
| V. Գրիբոեդովի կովկասյան մտախնայերը . . . . .                    | 27  |
| VI. Ռոմանտիկական Կովկաս (Մառլինսկոև և Պրեժանկի մատին) . . . . . | 32  |
| VII. Հերոսական Կովկասը Լեռմոնտովի պոեզիայում . . . . .          | 46  |
| VIII. Ռոմանտիզմի խորտակումը Լև Տոլստոյի մոտ . . . . .           | 65  |
| IX. Անցյալի հերոսական Վ. Բրյուսովի պոեզիայում . . . . .         | 80  |
| X. Մարսիմ Գորկին և ռևոլյուցիոն Կովկասը . . . . .                | 86  |
| XI. Կովկասը սովետական պոեզիայում . . . . .                      | 95  |
| XII. Ա մ փ ո փ ու մ . . . . .                                   | 100 |

Պատ. խմբագիր՝ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎՖ 12645, Պ. 470, Տիրաժ 3000, 6 $\frac{1}{2}$  տպ. մ., հեղ. 4,75 մամ.,

Ստորագրված է տպագրության 10/XII—46 թ.

ՀՍՍՌ Մինիստ. Սովետին կից Պոլիգ. և Հրատ. Վարչ. № 1 տպարան,  
Երևան, 1946.

1942 թիվ. Կովկասը գտնվում էր հրի մեջ: Դաժան և նենգ թշնամին ներխուժել էր նրա նախալեռները: Ֆաշիստական դաշանն անմիջապես սպառնում էր Անդրկովկասի ազատասեր ժողովուրդների կյանքին. ֆաշիզմի սև ամպերը կախվել էին Կովկասի հպարտ լեռների վրա և նա դարձել էր գերմանական հափշտակիչների դեմ ուղղված սովետական ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմի կենտրոնական թատերաբեմերից մեկը, պատերազմ, որն ավարտվեց թշնամու վերջնական ջախջախմամբ:

Հարազատ Կովկասի համար մեծ առաջնորդի կոչով ոտքի էր կանգնել սովետական հզոր. երկիրը ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ:

Կովկասի հերոսական պաշտպանությանը մասնակցում էին ոչ միայն Սովետական Միության ժողովուրդները՝ միաձուլված Ստալինյան բարեկամությամբ, այլև ռուս ժողովրդի մեծ գրականությունը, որի տրադիցիաների հիման վրա դաստիարակվել էին Կովկասի հազարավոր պաշտպանները: Այս մասին լավ է ասել շքանշանակիր կապիտան Լիշանկովը. «Ես բելոռուս եմ և Կովկասը գիտեի Պուշկինի, Լերմոնտովի, Տոլստոյի գրքերից, ես սիրեցի այդ ծաղկուն երկիրը, և Կովկասով ճանապարհորդելը եղել է իմ թանկագին երազանքը: Վերջապես իմ այդ երազանքն իրագործվեց—ես Կովկասումն եմ, բայց ոչ որպես արկածներ փնտրող տու-

---

Ներկա աշխատության հիմքում ընկած է հեղինակի գեկուցումը՝ հարգացված Արմֆանի գիտական սեսիայում, 1942 թվի նոյեմբերին:



րիատ, այլ որպէս ռազմիկ, որը կոչված է կրծքով պաշտպանելու այդ չքնադ երկիրը» («Կ. Բանակի մարտիկ», 1944 թ. սեպտեմբերի 26):

Ռուսական առաջավոր գրականութեան տրադիցիաների հիման վրա դաստիարակված, Կովկասի համար մղած մարտերի բազմաթիւ մասնակիցներ հանդես բերին հատուկ սեյւ և ջանք այդ պոետական երկրի պաշտպանութեան գործին: Եւ դա հասկանալի է:

Կովկասով հպարտացել է Ռուսաստանն անցյալում. նրանով հպարտանում է Սովետական մեծ Միութիւնը: Կովկասը մեր երկրի մարդարիտն է, նա թանկ է յուրաքանչյուր սովետական հայրենասերի սրտին: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում այդ երկրի գեղեցիկ բնութիւնն ու նրա ժողովուրդների կյանքի և հերոսական պայքարի այն վառ ու հուզիչ նկարագիրը, որ մարդկութեանը պարգեւել է ռուսական անմահ գրականութիւնը:

Պատահական չէ այն փաստը, որ Կովկասի պաշտպանութեանը նվիրված հոդվածներում մենք հաճախ ենք հանդիպում այն ուս գրողների անուններին, որոնք ոգեշնչված սիրով գովերգել են Կովկասը:

Միխայիլ Իվանովիչ Կալինինն իր հոդվածում, որը գրված էր Կովկասի համար մղվող ահեղ ճակատամարտի օրերին՝ հիշեց ուս մեծ պոետ Լերմոնտովի անունը: «Կովկասի ժողովուրդների վրա մահացու վտանգ է կախվել, — կարդում ենք այդ հոդվածում: — Կովկասի վրա, որին այնքան ոգեշնչված սիրով երգել է Լերմոնտովը, այժմ պտտվում են թշնամու ինքնաթիռները: Նրա լեռնազագագաթները, նրա կիրճերը, հովիտներն է ճգնում թափանցել թշնամին, անգութ ու անողոր թշնամին, նենգ ու ագահ թշնամին»:

Իսկ սովետական գրող Իլյա Էրենբուրգը, արձագանքելով Միխայիլ Իվանովիչ Կալինինին, իր հոդվածի մեջ («Հանուն Կովկասի») բացահայտեց այն հարցը, թե Կովկասյան ժողովուրդների որ հատկութիւններն են գրավել

պոետն էր, պոետներին, ոգեշնչել նրանց և թե ինչու ուրա պոետ-  
ներին կողմից այնքան գովերգված այդ երկիրը հարազատ է  
Սովետական Միության բոլոր ժողովուրդներին, որոնք իրենց  
զավակների արշան գնով պաշտպանում են Թերեկի մոսկի  
ափերը:

«Պատահականություն չի, — գրում է Էրենբուրգը, — որ  
ռուսական պոեզիան, սկսած Պուշկինից ու Լերմոնտովից  
մինչև Մայակովսկին, մինչև Տիխոնովն ու Պաստերնակը,  
ոգեշնչում է գտել Կովկասի լեռներում: Նրա ձյունապատ  
զառաքները հյուսիսի մարդկանց դյուխել են ոչ միայն իրենց  
զեղեցկությամբ. Կովկասն ազատության վայր է եղել, հը-  
պարտության երկիր, պատվի երկիր, այդպես էլ մնացել է  
նա»:

Սովետական Միության հարազատ զավակները, ոգե-  
շնչված իրենց նախնիների հերոսական անցյալով ու ազա-  
տության վառ ձգտումներով, պանծալի Կարմիր Բանակի  
շարքերում անմահ սխրագործություններ էին կատարում,  
կրկնապատկելով հայրենիքի հինավուրց փառքը, և բարձր  
պահում ազատության ու հաղթանակի սրբազան դրոշը,  
Լենինի — Ստալինի դրոշը:

Ժողովուրդների ճակատագրի համար մղվող դաժան պայ-  
քարի շրջանում, բնականաբար, մարդու հիշողության մեջ վե-  
րականգնում են ուրա պոետների կողմից գովերգված ազատ  
Կովկասի բնության գեղեցիկ տեսարանները և նրա խրոխտ  
զավակների լեգենդար կերպարները: Մարդ ինքնաբերաբար  
մտաբերում է Պուշկինի Կովկասին նվիրված ջերմաշունչ լի-  
րիկական բանաստեղծությունները, և վերհիշում է Լերմոն-  
տովի ցասումնալից պոեզիայի մեջ սիրով կերտված հալարա-  
ռու անկախ կովկասցուն, որն ամենհի նժույգի վրա նստած՝  
փայլեցնում է սրբազան վրեժի համար մերկացրած իր սուրը,  
լսում է Մաքսիմ Գորկու և Մայակովսկու ռևոլյուցիոն շնչով  
համակված ոգևորիչ խոսքերը, որոնք մարտի են կոչում սո-  
վետական հայրենասերներին հանուն Կովկասի, հանուն  
մեր մեծ հայրենիքի անկախության ու պատվի:

Ռուս գրականության ջերմ սերը և ոգեկոթող համակեր-  
բանքը Կովկասի նկատմամբ, վերջինիս հերոսական կերպա-  
րի կերտումն ունի իր պատմությունը, դեպքերն ու դեմքերը,  
որոնց հետ ծանոթանալը հրամայական անհրաժեշտություն  
և խոր հետաքրքրություն ներկայացնող հարց է մեզ համար:

## II

Ռուս հասարակայնության և մասնավորապես գրողների  
բուն հետաքրքրությունը Կովկասի նկատմամբ սերտ կեր-  
պով կապված էր այն դեպքերի ու ռազմական գործողու-  
թյունների հետ, որոնք զարգանում էին Կովկասի լեռներում  
19-րդ դարի սկզբներից սկսած: Պատերազմական գործողու-  
թյունների նպատակն էր այդ երկիրը իր բազմազգ ժողո-  
վուրդներով միացնել ռուսական կայսրությանը: Կովկասի  
նվաճումը և այն ռուսական կայսրության անբաժանելի մա-  
սը դարձնելու քաղաքականությունը, սակայն, հեշտ ու խա-  
ղաղ չլուծվեց, հարկ եղավ գործադրել բռնություն, որ  
աչքի էր ընկնում իր խստությունը: Նիկոլայի ռեակ-  
ցիոն կառավարությունից ռազմական ուժի մեծ ջանքեր պա-  
հանջեց անհնազանդ լեռնականներին «հնազանդեցնելու»,  
նրանց կամքը, համառությունն ընկճելու համար, լեռնա-  
կաններ, որոնք իրենց տաղանդավոր զորավարի՝ Շամիլի  
գլխավորությամբ երկար ժամանակ կազմակերպված ու ակ-  
տիվ դիմադրություն էին ցույց տալիս ցարական զորքերին,  
արժանանալով Մարքսի և Էնգելսի հավանությանը, հիաց-  
մունքին: «Ժողովուրդներ, — դիմում էր Մարքսը ճնշված եր-  
կրների աշխատավորներին, — սովորեցեք նրանցից (չերկեզ-  
ներից), թե ինչի են ընդունակ մարդիկ, որոնք ցանկանում  
են ազատ ապրել»:

Չնայած Կովկասի բռնի նվաճման բոլոր բացասակա-  
նողմերին, ցարական ռեակցիոն կառավարության գործադր-  
քած դաժանություններին ու խստություններին, այնուամե-  
նայնիվ Կովկասի միացումը ռուսական կայսրությանը՝ այդ



ժողովուրդների համար ունեցավ պատմական և օրեկտիվորեն դրական ու առաջադիմական նշանակություն: Դրական ու առաջադիմական այն իմաստով, որ Կովկասի ժողովուրդները հնարավորություն ստացան հաղորդակից դառնալ ռուսական հզոր կուլտուրային և նրա միջոցով հվրոպական լուսավորությանը և ներգրավեցին ժողովուրդների այն համատեղ պայքարի մեջ, որն ավարտվեց ցարական միապետության ու կապիտալիզմի լիակատար ոչնչացմամբ՝ մեր երկրում:

Արևելքի փոքր ազգերի կուլտուրական առաջադիմության ու քաղաքակրթության գործում՝ ռուսական պետականության բարերար ազդեցության ու դրական դերի մասին իր ժամանակին (1851 թ.) գրել է Ֆրիդրիխ Էնգելսը Կարլ Մարքսին հասցեագրած մի նամակում. «Ռուսաստանն, ընդհակառակը արևելքի վերաբերմամբ նա իրոք առաջադիմական է եղել,— կարդում ենք Էնգելսի մոտ:—Ռուսական իշխանությունը... քաղաքակրթող դեր է կատարել Սև և Կասպիական ծովերի նկատմամբ, Կենտրոնական Ասիայի, բաշկիրների և թաթարների նկատմամբ: Ռուսաստանն ավելի մեծ շահով կրթական և մանավանդ արդյունաբերական տարր է ընդունել իր մեջ, քան Լեհաստանը, որն իր էությունմբ ասպետական պորտաբույծ բնույթ է կրում» (Մարքս և Էնգելս—Հատընտիր նամակներ, Երևան, հատոր 1-ին, էջ 68): Այս խոսքերը ամբողջությամբ կարող են վերաբերվել և վերաբերում են Կովկասին, նրա նվաճմանը: Դա մի ճշմարտություն էր, որ կռահեցին կովկասյան ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչները դեռևս 19-րդ դարի առաջին տասնամյակներին: Բավական է հիշել վրացական հանճարեղ բանաստեղծ Նիկալայ Բարաթշվիլու, հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի, Ադրբեջանի ականավոր գրող ու մրտածող Միրզա Ֆատալի Ախունդովի և կամ օսեթական ժողովրդի տաղանդավոր երգիչ Կոստա Խետագուրովի անունները՝ այդ բանում համոզվելու համար: Նրանք, ինչպես և նրանց հաջորդող առաջավոր սերունդները, հասկացան, որ

Ռուսաստանին միանալը, վերջին հաշվով, փրկության է՝  
ռուսական կուտուրայի ու եվրոպական լուսավորության  
հետ մերվելը առաջադիմական երևույթ և դրա համար էլ  
ամբողջ հոգով ողջունեցին այն։ Կովկասյան ժողովուրդների  
լավագույն զավակները ցարական միապետությունը չէին  
նույնացնում ռուս ժողովրդի և նրա ստեղծած մեծ կուտու-  
րայի հետ։ Նրանք շատ լավ գիտակցում էին այն խոր տար-  
բերությունը, որ գոյություն ունեւր Նիկոլայ թագավորի և  
ռուս պոետ Պուշկինի միջև, տարբերություն, որն իր արտա-  
հայտությունն էր գտնում դեպի փոքր ժողովուրդներն ունե-  
ցած նրանց վերաբերմունքի մեջ։

Յարական Ռուսաստանը ժողովուրդների բանա էր։  
Բայց նա բանա էր և ռուս ժողովրդի համար։ Ծորտատիրա-  
կան, բյուրոկրատական ռեակցիոն ռեժիմի արճիճե ծանրու-  
թյան տակ տնքում էին ոչ միայն փոքր ազգերը, այլև ինքը՝  
ռուս մեծ ժողովուրդը։ Նա լուսավոր ուղի էր փնտռում ցա-  
րական ոստիկանական խավարից ազատ, անկաշկանդ աշ-  
խարհ դուրս գալու համար, և այն դտավ լենինիզմի մեջ։  
Փոքր ազգերի լավագույն զավակները ռուսական առաջադեմ  
ու ռևոլուցիոն կուտուրայի մեջ էին որոնում իրենց ազգի  
փրկության, ազգային վերածնունդի, ազատ ու երջանիկ  
կյանքի նախադրյալները։ Լիրիկական ջերմությամբ իր ժո-  
ղովրդի դառն ու ճնշված վիճակը երգելով՝ օսեթական պոետ  
Խեթագուրովը, օրինակ, Պյատիգորսկում Լերմոնտովի հուշ-  
արձանի բացման առթիվ գրած բանաստեղծության մեջ,  
դիմելով իր հայրենիքին ասում էր.—

Յնժա՛ այժմ, ի՛մ հայրենիք թանկագին,  
Ու դարավոր աղետները մոռացիր։  
Թո՛ղ սավառնի՛ խորախորհուրդ քո հոգին,  
Ազատության գուշակն է սա հրածին։

Աիրի՛ր նրան, ինչպես պոետն աքսորված  
Վա՛ռ սիրում էր քո ժաշները մթադին։  
Այցի՛ր արի ու ողջունի՛ր դու սրտանց  
Խեղ ցասումի, ինտրիգների այս զոհին։

Օսեթական մեծ բանաստեղծի այս վերաբերմունքը՝ ռուսական կուլտուրայի մեջ ազատութեան գրավական տես-  
նելը՝ եզակի երևույթ չէր և ոչ էլ պատահականութիւն: Դա  
կովկասյան ժողովուրդների մեջ իշխող տրամադրութիւն-  
ների բնորոշ արտահայտութիւն էր, տրամադրութիւններ,  
որոնք մեզ, հայերիս շատ լավ հայտնի և հարազատ են մեր  
գրականութեան ու հասարակական զարգացման պատմու-  
թիւնից:

Դեպի ռուսական կուլտուրան ունեցած այդ վերաբեր-  
մունքն ըմբռնում և շատ բարձր էին զնահատում ռուս գրող-  
ները, որոնք դեպքերի բերումով եղել են Կովկասում, շփվել  
են տեղի ժողովուրդների և նրանց ներկայացուցիչների հետ:  
Ռուս գրականութեան ականավոր ներկայացուցիչների ու  
կովկասյան ժողովուրդների լավագույն զավակների միջև  
տարիների ընթացքում ստեղծվել է սերտ բարեկամական  
հարաբերութիւններ՝ շահերի փոխադարձ ըմբռնման ու ազ-  
գային արժանապատիւթեան հարգելու հոգի վրա: Այդ հա-  
րաբերութիւններն իր հերթին ռուս մեծ ժողովրդի և կով-  
կասյան բազմազգ ժողովուրդների փոխադարձ հարգանքի ու  
համակրանքի անդրադարձումն է հանդիսացել: Ռուս նշա-  
նավոր գրողները հեռու են եղել ի հաճույս իշխող դասա-  
կարգերի հրահրվող ազգային անտագոնիզմից և, մերժելով  
այդ վերաբերմունքը, հանդես են եկել ժողովուրդների բա-  
րեկամութեան ու եղբայրութեան ջերմ պաշտպան: Այդ մա-  
սին են խոսում Կովկասին նվիրված նրանց անմահ ստեղ-  
ծագործութիւնները:

### III

Կովկասը, նրա բնութեան կախարդական գեղեցկութիւ-  
նը, ժողովուրդների արտասովոր կյանքն ու բարքերը գրա-  
վել են Կովկաս ալցելած ռուս գրողներին, կաշկանդել են  
նրանց սրտերը և ստեղծագործական օգևորութեամբ ներշնչ-  
ել: Իսկ Կովկասում ապրած կամ Կովկաս ալցելած գրողնե-

ըը մեծ թիվ են կազմում: Ով չի հիշում նրանց անունները: Պուշկին և Լերմոնտով, Գրիբոեդով և Դենիս Դավիդով, Մալ-  
 փինսկի և Պուլեժաև, Սոփեսկի և Կյուխելբեկեր, Նարեժնի և  
 Պոլոնսկի, Տոլստոյ և Բրյուսով, Գորկի և Մալախովսկի,—  
 կարելի է այս ցուցակը շարունակել,— եկել ու անցել են  
 կովկասյան լեռներով, վայելել են նրա գեղեցկությունները:  
 Այդ գրողների զգալի մասը աքսորված էր Կովկաս քաղաքա-  
 կան անվտանգության համար, իսկ մի մասը կամ պաշտո-  
 նական ծառայությամբ էր կապված Կովկասին, կամ բախտի  
 բերումով էր այցելել նրան: Եվ ուսա գրողներից նա, ով ապ-  
 րել է Կովկասում,— լինի դա քաղաքական աքսորական, թե  
 պաշտոնական ծառայող,— ճանապարհորդել է նրա լեռների  
 նեղ կածաններով, շնչել է ձյունապատ բարձունքներից ար-  
 շավող թարմ օդը, խմել է սառնորակ աղբյուրների կենարար  
 ջուրը, արժանացել է սևաշյա կովկասուհու ջերմ հյուրասի-  
 րությանը, դիտել է լեռնականի անօրինակ ջիգիտությունը  
 և լսել կամ տեսել է նրա վրեժի ցասումնալից պոռթկումը,—  
 նա, երբեք չի կարող մոռանալ Կովկասը: Այդ «առասպելա-  
 կան» երկիրը խոր ու անջնջելի տպավորություն է թողել ի-  
 բեն այցելած օտարերկրացու, առավել ևս պոետների վրա:  
 Բայց նրանց վերաբերմունքը դեպի այդ երկիրը միատեսակ  
 չի եղել: Խոր տարբերություն կա գրողների մոտեցման միջև:  
 Այդ տարբերությունն, անշուշտ, պայմանավորված է պատ-  
 մական ժամանակաշրջանով ու հեղինակների աշխարհա-  
 յացքով, և դա հասկանալի է: Պուշկինի և Լերմոնտովի Կովկա-  
 սը նման չէ և չէր կարող նման լինել Լև Տոլստոյի կերտած  
 Կովկասին, և ոչ էլ վերջինիս Կովկասը նման է Գորկու և  
 ռուսական պոետների պատկերած Կովկասին: Տարբերու-  
 թյունը մոտեցումների մեջ հսկայական է: Կովկասի կերպա-  
 րը ենթարկվել է էվոլյուցիայի, նա տարբեր դույներով է  
 հանդես եկել տարբեր էպոխաներում և տարբեր գրողների  
 մոտ: Բայց նրա հիմնական հատկանիշը՝ հերոսականու-  
 թյունն ու ազատասիրությունն ընդունվել է բոլորի կողմից,



Յեկ եղել են գրողներ, որոնք պաշտոնական իդեոլոգիայի արտահայտիչը լինելով, չեն համակրել այդ գծերը:

Անցյալ դարի 20—30-ական թվականներին, երբ ռուս գրականության մեջ իշխում էր ռոմանտիզմը, Կովկասն իր հոյակապ պատկերներով ու հպարտ կերպարներով խորապես ներդաշնակեց այդ տրամադրությանը և առատ նյութ հանդիսացավ նրա համար: Ռուս ռոմանտիկները իդեալականացնելով լեռնականների «վայրենի ազատությունը» և հերոսական բնավորությունները, գիտակցորեն, իսկ ոմանք էլ անգիտակցորեն, հակադրվում էին ցարիզմի բռնի նվաճողական քաղաքականությանը: Այս մասին հետաքրքիր դիտողություն է անում ակադեմիկ Նիկոլայ Յակովլևիչ Մառը՝ «Կրաց ազգային հանճարը» հոդվածում: «Քանի դեռ տեղի էր ունենում Ռուսաստանի արյունոտ պայքարը Կովկասի մոլոցլմանական լեռնային ժողովուրդների դեմ, — ասում է Մառը, — ռուս գրողները մրցում էին արևմտյան եվրոպացիների հետ՝ կովկասյան աշխարհի ռոմանտիկական ըմբռնման ասպարիզում: Դա այն ժամանակ էր, երբ մի կողմից «երազուն անգլիացիներն ու լեհերը իրենց ուժերը նվիրում էին գովերգելու այն անհույս պայքարը», որ լեռնցի ցեղերը մղում էին «հյուսիսային հսկայի» դեմ, մյուս կողմից Պուշկինի, Մառլինսկու և Լերմոնտովի երկերը կարողացել էին Կովկասը և նրա բնակիչներին պատկերացնել ամենահրապուրիչ պոետական կոլորիտով...»:

Հետագա շրջանում, 40—50-ական թվականներին և հետո, երբ գրականության մեջ իշխող դիրք է գրավում ռեալիզմը, Կովկասի շափաղանցրած և փառահեղ պատկերումը կորցնում է իր նշանակությունը: Կյանքը այլ պահանջներ է առաջադրում: Բարձրացող ռազմոչինեց դեմոկրատական ինտելիգենցիան չի սահմանափակվում առաջին ռոմանտիկներին, դեպի լեռնականներն ունեցած անկեղծ, բայց պասիվ համակրանքով: Մերժելով ցարիզմի բռնի քաղաքականությունը, որը քողարկվում էր «վայրենի ցեղերին» քաղաքակրթելու և լուսավորելու դիմակով, դեմոկրատական ուղու-



ցիոն ինտելիգենցիան պայքարի էր կոչում ժողովուրդներին՝ ցարական-ճորտատիրական բռնակալության դեմ: Այս տեսակետից բնորոշ է Ուկրաինայի մեծ պոետ Տարաս Շեվչենկոյի օրինակը, նրա պոեզիայի մեջ խոր արձագանք է գտել կովկասյան ժողովուրդների պայքարն իրենց ազատության ու անկախության համար: «Կովկաս» սքանչելի մարտաշունչ բանաստեղծությամբ Շեվչենկոն ողջունում է կովկասյան ժողովուրդների այդ պայքարը և ոգեշնչված բացականչում. —

Փառք նաև ձեզ կապույտ լեռներ՝

Սառույցներով պատած.

Նույնպես և ձեզ, մեծ ասպետներ.

Պայքարեցեք, հաղթանակեք

Հանուն ժողովրդի փառքի,

Ձեզ հետ է ուժը, ձեզ հետ է ճշմարտությունը,

Եվ ազատությունը վես:

Այսպիսի բարեկամական ու մարտական կոչով դիմեց մեծ Կորզարը Կովկասի ժողովուրդներին և այդ կոչը թանկ նստեց բանաստեղծի վրա, դառնալով նրա աքսորի գլխավոր շարժառիթներից մեկը: Շեվչենկոյի վերաբերմունքը կրկին անգամ ցույց է տալիս ու հաստատում այն ճշմարտությունը, որ Կովկասը տարբեր շրջաններում և տարբեր գրողների մոտ տարբեր գույներով է փայլել և այլ լույսով լուսավորվել: Բայց հիմնականը և գերակշռողը՝ ռուս գրականության մեջ, եղել է խոր սերն ու համակրանքը դեպի այդ երկիրը և նրա ժողովուրդների կյանքն ու պայքարը:

Կովկասը բանաստեղծական երկիր է, ոչ միայն բնության հրաշալիքներով, այլ և ժողովուրդների հոգու հարբստությամբ, ուժեղ բնավորություններով, ռազմատենչ ոգով և պոետական հուզիչ ստեղծագործություններով: Կովկասի խստադեմ լեռներին այցելությանը գնացած բոլոր ականավոր գրողները կարծես միաբերան այդ են վկայում:

«Երկու ամիս ես ապրեցի Կովկասում, — գրում է Պուշ-

կինը եղբորը Լևին՝ Կովկաս կատարած առաջին այցելության անմիջական տպավորության տակ... Յովում եմ, բարեկամս, որ դու ինձ հետ միասին շտեմար կովկասյան լեռների հիանալի շղթան, նրանց սառցապատ գագաթները, որոնք հեռվից, պայծառ արշալույսին թվում են տարօրինակամպեր, բազմազույն ու անշարժ... Կովկասյան երկրամասը, որն Ասիայի տոթ սահմանն է, ուշագրավ է բոլոր կողմերով»:

«Կովկասը... հարուստ է պոետի և ումանտիկի համար հետաքրքիր առարկաներով» — գրում է Մաուլինսկին՝ իր մի նամակում: Իսկ Լեւմոնտովը նկատում է. «Կովկասի լեռները ինձ համար սրբազան են»: Նման եզրակացության է դալիս և ռուսական հողի մեծ գրող Լեւ Տոլստոյը. ամփոփելով իր տպավորությունները Կովկասից՝ 1854 թվին նա իր օրագրի (9-ը հունիսի) մեջ նշում է. «...Ես սկսում եմ սիրել Կովկասը, թեև հետ մահվան, բայց ուժեղ սիրով: Իրոք, լավ է այդ... երկիրը, որի մեջ այնպես տարօրինակ և պոետական ձևով միախառնվում են երկու միանգամայն հակադիր երեվույթներ՝ պատերազմը և ազատությունը»: Իսկ Մաքսիմ Գորկին խոստովանվում է 1931 թվին՝ Վրաստանի 10-ամյակի առթիվ գրած հոդվածում. «Ես երբեք չեմ մոռանա, որ հենց այդ քաղաքում (Թբիլիսի) եմ կատարել իմ առաջին անհաստատ քայլը այն ճանապարհին, որով ես ընթանում եմ արդեն չորս տասնյակ տարի: Կարելի է մտածել, որ հենց այդ երկրի հոյակապ բնությունը և նրա ժողովրդի ումանտիկական փափկությունը, — հենց այդ երկու ուժը ինձ խթան հանդիսացան, որ թափառաշրջիկին դարձրեց գրող»:

Այսպիսի ուղղակի վկայություններ շատ կարելի է բերել, հարկ եղած դեպքում: Բայց, ամենալավ վկայությունը, պերճախոս ապացույցը, դա հենց ռուս մեծ գրականությունն է, Կովկասին նվիրված ռուս հեղինակների ստեղծագործությունները, որոնց վերլուծությամբ մենք դեռ կգրադվենք:

Սխալ չի լինի, և ոչ էլ չափազանցություն, եթե ասեմ, որ Կովկասը կարևոր դեր է խաղացել ռուսական գրականու-

Թյան զարգացման գործում: Այս երկիրը ոչ միայն ոգևորել է բազմաթիվ գրողների և ստեղծագործական հուր բորբոքել դրանց սրտերում, այլև կենդանի պատկերներ մատակարարել իր պոեզիայի, ժողովրդական ավանդույթյունների գանձարաններից և իրական կյանքի հարուստ դեպքերից: Կովկասը շատ ուռա գրողների համար եղել է ստեղծագործական շտեմարան, որտեղից նրանք առատ նյութ են վերցրել իրենց կերպարները կերտելիս: Դեռևս Դերժավինն ու Ժուկովսկին առանձին բանաստեղծություններ են նվիրել Կովկասին, բայց առաջինը Պուշկինն էր, որ կովկասյան թեմատիկան դարձրեց ստեղծագործության առանցք, ստեղծեց իր «Կովկասի գերին» սքանչելի ողմանտիկական պոեմը (1821 թ.) և դրանով զարկ տվավ կովկասյան մոտիվների առատությանը ուռա գրականության մեջ: Կովկասը, Ռուսաստանի հարավը նպաստեց Պուշկինի հանճարի ծաղկմանը: Գրիբոեդովը Կովկասում է հորինել իր անմահ կատակերգությունը: Մառինսկու համար շոնդալից գրական համբավ ստեղծեցին Կովկասի կյանքից վերցրած նրա ողմանտիկական վիպակները: Լերմոնտովի տաղանդը, ինչպես մի կորյուն, առնականացավ Կովկասի լեռներում: Լեվ Տոլստոյի վիթխարի գրական գործունեությունն այս երկրում սկսվեց: Գորկու ճակատագիրը երջանիկ ժպիտով փայլեց Կովկասում: Թիֆլիսում վճռվեց նրա կյանքի ճիշտ ուղին, և այստեղ էլ տղագրվեց նրա առաջին գրվածքը՝ ազատության շնչով տոգորված «Մական Զուդրա»-ն: Գորկու կյանքի և հիշողության մեջ վառ են պատկերանում Կովկասի ձյունապատ լեռները և նրա ազատասեր զավակները: Վալերի Բրյուսովը Կովկաս կատարած իր այցելությունների, գիտական պրպտումների ու պոետական գործունեության ընթացքում ոգևորվում է կովկասյան ժողովուրդների հեռավոր պատմությամբ, հատկապես հայ ժողովրդի հերոսական անցյալով և նրա կուլտուրական, գրական անմահ գանձերով: Կովկասը, Վրաստանը սովետական մեծ պոետ Մայակովսկու ծննդավայրն է, հայրենիքը: Իր մանկության, ինչպես և հասուն շրջանի տը-

պավորությունները նա մարմնավորել է իր մարտական պոե-  
զիայում:

Այո, փաստերը պերճախոս ու ներշնչող են: Եթե դրան՝ ա-  
վելացնենք ռուս գրողների ուշադիր վերաբերմունքն ու լուրջ  
հետաքրքրությունը Նալդ ժողովուրդների կյանքի առումնա-  
սիրության ասպարիզում, նրանց ավանդությունների ու պոե-  
զիայի առատ օգտագործման փաստը իրենց գրվածքնե-  
րում, — ահնհայտ կդառնա այն կարևոր դերը, որ դնեցել է  
Կովկասը ռուս գրականության զարգացման, նրա տաղանդ-  
ների ոգեշնչման բնագավառում: Ավելին. Կովկասը եղել  
է ռուս պոետների Պառնասը, նրանց մուսայի օրրանն ու  
հովանավորողը, ռուս գրողների պոետական հայրենիքը: Այժ  
մասին պատկերավոր ասել է Վիսսարիոն Բելինսկին, դեռևս  
անցյալ դարի 40-ական թվականներին: Խոսելով Լերմոնտո-  
վի բանաստեղծությունների մասին՝ մեծ քննադատը ոգե-  
րությամբ գրում է. «Բնության պատկերները մերկացնում են  
մեծ վարպետի վրձինը: Նրանք շնչում են երևակայական  
Կովկասի հոյակապության ու փարթամ փայլով: Կովկասը  
լիակատար տուրք է վերցրել մեր պոետի մուսայից: Տարօ-  
րինակ բան: Կովկասին կարծես վիճակված է լինել մեր պոե-  
տական տաղանդների օրրանը, նրանց մուսայի ոգեշնչողն  
ու սնուցանողը, նրանց պոետական հայրենիքը: Պուշկինը  
Կովկասին է նվիրել իր առաջին պոեմներից մեկը — «Կովկասի  
դերին» և նրա վերջին պոեմներից մեկը — «Գալուբ»-ը  
(«Տաղիտ» Ա. Ռ.) դարձյալ նվիրված է Կովկասին. նրա մի  
բանի հիանալի լիրիքական բանաստեղծությունները նույն-  
պես վերաբերում են Կովկասին: Գրիբոեդովը Կովկասում է  
ստեղծել իր «Խելքից պատուհասը»: Այդ երկրի վայրենի և  
վեհ բնությունը, նրա որդիների եռացող կյանքը և դաժան  
պոեզիան ոգևորել են նրա վիրավորված մարդկային զգաց-  
մունքները՝ ստեղծելու Ֆամուսովների, Սկալազուբովների,  
Ջագարեցկիների, Խլեստովների, Տուգաուխովների, Ռեպե-  
տիլովների, Մալալիների անտարբեր և ոչնչություն ներ-  
կայացնող շրջանը, մարդկային բնավորության այդ կարի-



կատուրաները: Եվ ահա հանդես է գալիս նոր մեծ տաղանդ  
և Կովկասը դառնում է բոցավառ կերպով սիրված նրա պոե-  
տական հայրենիքը: Կովկասի անմատչելի հավերժական  
ձյունով պատած բարձունքներում նա գտնում է իր Պառնա-  
սը, նրա կատաղի Թերեքում, նրա լեռնային հեղեղատնե-  
րում, նրա բուժիչ ջրերում նա գտնում է իր Կաստալական  
աղբյուրը, իր Իպոկրենան» (Բելինսկի, Ընտիր Նրկեր, հ.  
1-ին, Մոսկվա, 1934 թ. էջ 516):

Ավելի լավ ու ցայտուն դժվար է ասել: Ռուս գրակա-  
նության զարգացման հետագա փաստերը, որոնց մասին  
մենք հիշեցինք վերևում, կրկին անգամ հաստատում են մեծ  
քննադատի՝ Կովկասի դերի փայլուն գնահատականի ճշ-  
տությունը: Առաջին ռուս գրողը, որի ստեղծագործունե-  
ների մեջ փայլեց կախարդական Կովկասը իր պոետական ու  
ռոմանտիկ երանգներով—Պուշկինն էր: Նրան է պատկանում  
առաջնության պատիվը, Կովկասի, որպես պոեզիայի անըս-  
պառ աղբյուրի՝ հայտնագործման փառքը:

#### IV

Պուշկինն իր ազատախոհական բանաստեղծությունների  
համար արստրվելով հարավ և ապրելով Կովկասում՝ լուրջ և  
ուշադիր կերպով ուսումնասիրեց տեղի ժողովուրդների  
կյանքը, կենցաղը, բարքերը և հորինեց իր «Կովկասի գե-  
րին», որ մի փայլուն աստղ է պոետական ռոմանտիզմի  
ռուսական երկնակամարում: Այդ պոեմի ստեղծագործական  
ներշնչումը մեծ բանաստեղծն ստացել է Կովկասից, որը  
նրա համար, ինչպես ինքն է ասում «Նվիրման» մեջ, եղել է  
«մի նոր Պառնաս».—

Ես կմոռանամ, միթե, Կովկասի գագաթները վես,  
եվ վշտացող աղբյուրներն այն և թռչնած դաշտեր,  
Անապատներն այն տոթ, որ ինձ հետ կիսեցիր այնպես  
Դու ջահել հոգու տպավորումներ...



Ազատութեան ձգտող և ոռմանտիկորեն տրամադրված բանաստեղծին խորթ էր ցարական կառավարութեան կողմից դեպի քաջարի լեռնականները հրահրվող զոդուպիական ատելութիւնը, թշնամանքը: Հակառակ պաշտոնական վերաբերմունքի, նա իր պոեմի մեջ նկարագրում է սևաշյա շերքեզուհու սերը դեպի օտարութեան մեջ տանջվող ռուս գերին: Սիրո հրով բոցավառված սրտերը մտերմական գրկախառնութիւնների ու ջերմ համբույրների պահին մոռանում են իրենց իրական վիճակն ու իրենց շուրջը տեղի ունեցող արյունահեղ մարտերը և դառնում են մտերիմ ու հարազատ: Չերքեզուհու դժբախտ սիրո և կյանքից հիասթափված ռուս ցերեւ ոռմանտիկական պատմութիւնը Պուշկինը կարողացել է հարստացնել, հագեցնել լեռնականների խաղաղ կյանքի ու ռազմական գործողութիւնների նկարագրութեամբ, խոր սեր ու համակրանք արտահայտելով ռազմիկ ժողովրդի նըկատմամբ, արժանի խոսք ասելով հիացմունք պատճառող նրանց քաջութեանը: Ռուս գերու տալովորութիւնների միջոցով Պուշկինը հաղորդում է իր մտորումները, իր կարծիքները.

Բայց եվրոպացու ողջ ուշքը դարձավ  
Դեպի ժողովուրդն այս սքանչելի.  
Նրանց հավատը, բարքերը տեսավ՝  
Դառտիարակութիւնը լեռնականների,

Եւ պարզութիւնը սիրեց այդ կյանքի՝  
Հյուրընկալութիւն, ծառայն ռազմի,  
Արագութիւնը ազատ շարժմունքի,  
Վաղըր թեթևոտ և ուժը բազկի:

Ազատ բնութեան ու հպարտ լեռների մեջ դաստիարակված ժողովուրդը՝ ռազմատենչ իր սրտով, մարտական զենքերով ու նժուլզներով՝ գրավում են օտարերկրացու ուշադրութիւնը, արժանանում նրա համակրանքին: Ազատ ժողովրդների կյանքի հերոսական խորը կերպով ներդաշնակում

էր Վիհ ազատության ցնորքով զվարդ՝ ոռոս գերու հոգեկան ապրումներին, և ազատախոհության համար դատապարտված մեծ բանաստեղծի տրամադրություններին: Պուշկինը կերտում է ռազմիկ լեռնականի հերոսական դիմանկարը՝ «միշտ անհաղթելի և միշտ անհողդողդ» կեցվածքով:—

Հիանում էր նա հազուատով նրանց՝  
Թե պատերազմին և թե հասարակ.  
Չերքեզը զենքով է միշտ զարդարված—  
Հպարտ և գոհ է նա զենքերի տակ.

Վրան կապարճը հրազեն, վահան,  
Կուբանյան աղեղ, դաշույն ու արկան,  
Ընկերուհին է իր թուրը հավերժ՝  
Թե՛ պարապ պահին, և թե՛ գործի մեջ:

Ոչինչ ոչ մի բան նրան չի ընկճում,  
Ոչ ոք չի խփի—հեծյալ, հետիոտ՝  
Միշտ միևնույնն է, ու միշտ նույն տեսքում,  
Եվ անհաղթելի և միշտ անհողդողդ:

(Թարգմ. Գ. Սարգսյանի):

Պուշկինի համակրանքը դեպի Կովկասի քաջ որդիները, որոնք արյան զնով պաշտպանում էին իրենց ազատ կյանքը, կասկածից դուրս է: Սակայն, շնայած լեռնականների հիացմունք հարուցող խիզախությանը, հերոսությանն ու դիմադրության կամքին, այնուամենայնիվ, նրանք տեղի տվեցին ռուսական զենքին և Կովկասը ձյունապատ գլխով խոնարհվեց ռուսական ռազմական ուժի առաջ.—Смирись, Кавказ, идет Ермолов! (Խոնարհվի՛ր, Կովկաս, նրմուովն է գալիս.)—բացականչում է պոետը և ավելացնում.—

Եվ լռեց կովի աղմուկը մոլի:  
Ամեն ինչ ռուսաց սվինին հպատակ:  
Կովկասի որդիք, հպարտությամբ լի,  
Դուք մարտնչեցիք, սոսկալի ընկաք.

Սակայն չփրկեց ձեզ արյունը մեր,  
Ոչ զրահները ձեր կախարդական,  
Ոչ լեռներ, ոչ ձեր ձիերն անվահեր,  
Ոչ սերը՝ վայրի ձեր ազատության:

Այս տողերի մեջ կա և սեր դեպի Կովկասի քաջ որդիները, և ազգային հպարտություն: Պուշկինը հայրենասեր էր, Կովկասը նվաճելու մեջ նրան չէր ոգևորում այդ ժողովուրդներին բռնի ճնշելու փաստը, այլ նրանց լուսավոր ապագան, որ բերում էր իր հետ ռուս պետականությունը, ռուս ժողովուրդը, ռուսական կուլտուրան: Պուշկինը պիտակցում էր, որ Կովկասի նվաճումը տեղի ժողովուրդների համար ազգային ճնշման լուծ էր բերում և ազատության անկում: Նրա վերաբերմունքը այդ հարցում բացասական էր: Այդ բանը նա ցայտուն արտահայտել է «Կովկաս» բանաստեղծության հայտաբերված նոր քառյակում: Այստեղ խոսվում է «Կովկասի անմոռնի վրդովմունքի» և այն մասին, թե «ինչպես նրա վրա ուժն է շոքել օտար»: Խոսքն անշուշտ ցարական բռնակալության մասին է, որի դեմ ծառացել էր ինքը՝ մեծ պոետը: Բայց Կովկասի ժողովուրդները ստանում էին նաև առաջավոր կուլտուրայի հետ շփվելու, նրան հաղորդակից դառնալու հնարավորություն: Այս վերջին հանգամանքն էլ, գլխավորապես, ոգևորում և ազգային հպարտությամբ էր լցնում մեծ պոետի սիրտը: Ինչպես Բելինսկին է ասել, Պուշկինի մուսան նվիրագործել է Ռուսաստանի հետ գործնականորեն գոյություն ունեցող Կովկասի հարազատությունը: Պոեմի վերջերգում մեծ բանաստեղծն արձանագրում է պատմական այդ փաստը, և երգում, փառաբանում է ժամն այդ: Պուշկինը, ինչպես հայտնի է նրա գրվածքներից, կողմնակից չէր Կովկասի բռնի նվաճմանը, բայց քանի որ փաստը կատարված էր և Կովկասի ժողովուրդներն արդեն սկսում էին հաղորդակից դառնալ ռուսական առաջադեմ կյանքին ու կուլտուրային, ապա Պուշկինի այդ վարմունքը կարող է այլ լույսով դիտվել, այնտեղ նվաճողական քաղա-

քականության արդարացում չտեսնել, ինչպես գնահատվել է մինչև այժմ: Անհրաժեշտ տուրք տալով Կովկասի հպարտ որդիների քաջությանը՝ Պուշկինը գտնում էր, որ կանցնեն տարիներ և կմոռացվի մարտերի ձայնը, ժողովուրդների մեջ ապահով կյանք կստեղծվի.

Եվ ճամբորդն առանց վախի կը գնա  
Կիրճերով, որ դուք դրել էիք բուն,  
Եվ ձեր պատժի շուրջ կհյուսվի, ահա,  
Հուրերի մթին մի ավանդություն:

Պուշկինի պոեմը շնչում է Կովկասի բնության ուժանտիկ գեղեցկությամբ և համակված է լեռնականների կյանքի հերոսիկայով: Այստեղ լսվում են սիրող սրտերի ուժգին բաբախումը և դա ժողովուրդների բարեկամության մի խորհրդանիշ կարող է համարվել: Կովկասցիների և ռուսների մրտերմական փոխհարաբերության հարցը շատ է զբաղեցրել մեծ բանաստեղծին: Այս տեսակետից ուշագրավ է նրա ձեռագրի մեջ հայտարարված չգրված պոեմի պլանը, որը հայտնի է «Ռուս աղջիկը և չերքեզը» խորագրով: Եթե իր առաջին պոեմի մեջ Պուշկինը պատանեկական ավյուռով երգում է չերքեզուհու սերը դեպի ռուս գերին, ապա ասպագա պոեմի այս պլանի մեջ խոսվում է այն մասին, թե ինչպես կազակուհին սիրահարվում և ժամադրվում է չերքեզի հետ: Միայն կանանց բարձրացրած տագնապի շնորհիվ նրան գերի են վերցնում, հետո փոխանակում: Կազակուհին փախչում է իր սիրած չերքեզի հետ: Զույգերի սիրո պատմության այդ նկարագրությունը Պուշկինի ռոմանտիզմին տալիս է առաջադիմական նշանակություն, ռոմանտիզմը հաստատում էր ժողովուրդների բարեկամության դադամի տրք: Պուշկինի մոտ մարդկայինը հակադրվում է իշխողների շահերի համար հրահրվող ազգային ատելությանը: Նա փնտռում և գտնում է ժողովուրդներին իրար կապող մարդկային զգացմունքներն ու ապրումները: Այդ բոլորը անհեր-



գաշնակ էին հնչում Կովկասում կիրառվող ցարիզմի բութ ու բռնի քաղաքականությանը: Պակաս ուշագրավ չէ Պուշկինի վերջին շրջանում գրած (1833 թ.), բայց անավարտ մնացած պոեմը «Տազիտի մասին» (առաջ սխալ կերպով կոչվում էր «Եալուբ»): Այստեղ նույնպես նկարագրված էր լեռնականների կյանքն ու սովորությունները: Հեղինակը պոետական ջինջ պարզությամբ պատմում է այն մասին, թե ինչպես երիտասարդ Տազիտը փոքրուց դաստիարակվել է չերքեզի տանը: Այդ երիտասարդը մարդկայնությամբ լցված չի ցանկանում լուծել եղբոր արյան վրեժը և դրա համար էլ արժանանում է ծերունի հոր՝ Գալուբի անհեծքին: Երիտասարդը արտաքսվում է խոր վիշտ պատճառելով իր սիրած աղջկան:

Պուշկինի այս պոեմը հասուն գրչի արդյունք է: Նույնփուլ անավարտ վիճակում ընթերցողն զգում է կերտված բնավորությունների ամբողջականությունը և լեռնականների կյանքի բաղմակողմանի ընդգրկումն ու նրանց բարձր անխռով, էպիկական հանգստությամբ ընթացող ուսուցանական նկարագիրը: Կովկասյան ժողովուրդների կյանքի ու կենցաղի պատկերումը հաճախ է զբաղեցրել պոետին. կաթելի է ասել, որ իր կյանքի ընթացքում կովկասյան պատկերները չեն հեռացել նրա ստեղծագործական հորիզոնից: Դրան, անշուշտ, նպաստել է նրա երկրորդ (1829 թ.) այցելությունը Կովկաս: Այդ այցելության արդյունքը եղան նրա մի շարք փալուն լիրիկական բանաստեղծությունները: Ո՞վ չի հիշում «Կովկաս», «Փլվածք», «Անքը Կաղբեկի վրա», «Վրաստանի բլուրներին գիշերային մութն է նստել» և այլն հայտնի բանաստեղծությունները: Դրանք ներկայացնում են Կովկասի բնության հրաշալիքների գեղանկարչությունը և մարդկային ամենանուրբ զգացումների մեղմ պոսիկումը: Գամ ո՞վ չի լսել Ռախմանինովի դյուբիշ երաժշտությամբ հնչող Պուշկինի հուզիչ տողերը.

Մի երգիր ինձ մոտ երգերը տրտում  
Վրաց աշխարհի, ո՞վ գեղեցկուհի,

Բորբում են նրանք հիմա իմ սրտում  
Հուշեր ա՛յլ կյանքի, հեռո՛ւ եզերքի:

Այդ այցելության արդյունքը եղավ նաև Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Արզրում» հեռագրերի ակնարկը: Այստեղ Պուշկինին հասուկ սեղմությամբ ու պարզությամբ գրի են առված մեծ գրողի տպավորությունները կովկասի ժողովուրդներից, մասնավորապես Վրաստանից ու Հայաստանից: Պուշկինը համակրանքով է խոսում այդ ժողովուրդների մասին և նշում է նրանց՝ ուսա ժողովուրդի հետ ունեցած ներքին օրգանական կապվածությունը: Մեծ պոետը շատ լավ էր գիտակցում, թե ինչ կարևորություն ունի վրացիների ու հայերի համար Ռուսաստանի հովանավորությանն ապավինելը: Վրացիները, — գրում է Պուշկինը, — ռազմասեր ժողովուրդ են: Նրանք ապացուցեցին իրենց քաջությունը մեր դրոշակների տակ: Նրանց մտավոր ընդունակությունները սպասում են մեծ կրթվածության: Նրանք առհասարակ ուրախ և սրտաքայք բնավորություն ունեն»: Իսկ հայերի մեջ Պուշկինը արժանացել է ջերմ հյուրասիրության և տեսել է դեպի ուսա ժողովուրդն ունեցած նրանց նվիրվածությունը: Պուշկինը հիացել է Հայաստանի թարմացնող բնությամբ ու արգավանդ հողով: «Աս գնում էի բերրի արտերի և ծաղկափթիթ մարգագետինների միջով, — պատմում է նա: — Հունձը ծորում էր, սպասում էր մանգաղի: Ես հիանում էի այս սքանչելի հողով, որի բերրիությունը արևելքում առած է դարձել»: Մեծ բանաստեղծի այս լիրիկական տողերի մեջ չի կարելի չնկատել ջերմ վերաբերմունք դեպի այն ժողովուրդը, որ կյանք է տրվել այդ հողին և հալալ քրտինքով դարձրել է այն բերքառատ:

Պուշկինը կապված էր կովկասյան ժողովուրդների հետ, համակրում ու սիրում էր նրանց և բարձր էր գնահատում՝ կովկասցիների անկեղծությունը, պարզությունը և դեպի ռազմական գործն ունեցած նրանց սերը: Միաժամանակ նա

ցանկանում էր կովկասյան ժողովուրդների և ռուս ժողովրդի բարեկամությունը, որի համար ռեալ հող և անհրաժեշտ նախադրյալներ էր տեսնում նա: Այդ բոլորը բղխում էր ժողովուրդների բարեկամության մասին ունեցած նրա ընդհանուր հայացքից, որն այնքան ցայտուն արտահայտություն է գտել լեհ մեծ բանաստեղծ Միցկևիչին նվիրված ոտանավորի մեջ: Պուշկինը այցելելով գործող բանակ, չի ոգևորվում ցարիզմի նվաճողական պլաններով, այլ առանձին ցայտուն գծերով, ճանապարհորդական նոթերի ձևով տալիս է կովկասյան ժողովուրդների կյանքը: Նա աշխատել է տեսնել նրանց ռուս ժողովրդի հետ միավորող ընդհանուր հիմքերը և այն գտել է լուսավորության ու քաղաքակրթության մեջ: Ժողովուրդների բարեկամությունը Պուշկինի նշանաբանն էր: Այդ ոգով է տոգորված Դոնին նվիրված նրա հիանալի բանաստեղծությունը, որ նա գրեց իր վերադարձին.—

Լայն դաշտերի մեջ շողալով  
Հոսում է... Դոն, բարե քեզ:  
Զավակներիցդ քո հեռավոր՝  
Քեզ ողջուն են բերել ես:

Որպես եղբայր հռչակավոր,  
Դետերն ամեն դիտեն քեզ.  
Արաքսից ու Նիրատից խոր  
Քեզ ողջուն են բերել ես:

Շունչ քաշելով ոսոխից շար,  
Զզգալով հողն հայրենի,  
Արփաշայի ջուրը վարար՝  
Զիերն խմում են Դոնի:

Դու պատրաստի՛ր, սրբազան Դոն  
Հեծյալներիդ համար քաջ՝  
Հյուսիս կիզող ու կայծկատուն  
Քո խաղողի արևած:

(Թարգ. Վեսպերի).

Այս բանաստեղծությունն իր սքանչելի պարզությամբ ու փոքր հայրենասիրությամբ հանդերձ նշանավոր է նաև նրանով, որ այստեղ մեծ բանաստեղծը արտահայտել է Կովկասի ու Ռուսաստանի զավակների միջև գոյություն ունեցող հարազատությունը, նվիրվածությունը և փոխադարձ սերը: Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում «Եվգենի Օնեգին»-ի սևագրություններում պահպանված հատվածը, որ տեղ պոետը վերհիշելով իր այցը Կովկաս, բացականչում է.

Մի անգամ չէ, որ ընդունում ես ինձ.  
Սիրում եմ քեզ, սիրում եմ սաստիկ,  
Ինձ ողջունեցիր դու աղմկալի—  
Հզոր ձայնով քո փոթորիկների:

Մեծ գրողը ներքին օրգանական կապերով էր կապված պոետիայով հարուստ այդ երկրի հետ: Եվ հասկանալի է, թե ինչու իր ստեղծագործական արշավույսից մինչև իր կյանքի վերջը՝ Կովկասի հսկայական կերպարը իր ռազմասեր բնակիչներով՝ միշտ էլ հուզել է մեր հեղինակին, լցրել նրա սիրտը ստեղծագործական անհուն ոգևորությամբ, հարբստացրել նրա պոետական աշխարհը: Կովկասին նվիրված նրա ստեղծագործություններն աչքի են ընկնում արվեստի կատարելությամբ: Պուշկինը առաջինը ցնցեց ռուս ընթերցողների սրտերը Կովկասի գեղեցկությամբ, վառեց նրանց երևակայությունը այդ երկրի պոետիայով և ընդհանուր պատկերացում տվավ նրա մասին: Այս տեսակետից պոետի պատմական ու գրական նշանակությունը շատ մեծ է: Այդ փաստը փայլուն ընդհանրացման ենթարկելով Բելինսկին իրավացիորեն գրել է. «Պուշկինի թեթև ձեռքով Կովկասը դարձավ ռուսների համար նվիրական երկիր. ոչ միայն լայն, ազատ կամքի, այլև դարձավ անսպառ պոետիայի, եռացող կյանքի ու համարձակ երազանքների երկիր: Պուշկինի մուսան կարծես թե սրբագործեց վաղուց արդեն գործնականորեն գոյություն ունեցող Ռուսաստանի հարազատությունը այդ երկրի նկատմամբ»:



«մամբ, երկիր, որը գնված է ռուս զավակների թանկարժեք արյունով և հերոսների սխրագործությամբ»:

V

Պուշկինը «Ճանապարհորդություն» ակնարկի մեջ նկարագրում է իր անսպասելի հանդիպումը Գրիբոեդովի խոշորանգամ ղեկավար հետ, որ սալլի վրա դրած Թեհրանից փոխադրում էին Թբիլիսի: Այս աննշույթամբ նա վերհիշում է մեծ դրամատուրգի կյանքի առանձին դրվագները և նրա մեկուսացած աշխատանքը Վրաստանում, որի արդյունքն է եղել նրա հանձարեղ կատակերգությունը: «Նա,— կարդում ենք Պուշկինի մոտ,— հրաժեշտ տվեց Պետերբուրգին և անհագ սրվածությանը, գնաց Վրաստան, ուր մնաց ութ տարի նվիրված իր մեկուսացած անխոնջ պարապմունքներին: Նրա Մոսկվա վերադառնալը 1824 թ. հեղաշրջում էր նրա վիճակի մեջ և սկիզբ անընդհատ հաջողությունների: Նրա «Խելքից պատուհաս» ձեռագիր կոմեդիան աննկարագրելի աշխույթով գործեց և միանգամից նրան դասեց առաջնակարգ բանաստեղծների շարքը»: Ութ տարիների աշխատանքը Վրաստանում անհետևանք չի անցնում նաև Գրիբոեդովի անձնական կյանքի համար: Փոխադարձ սիրողացմունքներով նա կապվում է վրացական իշխանագուստը Նինա Ճավճավաձեի հետ և ամուսնանում: Պուշկինն այդ համարում է երջանիկ ամուսնություն: «Գալով Վրաստան,— պատմում է պոետը,— նա ամուսնացավ նրա հետ, որին սիրում էր... ես չգիտեմ ավելի նախանձելի մի բան, քան նրա փոթորկալից կյանքի վերջին տարիները»: Այս հավատարիացումներից և Բելինսկու փայլուն գնահատականից հետո հասկանալի է դառնում, թե ինչպիսի կարևոր դեր է խաղացել Կովկասը Գրիբոեդովի անձնական կյանքում ու գրական ստեղծագործության մեջ: Մեծ դրամատուրգը Կովկասին, նրա բնության ու մարդկանց հետ կապված էր իր հոգու քուրթը թելերով: Եթե չքնադ վրացուհու հետ ամուսնանալը

նրա կյանքի վերջին տարիները լցնում են նախանձեղի եր-  
 ջանկությամբ, ապա Կովկասի դաժան բնությունը և նրա  
 արդիների եռացող կյանքն ու ազատասիրությունը, — ինչպես  
 նշում էր Բելինսկին, ոգևորում են նրան ստեղծելու իր հան-  
 ճարեղ երկը, անմահ հեղինակների շարքին դասվելով: Բայց  
 Կովկասի դերը դրանով չի սահմանափակվում Գրիբոեդովի  
 ստեղծագործական որոնումների մեջ: Ինչպես հայտնի է նրա  
 մեղ հասած ժառանգությունից, անավարտ գրվածքներից և  
 չգրված երկերի պլաններից, Գրիբոեդովը փութաջանությամբ  
 ուսումնասիրել է կովկասյան ժողովուրդների կյանքը, սովոր-  
 ւթյուններն ու պատմությունը և նախաձեռնել է դրամա-  
 ներ գրելու Վրաստանի կյանքից ու Հայաստանի պատմու-  
 թյունից: Գուցե և նա գրել է այդ երկերը, ինչպես պնդում  
 էին ժամանակակիցներից ոմանք, բայց այդ դրամաները  
 մեզ չեն հասել: Մենք կարող ենք դատել նրանց մասին հի-  
 շողությունների և այն պլանների ու առանձին հատվածների  
 հիման վրա, որոնք գտնվել են նրա թղթերում: Այս տեսակե-  
 տից հետաքրքրական է նրա «Վրացական գիշեր» տրագե-  
 դիան: Ինչպես ժամանակակիցներն են պատմում, այդ գրք-  
 վածքը նրանք տեսել են ավարտված վիճակում: Նրա հիմ-  
 քում ընկած է վրացական ժողովրդական մի ավանդություն:  
 Բռնակալ իշխանն իր աղջկա դայակի տղին փոխանակում է  
 ձիու հետ: Մայրը խորապես վշտացած դիմում է իշխանին,  
 հիշեցնում է իր ծառայությունները և պահանջում է սիրելի  
 որդուն հետ բերել, ուղղել այդ շարագործությունը: Իշխանը  
 խոստանում է, բայց իր խոստումը չի կատարում: Մայրը  
 զայրացած մտերմություն է հաստատում անտառում բնակ-  
 վող Վրաստանի շար ոգիների հետ՝ բռնակալից վրեժ լուծե-  
 լու համար: Այդ ուժերի օգնությամբ դայակը իշխանի աղջը-  
 կան սիրահարեցնում է ռուս սպային, որի հետ նա փախ-  
 շում է: Իշխանը ցանկանալով պատժել սպային՝ դնդակով  
 սպանում է իր աղջկան: Մայրը դրանով չի բավարարվում,  
 նա ցանկանում է վրեժ լուծել և հորից՝ սպանելով նրան,  
 բայց սխալմամբ սպանում է որդուն: «Ոչ մարդկային իշխա-

նը,— կարդում ենք Գրիբոեդովի ժամանակակիցներից մեկի հիշողությունների մեջ,— պատժվում է երկնքից՝ ծնողական զգացմունքներն արհամարհելու համար և ճաշակում է զավակի կործանման արժեքը: Իսկ շար դայակը պատժվում է նրա համար, որ մայրական ազնիվ զգացմունքները ապականում է վրեժով: Նրանք կործանվում են հուսահատության մեջ: Տրագեդիան հիմնված է վրացական ժողովրդական հեքիաթի վրա և եթե նա վերջանալ այնպես, ինչպես սկսված էր, կկազմեր ոչ միայն ռուսական, այլև ամբողջ եվրոպական գրականության զարդը: Գրիբոեդովը կարդաց միև հատվածներ և ամենասառը մարդիկ հուզվեցին մոր գանգատով, որը պահանջում էր տիրոջից՝ վերադարձնել իր որդուն: Սույն տրագեդիան խորտակվեց հեղինակի հետ միասին\*)։ Ահա այս տրագեդիայից մեզ են հասել միայն առանձին հատվածներ, որոնք հաստատում են հիշողությունների ճշտությունը: Ինչպես երևում է մեզ հասած նյութերից, «եկեքից պատուհաս»-ի հեղինակը արվեստի մերկացնող մտրակի տակ է առել ճորտատիրական բռնակալական ռեժիմը և անողոք քննադատության է ենթարկել վրեժի ֆեոդալական սկզբունքը: Ընդհանրապես Գրիբոեդովի այդ շրջանի ստեղծագործություններն աչքի են ընկնում իրենց հակաճորտատիրական ցայտուն տրամադրություններով: Այդ գաղափարներով է համակված և նրա մյուս «1812 թիվը» անավարտ տրագեդիան: Գրիբոեդովի բարեկամությունը հայտնի ղեկաբրիստների՝ Ռիլենի, Կյուխելբեկերի և մյուսների հետ անհետևանք չի անցել: Չունենալով կազմակերպչական կապեր այդ շարժման հետ՝ Գրիբոեդովը հանդիսանում էր նրա գաղափարական արտահայտիչը: Այդ են հաստատում նրա ստեղծագործությունները: Գաղափարական այդ մոտիկությամբ, սակայն, չի խանգարել Գրիբոեդովին քննադատաբար վերաբերվելու ղեկաբրիստների շարժման պատմական

\*) «А. С. Грибоедов в воспоминаниях современников», под редакцией Н. Пиксанова, Москва 1929 г.

սահմանափակութեան, նրանց տակտիկայի նկատմամբ: Այդ քննադատական մոտեցումը նա ցանկացել է արտահայտել «Ռոդամիստ և Զենոբիա» պատմական տրագեդիայում, որի նյութը վերցված է Հայաստանի և Վրաստանի հեռավոր պատմությունից (առաջին դարի կեսերը մեր թվագրությունից առաջ): Ռոդամիստը բռնակալ թագավոր է. նրա խղճի վրա է ծանրացած իր կնոջ՝ Զենոբիայի հոր մահը: Կինն լուր ուժեղ բնավորության տեր, նա «մեծ գործի ծարավ է զգում», ինչպես այդ մասին խոստովանվում է իր դրոշակակրին: Բռնակալ թագավորի դեմ ազնվատոհմիկները խռովություն են կազմակերպում և աշխատում են այդ խռովության մեջ ներգրավել նաև Ռոդամիստի կնոջը՝ նրա մեջ վառելով վրեժի զգացմունքը: Խռովարարների շարքում կան Արմասիլի նման ազնիվ և հաստատուն բնավորության տեր մարդիկ: Արմասիլն իմաստալից խոսքեր է ասում: «Ուժը թվի մեջ չէ, երբ գործը արդար է, այլ գործի մասնակիցների փորձառության, վստահելիության և անկասկածելի քաջության մեջ»: Բայց դա չի փրկում, խռովությունը պարտություն է կրում, որովհետև խռովարարները հեռու են ժողովրդից: «Ընդհանրապես պետք է նկատել, ասված է այդ տրագեդիայի պլանի մեջ,— որ ժողովուրդը մասնակցություն չունի նրանց գործում, նա կարծես գոյություն չունի: Երրորդ գործողության մեջ զայրույթը դառնում է ժողովրդական, բայց բոլորովին ոչ այն պատճառներից, որով առաջնորդվում էին ազնվատոհմիկները»: Այնուհետև հեղինակը նշում է, որ այդ խռովարարներին համակում է «մանր կրքեր», փառասիրական զգացմունքներ և նրանք սկսում են «վիճել ապագա իշխանության մասին»: Ինչպես իրավացիորեն նշվում է քննադատության կողմից, տրագեդիայի այս պլանը կազմված է ամենայն հավանականությամբ 1825 թվի դեկաբրիստական ապստամբության պարտությունից հետո: Այստեղ հեղինակը ցանկացել է դրսևորել իր տրամադրությունները, որոնք առաջ էին եկել դեկաբրիստական շարժման պարտությունից հետո, և ցույց տալ նրա արատները: Բռնության



գեմ ուղղված խռովութեան տապալումը, խռովութիւն, որի մեջ մասնակցութիւն չունի ժողովուրդը, ուղղակի վերաբերում է գեկաբրիստների ապստամբութեանը: Այդպիսի խռովութիւնը դատապարտված է անհաջողութեան: Գրիբոեդովը քննադատական վերաբերմունք ունի գեկաբրիստների տակտիկայի նկատմամբ, նա ցույց է տալիս այդ շարժման հեռանկարից զուրկ լինելը: Եվ իրեն հուզող այդ հարցերն էլ նա լուծում է Հայաստանի պատմութիւնից վերցված նյութի վրա: Երևույթը ինքը նշանակալից է: Դա ցույց է տալիս, թե ինչպես սերտ էր նրա կապերը Կովկասի հետ և համակրանքի ինչպիսի վերաբերմունք ունեւր Գրիբոեդովը կովկասյան ժողովուրդների նկատմամբ:

Պակաս ուշագրավ չէ այն փաստը, որ Գրիբոեդովը բացի Թբիլիսիում ապրելուց, միքանի անգամ այցելել է Երևան և այնտեղ 1827 թվին դիտել է իր հայտնի կոմեդիայի՝ առաջին բեմադրութիւնը:

Գրիբոեդովի գործունեութիւնը, անշուշտ, չի սահմանափակվել գեղարվեստական գրականութեան սփերայով, Կովկասին նվիրված դրամաներով ու առանձին բանաստեղծութիւններով («Ալազանին» նվիրված բանաստեղծութիւններ), կամ թե ճանապարհորդական նոթերով ու օրագրերով, որոնց մեջ նա գրի է առել իր տպավորութիւնները Կովկասից՝ Վրաստանից ու Հայաստանից և, մասնավորապես, Երևանից: Զպետք է մոռանալ, որ Գրիբոեդովը գրող լինելով հանդերձ, միաժամանակ և աչքի ընկնող պետական գործիչ էր: Նա խորապես մտահոգված էր Անդրկովկասի տնտեսական ու կուլտուրական զարգացման հեռանկարներով: Նրա այդ վերաբերմունքը ցայտուն արտահայտութիւն է գտել իր կազմած՝ «Ռուս-անդրկովկասյան ընկերութեան հիմնադրման նախագծի» մեջ: Այդ նախագիծը շոշափում է Անդրկովկասի առևտրական և արդյունաբերական զարգացման կարևորագույն հարցերը և միաժամանակ նշում է՝ տեղի ազգաբնակչութեան կուլտուրական մակարդակը բարձրացնելու ձեռնարկումներ՝ դպրոցների բացում, գյուղատնտեսութեան

և արհեստագործության մեջ նոր տեխնիկական ձևեր ներմուծելը և այլն: Գրիբոեդովի այդ նախագիծը հաջողությամբ շունեցավ: Բայց այն մնում է որպես պետական խոշոր գործչի համարձակ մտահղացման ապացույց և դեպի Անդրկովկասն ունեցած նրա հետաքրքրության մի կարևոր փաստաթուղթ: Գրիբոեդովն, ինչպես և Պուշկինը, ձգտում էր ամբացնել և ընդարձակել երկու երկրների կապերը, փոխադարձ բարեկամություն ստեղծել նրանց միջև:

Բայց այդ վերաբերմունքի մեջ՝ Պուշկինն ու Գրիբոեդովը բացառություն չեն կազմում: Կովկասի նկատմամբ հիացմունքով են խոսել շատ ուրազ գրողներ: Նրանց մեջ արժանի է հիշատակել պոետ պարտիզան և մեծ հայրենասեր Դենիս Դավիդովի և Սերգեյ Գլինկայի անունները: Եթե առաջինը իր փայլուն ռազմական հուշերի, ինչպես և առանձին բանաստեղծությունների մեջ դրսևորել է իր համակրանքը Կովկասի գեղեցիկ բնության և նրա խիզախ զավակների նկատմամբ, հիշենք, նրա «Полу—Солдат» ոտանավորը, ապա երկրորդ հեղինակը հայտնի է Հայաստանի հեռավոր անցյալին, նրա զավակների հերոսական սխրագործություններին նվիրված բանաստեղծություններով («Гайк» և այլն):

## VI.

Գրական տեսակետից ավելի հետաքրքիր են Գրիբոեդովի անձնական բարեկամ Բեստուժև Մաուլինսկու և Ալեքսանդր Պոլեժակի Կովկասին նվիրված ստեղծագործությունները: Այս երկու նշանավոր ուրազ գրողները մոտավորապես նույն դառը ճակատագիրն են ունեցել և դարձել ցարական զինվորականության զոհ:

Բեստուժևը դեկաբրիստական լապստամբությանը մասնակցելու համար դատապարտված էր աքսորի Յակուտիա: Բայց միջնորդության շնորհիվ նա փոխադրվում է Կովկաս, գործող բանակ: Այստեղ նա ծառայում է որպես շարքային զինվոր և այն էլ պայմանով՝ եթե նա նույնիսկ գերազան-

ցություն ցուցադրի կովի ժամանակ, շներկայացմի բարձր  
աստիճանի: Այսպես էր ունեւորիոն շարժման դահիճ նիկո-  
լայի կամքը:

1829 թ. սկզբներին Բեստուժեն արդեն Կովկասումն էր  
Նրա համար ստեղծվում է կյանքի ծանր պայմաններ: Շար-  
քային զինվորի նրա կյանքը լի է դառնությամբ ու տան-  
ջանքներով: Ինչպես երևում է նրա այդ շրջանի նամակնե-  
րից, Բեստուժեն անհուսալի վիճակից դուրս գալու և տան-  
ջանքներից ազատվելու համար գերադասում է մահը և շու-  
տով գտնում է այն: Լեռնականների հետ ունեցած մի թեմ  
ընդհարման ժամանակ, որը տեղի է ունենում 1837 թվի  
հունիսի 7-ին, Բեստուժեն անհետանում է: Նա սպանվում է  
այնպես, որ նրա դիակը չի գտնվում: Այս հանգամանքը  
սուրի է տալիս զանազան ենթադրությունների ու լեգենդնե-  
րի, համաձայն որի նա անցել է լեռնականների կողմը:

Բեստուժեի միակ մխիթարությունը Կովկասում գրակա-  
նությամբ զբաղվելն էր: Կովկասի բնությունն ու մարդիկ  
նրան ինչպես և Պոլեժակին տրամադրեցին վերսկսել իր  
ընդհատված գրական գործունեությունը և, պետք է ասել,  
Բեստուժեի ստեղծագործությունների մեջ Կովկասյան շրջա-  
նը և Կովկասյան մոտիվները կենտրոնական տեղ են գրա-  
վում: Բեստուժեի տաղանդը նոր փայլ ստացավ այստեղ և  
նպաստեց նրա գրական համբավի արագ աճմանը: Դրա  
համար նա ամենից առաջ պարտական էր Կովկասի կյան-  
քից վերցրած իր գրվածքներին, որոնք լույս էին տեսնում  
Մառլինսկի ծածկանվան տակ և ստեղծում նրա համար  
շոնդալից համբավ:

Նրա գրվածքները 30-ական թվականներին հսկայական  
ազդեցություն էին գործում ընթերցող հասարակության վրա:  
Ժամանակակիցները Մառլինսկուն համարում էին «Պուշկին  
արձակում»: Ընդհանուր ոգևորությամբ էին շրջապատված  
Մառլինսկու անունը և ստեղծագործությունները: Այդ ոգե-  
վորությունը հասկանալի կդառնա, եթե հիշենք, որ ռուս  
գրականության պատմության մեջ 20—30-ական թվականնե-

րը—ռոմանտիզմի ծաղկման շրջանն է հանդիսանում, իսկ Մառլինսկին այդ ուղղության ոչ միայն ականավոր ներկայացուցիչն էր իր ստեղծագործություններով, այլև նրա սկզբնավորողն ու տեսաբանը։ Նա իր տեսական ելույթներով ու ստեղծագործությամբ զարկ տվեց ռուսական ռոմանտիզմին, հաստատեց ու ամրապնդեց նրա դիրքերը։ Մառլինսկու գրական հաջողությունների գաղտնիքը թագնված էր Կովկասի փառահեղ պատկերման, անսովոր ու հերոսական բնավորությունների կերտման, գրվածքների սուժեի հետաքրքիր ու էֆեկտիվ կառուցվածքի, լեզվի արտաքին փարթամության՝ ու փայլի մեջ։ Այս բոլորը հետաքրքիր նորություններ էին ռուս գրականության համար։ Այդ գծերն էլ ապահովեցին նրա գրական հաջողությունները 30-ական թվականներին։ Դա ռոմանտիզմի հաղթանակն էր, նրա հաջողությունները։

Մառլինսկու գրական փառքի գագաթը հանդիսացավ 1831—33 թվերը, երբ Տրեյ Կովկասյան պատմվածքներն ու վիպակները Դրանից հետո նրա աստղը թեքվում է։ Գոգոլի ռեալիստական ստեղծագործությունների հանդես դալը և Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոս»-ի երևալը գրական հորիզոնում կանխորոշում են Մառլինսկու փառքի անկումը։ Այդ անկումն անձնական լինելով հանդերձ՝ արտացոլում էր գրական ուղղությունների պայքարի ներքին իրինաչափությունները։ Մառլինսկու գրական փառքի անկման մեջ պետք է տեսնել ռոմանտիզմի անկումը և ռեալիզմի հաղթանակը։ Պատահական չէ, որ Կովկասի «չափազանցրած և փառահեղ նկարագրությունները» հետագայում արդեն 50-ական թվականներին կորցնում են իրենց հմայքը, դառնում քննադատության առարկա։ Լև Տոլստոյը, ինչպես քիչ հետո կտեսնենք, համառ կերպով վիճում է Մառլինսկու հետ և պահպանում է անում իր գրվածքներում Կովկասի ռոմանտիկական, մառլինսկական նկարագրությունները, հակադրելով դրանց իրական կյանքի պատկերներն ու տիպերը։ Իսկ Տուրգենևը մի պատմվածքի մեջ «Стык... стык...» խոսում



է Մառլինսկու ունեցած փառքի ու անկման մասին: Մառլինսկին այժմ հնացել է, ոչ ոք նրան չի կարդում, և նրա անունը ծաղրում են: Բայց 30-ական թվականներին նա աղմկում էր ինչպես ոչ ոք, և Պուշկինը այն ժամանակվա երիտասարդության հասկացողությամբ, չէր կարող նրա հետ հավասար ընթանալ: Նա վայելում էր ոչ միայն առաջին ռուս գրողի փառքը, նա նույնիսկ, որն ավելի դժվար և քիչ է պատահում, որոշ շափով իր կնիքն էր դրել իր ժամանակի սերնդի վրա: Հերոսներ ալա Մառլինսկի հանդիպում էին ամեն տեղ, հատկապես պրովինցիաներում և բանակայինների, հրանոթաձիգների մեջ: Նրանք խոսում էին, նամակներ էին գրում Մառլինսկու լեզվով: Հասարակության մեջ պահում էին մռայլ, զուսպ—«փոթորկվող հոգով և բոցավառ արյունով», կանացի սրտերը խժռում են: Նրանց կոչում էին «ճակատագրականներ»: Այդ տիպը, ինչպես հայտնի է, պահպանվեց երկար ժամանակ, մինչև Պեշոբինի հանդես գալը»:

Մառլինսկու փառքն ու ազդեցությունը ժամանակակիցների վրա կասկածից դուրս է, բայց, չնայած այդ բոլորին, նա չդիմացավ պատմության փորձությանը և իր դիրքերը զիջեց նոր ուղղությանը և մեծ տաղանդներին: Այդ անկումը Մառլինսկու տաղանդի միակողմանիության արտահայտությունը լինելու հետ միաժամանակ հանդիսանում է ռոմանտիզմի թուլության ու միակողմանիության ապացույցը: Բելինսկին առաջինն էր, որ խիստ քննադատության ենթարկեց Մառլինսկու ռոմանտիզմը և բացահայտեց նրա տաղանդի թերությունները: Բայց նա չթխտեց այդ գրողի պատմական խոշոր ծառայությունները: Նա եղել է ըստ մեծ քրննադատի «մեր առաջին պատմողը, ռուսական վիպակի ստեղծողը, ավելի լավ է ասել, սկզբնավորողը»:

Մառլինսկու ստեղծագործություններից մեծ մասսայականություն էին վայելում հատկապես «Ամմալաթ-բեկ» և «Մուլա-Նուր» վիպակները: Երկուսի թեման էլ վերցված է կովկասյան իրականության մեջ տեղի ունեցած դեպքերից,

քայց հեղինակը պատմական իրողությունները վերցնելով, այլ մոտեցում է հանդես բերել: Կովկասի բնության գեղեցկությունը և մարդկանց հերոսական կյանքն իր բնական անարատությամբ ու պարզությամբ ներդաշնակում էր ուժմանտիկորեն տրամադրված Մառլինսկու ապրումներին: Նմանա ստեղծում է հերոսական կերպարներ, կովկասյան դեմքեր՝ բարդ հոգեբանությամբ, հպարտ սրտով ու ազնիվ ձգտումներով, որոնք հակադրվում էին իրենց շրջապատին: Նրա Ամմալաթ-բեկն ու Մուլա-Նուրը խռովահույզ հոգու և բուռն կրքերի հետ միասին, միաժամանակ քաջ ռազմիկներ են ու հերոսական բնավորություններ: Մառլինսկու համակրանքն ամբողջովին այդ հերոսների կողմն է: Նրա Ամմալաթ-բեկը տրագիկ դեմք է. հերոսի տառանդաները, հոգեկան տառնապալից ապրումները, որոնք առաջ են դալիս երախտապարտության, սիրո և վրեժի զգացմունքների բաղխումից, կործանման են հասցնում Ամմալաթին:

Ամմալաթ-բեկը ռուսական դաստիարակություն ստացած երիտասարդ է, մոտ 23 տարեկան և նշանակված է Դադաստանի իշխանավոր՝ ռուսների կողմից: Նա բուռն կերպով սիրահարված է Սուլթան Ամեթ խան Ավարսկու գեղեցիկ աղջկա՝ Սալթանետային: Խռովարար և անհանգիստ խանը օգտագործում է երիտասարդի սիրային զգացմունքները և խորամանկությամբ ու խաբեությամբ Ամմալաթի մեջ կասկածանքներ ու թշնամական տրամադրություն է հարուցում դեպի նրա բարեկամ ու հովանավոր՝ զնդապետ Վերխովսկին: Ամմալաթն ընկնելով խանի վարպետությամբ նախապարաստված թակարդը՝ դավաճանական գնդակն ուղղում է իր հովանավորի կրծքին: Այդ դեպքը հետագայում նրան շատ տառադանքներ է պատճառում, քայց անօգուտ: Արյունոտ ակտը կատարվելուց հետո, նա ներկայանում է խանին Սալթանետայի ձեռքը խնդրելու: Բայց խանը մահամերձ հիվանդ է, նա տեսնելով զնդապետի արյունոտված գլուխը, անիծում է Ամմալաթին, ասելով՝ ես ցանկանում էի հաշտվել

նրա հետ, ուռաների հետ: Ամմալաթի վերադարձը արագացնում է խանի մահը և դրա համար նա արժանանում է խանի կնոջ ղալուլթին: Կինը նրան մեղադրում է սրբապղծության, ուխտադրժության, դավաճանության մեջ բարեկամին սպանելու կապակցությամբ և հրաժարվում է աղջկան՝ Ամմալաթին կնության տալուց: Սալթանհտան իր հերթին մերժում է աղային, ասելով՝ «Ես քեզ ցավում եմ, Ամմալաթ, բայց քոնը լինել չեմ կարող»:

Մերժված բոլորից ու հիասթափված՝ նա հեռանում է միայնակ ու հպարտ: Բոլորը դատապարտում են նրա դավաճանական քայլը: «Նրա անունը ոչ ոք առանց հանդիմանության չի արտասանում», կարդում ենք վիպակում: Վերջում նա ընկնում է ուռաների հրանոթային կրակի տակ և մահացու վերք է ստանում զնդապետ Վերխովսկու փոքր եղբոր հրանոթի արկից և գերի մնում: Այստեղ էլ մեռնում է: Մահից հետո պարզում են նրա ով լինելը: Նրա դաշույնի վրա փորագրված է լինում «Будь медлен на обиду—к мщению скор» («Դանդաղիր վիրավորանքի համար, իսկ վրեժի համար շտապիր»): Այս խոսքերը միաժամանակ վիպակի էպիգրաֆն են հանդիսանում և պատկերացում են տալիս նրա իմաստի մասին: Ամմալաթ-բեկը քաջ, խիզախ ու համարձակ անձնավորություն է: Չնայած իր երիտասարդ լինելուն, նա ընդամենը 23 տարեկան է, հանդես է բերում անվախություն, խիզախություն: Ավարաջի խանի մոտ ապրած ժամանակ մենամարտի մեջ սպանում է վագրին, իսկ սրսի ժամանակ զնդապետին ազատում է վաչրի հովազի հետապնդումից՝ սպանելով նրան: Ամմալաթը զնդապետի մոտ սովորում է ընթերցանություն ու ծանոթանում է գիտության հետ. նա սկսում է մտածել կյանքի հարցերի մասին և պատասխան չի գտնում: Հեղինակը Ամմալաթին դուրս է բերել կյանքից հիասթափված, հպարտ և միայնակության մեջ տառապող մի անձնավորություն: Հիասթափությունը կյանքից ու պատերազմից հատուկ է և վիպակի մյուս հերոսներին: Սալթանհտան, որը կրքոտ սիրում էր

Ամմալաթին, դատապարտում է արյունով ձեռք բերած փառք և խորհուրդ է տալիս «Մոռացիր պատերազմը և փառքը սպանությամբ ձեռք բերած: Ես ասում եմ արյունն այն բանից հետո, երբ քեզ տեսա նրանով ծածկված: Չիմ կարող առանց ցնցման հիշել, որ արյան յուրաքանչյուր կաթիլը քույրերի և մայրերի կամ սիրելի հարսնացուի անընդհատ արտասուքներ արժեն»: Իսկ գնդապետ Վերխովսկին ավելի որոշակի է արտահայտում այդ հիասթափությունը: Վերխովսկին քաջ ու խելոք ռազմիկ է, և մեծահոգի ու բարի անձնավորություն: Նա մտածում է ժողովուրդների բարեկեցության մասին, բայց կյանքն ու ձգձգվող պատերազմը հոգնեցնում են նույնիսկ այդպիսի մի փորձված ու կայուն ղինվորականի և նա Ամմալաթի հետ զրուցելիս դանդաղվում և որպես մտերիմի ու բարեկամի բաց է անում իր սրտի գաղտնիքները:

«Այո, Ամմալաթ,— ասում է նա,— ինձ ձանձրացրել է ձեր համարյա միշտ բարկացկոտ դատարկ ծովը, ձեր երկիրը... Ինձ ձանձրացրել է ինքը, պատերազմը անտեսանելի թշնամու հետ, ինքը ծառայությունը ոչ բարյացակամ ընկերների հետ: Բավական չէ, որ խանդարել են ինձ գործում, փշացրել են այն, ինչ հրամայել էի կատարել, այլև վարկաբեկել են այն, ինչ՝ որ մտադրվել էի անել և զրպարտել են կատարածը: Ծառայել եմ հավատով ու խղճմտանքով թագավորին, անշահախնդրորեն հայրենիքին ու այս երկրին: Հրաժարվեցի ես կամավոր աքսորականս՝ կյանքի բոլոր հարմարություններից, հասարակության բոլոր ուրախություններից, դատապարտեցի իմ խելքն անշարժության, առանց դրբերի, սիրտս թողեցի միայնակության մեջ առանց սիրածի և ինչ է եղել դրա պարգևը»:

Այս մտայնությունը ուղղված էր ցարական կառավարության բռնի քաղաքականության դեմ: Հետագայում կերմոնտովը նույնպես հանգեց այդպիսի եզրակացության «Վալերիկ» հայտնի բանաստեղծության մեջ:

Մաուլինսկին համակրում էր լեռնականների ազատու-



թյան ու անկախության ձգտումը և ցայտուն դույններով է՝  
 նկարագրել նրանց ռազմասիրությունը, հերոսականությունը,  
 նրանց պայքարը: «Ավարացիները,—պատմում է Մառլինըս-  
 կին,—ազատ ժողովուրդ են, նրանք չեն իմանում և չեն հան-  
 դուրժում որևէ իշխանություն իրենց վրա: Զբավորները հա-  
 մարձակ են ու չափազանց քաջ. դիպուկ հրթիռներ են,  
 փառավոր դորժում են հետիոտն, ձիով գնում են միայն ար-  
 չավանքների: Նրանց ձիերը փոքր են, բայց անհավատալի  
 ուժեղ: Նրանց լեզուն մի շարք բարբառների է բաժանվում,  
 բայց հիմնականում լեզգիական է... Ավարացու խոսքի ճշ-  
 տությունը լեռներում դառել է առած: Տանը խաղաղ են,  
 հյուրասեր, կենսուրախ, չեն թաքցնում ոչ կանանց, ոչ էլ  
 աղջիկներին: Հյուրի համար պատրաստ են մեռնել, վրեժ  
 առնել մինչև սերնդի վերջը: Վրեժխնդրությունը նրանց հա-  
 մար սրբություն է, թալանը փառք»: Մառլինսկին անձամբ  
 մասնակցում էր լեռնականների դեմ մղվող պատերազմին,  
 բայց ներքուստ չէր համակրում այդ պատերազմը: Դա երե-  
 վում է ոչ միայն նրա նամակագրությունից և «Ամմալաթ  
 բեկ» վիպակից, այլև նրա մյուս ստեղծագործություններից:  
 Այդ տեսակետից ուշադրավ է նրա «Մուլա-Նուր» վիպակը,  
 որի գլխավոր հերոսը հանդիսանում է ազնիվ ավազակ և  
 խեղճերի ու չքավորների պաշտպան: Պատահական չէ, որ  
 Բելինսկին Մուլա-Նուրին անվանել է «թաթարական Կարլ  
 Մոոր»: Այս բնորոշումով մեծ քննադատն ընդգծել է ոչ մի-  
 այն նրանց միավորող ընդհանուր գծերը, այլև այդ հերոս-  
 ների ռոմանտիկական բնույթը: Մուլա-Նուրը շատ գծերով  
 հիշեցնում է ժողովրդական հերոս Քյուռ-օղլուն: Նա քաջ է  
 ու խիզախ, պատժում է ժլատներին ու ստախոսներին: Օգ-  
 նում է չքավորներին ու աղքատներին: Մուլա-Նուրը մարդա-  
 սեր է. նա մեծ գումարներ չի խլում վաճառականներից, այն  
 էլ կատարում է խեղճերին և իր ընկերներին օգնելու համար:  
 Բայց Մուլա-Նուրի բնավորության հիմնական գիծը հերո-  
 սականն է: Նրանից սարսափում են հարուստներն ու վախ-  
 փոտները, իսկ չքավորները նրա մեջ տեսնում են իրենց բա-

բեկամին: Նա հաճախ ծպտված է շրջում: Դառնում է ջա-  
ղացպան, լսում է ժողովրդի մեջ շրջող կարծիքներն իր մա-  
նին և օգնության է հասնում թուլյեբին ու սիրող զույգերին:  
Մուլլա-Նուրը բարեկամություն է հաստատում քաջ և վեհան-  
ձրն Իսկանդար բեկի հետ: «Շնորհակալություն քեզ,— ա-  
սում է նա,— ես կհաշտվեմ թեկուզ մի մարդու հետ»,—ա-  
սում է նա Իսկանդարին: Որքան Իսկանդարը համարձակ ու  
անվեհեր է, նույնքան նրա ընկեր Յուսուֆը վախկոտ է ու  
շաղկարատ: Մուլլա-Նուրի երիտասարդ կինը, որը պատանու  
շորեր ունի հագած, ղինաթափ է անում Յուսուֆին և բերում  
է ավազակների բնակավայրը: Քաջ ավազակը նրան ձեռ է  
առնում և վախեցնում, ուշադրություն չդարձնելով նրա  
շողոքորթություններին:

«Դա նրան դաս կլինի, որ վախկոտությունը փրկություն  
չի»—ասում է Մուլլա-Նուրը կնոջը: «Վախկոտը մեռնում է  
հարյուր անգամ, իսկ քաջը—մի անգամ, և այն էլ ոչ շուտ»:  
«Ով աչնպես վախենում է մահից, նա չպետք է ապրի, դու  
կմեռնես»—վախեցնում է Յուսուֆին: Մուլլա-Նուրի լեկսիկոնը  
հարուստ է ժողովրդական արտահայտություններով ու ի-  
մաստություններով: Դրանց միջոցով հեղինակը բնութագր-  
բում է հերոսին: Յուսուֆը մահվան հեռանկարից սարսա-  
փած՝ Մուլլա-Նուրին փող է առաջարկում: Վերջինս զայրա-  
ցած պատասխանում է. «Դու դիտե՛ս, թե ում ես առաջար-  
կում, նապաստակի մորթի... Իմ կամքը չի կարելի սանձել  
ոչ արծաթե և ոչ էլ ոսկե սանձով»: Մուլլա-Նուրը ասպետ է,  
ազնվության ու քաջության մարմնացում: Նա ատում և ար-  
համարհում է ստորությունն ու անազնվությունը, երկշտու-  
թյունը և մորթեպաշտությունը: Դրա հակառակ բարձր է  
գնահատում քաջությունն ու անվեհերությունը, վեհանձնու-  
թյունն ու անձնուրացությունը: Նրա բարեկամությունն Իս-  
կանդարի հետ այդ հողի վրա է տեղի ունենում: Իսկանդարը  
չի խուսափում Մուլլա-Նուրի հետ մենամարտից: Ընդհակա-  
ռակը, համարձակությամբ ընդունում է նրա մարտահրավե-  
րը և վերջը մեծահոգություն է հանդես բերում Մուլլա-Նուրի

նկատմամբ, որը ձիով փլվածքից վայր է ընկնում. Իսկանդարը նրան օգնում է դուրս գալ անդունդից: Այս տեղից սկսած նրանք բարեկամանում են և Մուլա-Նուրը փնդում է նրան՝ իր սիրած աղջկա հետ ամուսնանալու: Այդ նպատակով նա պատժում է ժլատ ու ստախոս մուլլային, որը ոչ միայն զրպարտություններ է տարածում ազնիվ ավագակի հետքերին, այլև խանգարում է Իսկանդարի ամուսնությանը:

Այս քաջը բարի նախանձ է դգում Մուլա-Նուրի աղատ կյանքի հանդեպ և ավագակությունը բարձր է դասում վաճառականությունից, և դատապարտում է պատերազմը: Նա սսում է. «Այն երկրում, որտեղ պատերազմը ոչ այլ ինչ է, եթե ոչ թալան, իսկ առևտուրը դողություն, ավագակն ընդհանուրի կարծիքով շատ ավելի հարգելի է վաճառականից, որովհետև առաջինի ավարը գնված է խիզախությամբ, աշխատանքներով ու վտանգներով, իսկ երկրորդի ավարը՝ սոսկ ճարակությամբ՝ խաբեության ու փոխանակության մեջ»: Իսկանդարն ազնիվ ու վեհանձն երիտասարդ է: Նրա բարեկամությունը Մուլա-Նուրի հետ չի խանգարում, որ նա սիրի ռուսներին: «Իսկանդար-բեկը, — ասված է վիպակում, — այնպես կրքոտ կերպով կապվեց ռուսներին, ինչպես առաջ սրտի խորքից չէր սիրում նրանց»: Դեպի ռուսներն ունեցած այդ վերաբերմունքը արտացոլում է այն դրական բեկումը, որ առաջ էր գալիս լեռնականների մեջ դեպի բարեկամական ռուս ժողովուրդը: Այդ երևույթները ճիշտ է դիտված Մաուլինսկու կողմից:

Կովկասյան կյանքից վերցված նրա գրվածքներն, անշուշտ, չեն սահմանափակվում «Ամալաթ-Բեկ» ու «Մուլա-Նուր» վիպակներով: Նա գրել է նաև այլ վիպակներ ու պատմվածքներ, կենցաղային ակնարկներ, բայց բնորոշ գործերը, որոնք հեղինակի համար փառք ստեղծեցին, հիշյալ գրվածքներն են:

Մաուլինսկին թեև ռոմանտիկ էր, բայց նրա գրվածքների, վեպերի ու մանավանդ կենցաղային ակնարկների մեջ զգալի տեղ է գրավում լեռնական ժողովուրդների կենցաղի

նկարագրությունը, որ ռեալիստական բնույթ ունի: Այդ բո-  
 լորին նպաստել է այն հանգամանքը, որ Մառլինսկին գի-  
 տեր լեռնականների լեզուն և լավ էր ուսումնասիրել նրանց  
 ավանդությունները, վարքն ու բարքը: Դա երևում է նրա  
 գրվածքներից, որոնց մեջ հեղինակը օգտագործել է կով-  
 կասյան ժողովուրդների երգերը (հիշենք «Ամմալաթ-Բե-  
 կում» օգտագործված երգերը), ասացվածքներն ու ավան-  
 դությունները և պատկերել է նրանց սովորությունները: Ի-  
 րենց բնույթով ռոմանտիկական ստեղծագործությունների  
 մեջ նա ռեալիստական տարր է մտցրել և բազմազան  
 դարձրել: Վիպակներում և պատմվածքներում եղած ռեա-  
 լիստական նկարագրություններով Մառլինսկին իր ընթեր-  
 ցողներին մոտավոր պատկերացում է տվել կովկասյան ժո-  
 ղովուրդների կյանքի, սովորությունների ու բարքերի մասին  
 և դրանով ուժեղացրել է հետաքրքրությունը դեպի Կովկասը:  
 Բելինսկին նրա փառքի ծաղկման շրջանում քննադատական  
 հեռատեսությամբ կարողացավ մատնանշել Մառլինսկու  
 ստեղծագործությունների աքիլեսյան դարշապարը—փայլի և  
 էֆեկտի նրա կիրքը, ռիտորիկան և երևույթների նկատմամբ  
 արտաքին մոտեցում ունենալը: «Դա պոեզիա է, բայց ոչ  
 մտքի, այլ հիանալի խոսքի, ոչ զգացմունքի, այլ ջերմ կրքի.  
 դա տաղանդ է, բայց մաքուր արտաքին տաղանդ, որը ոչ թե  
 մտքից է կերտում պատկերներ, այլ գեղեցիկ առարկաներ  
 պատրաստելու նյութից»: Այս տողերի մեջ տրված է Մառ-  
 լինսկու տաղանդի ընդհանուր բնութագիրը, մատնանշված  
 են նրա ստեղծագործությունների հիմնական թերություննե-  
 րը: Բայց դրանով բնավ չի նսեմացվում պատմական այն  
 ծառայությունը, որ մատուցել է աքսորված հեղինակը ռուս  
 գրականությանը և այն դրական դերը, որ նա խաղացել է  
 կովկասյան թեմատիկայի մշակման բնագավառում: Նրա  
 արտաքին փայլով ողողված ռոմանտիզմը, կովկասյան  
 կյանքի անսովոր և էֆեկտավոր պատկերումը հսկայական  
 հետաքրքրություն և համակրանք ստեղծեց ռուս ընթերցող-  
 ների մեջ դեպի այդ երկիրը, նրա ազատ ու համարձակ ժո-



շովուրդը: Դա Մառլինսկու կարևոր ծառայություններից է: Նա իր ստեղծագործություններով զարկ տվավ կովկասյան թեմատիկայի հետագա մշակմանը ուսա գրականության մեջ և դա նրա մյուս կարևոր ծառայությունն է:

Բայց Մառլինսկին այդ ասպարիզում միակը չէ: Այդ գործում զգալի դեր է խաղացել նաև Ալեքսանդր Պոլեժակը, որի կյանքի պատմությունը շատ ընդհանուր դժեք ունի Մառլինսկու հետ: Դառը և ողբերգական է եղել Պոլեժակի ճակատագիրը:

Մոսկվայի համալսարանի ուսանող Ալեքսանդր Պոլեժակն իր ստեղծական «Սաշկա» պոեմայի համար, որը տարածվում էր ձեռագիր վիճակում, ձերբակալվեց և զինվորական ծառայության դատապարտվեց: Մառլինսկու նման ներան նույնպես շարքային զինվոր դարձրին՝ Կովկասի գործող բանակում: Երեք մարտական տարիներ նա անցկացրեց կովկասյան լեռներում, Դաղստանում և այլ վայրերում: Ազատության զաղափարներով համակված երիտասարդ պոետի համար շատ ծանր էր զորանոցային կյանքը: Հասարակ զինվորի կրած տառապանքների, տանջանքների ու վիրավորանքների ազդեցության տակ նա իրեն հանձնում է ալկոհոլին: Իսկ թոքախտն իր հերթին քայքայիչ դեր է խաղում նրա օրգանիզմում: Պոլեժակը չի կարողանում համակերպվել շարքային զինվորի իր դրության հետ, անկարող է լինում կրել այդ ծանրությունը և 1837 թվին ինքնակամ կերպով հեռանում է գնդից. դրա համար նրան դաժան պատժի են ենթարկում՝ մտրակահարում, որից, մի քանի ամիս հետո, հիվանդ Պոլեժակը մեռնում է: Այսպիսով, նա դառնում է ցարական բիրտ կարգերի ղոհը: Պոլեժակի կյանքի ողբերգական ընթացքը պայմանավորել է նրա պոեզիայի բնույթը և խոր արձագանք գտել նրանում: Կյանքի ամենաժանր պայմաններում պոեզիան եղել է նրա միակ մխիթարությունը: Այստեղ է նա դրսևորել իր հոգու խորքում կուտակված դառն ապրումները, զայրույթն ու ատելությունը: «Կործանվող լողորդի երգը», «Կենդանի մահա-

ցածր», «Քաղում», «Հուսահատություն» վերնագրերը բնորոշում են Պոլեժակի պոեզիայի բնութանուր էությունը և արտացոլում նրա միայնակության ողբերգությունը և տանջալից ապրումները:

Ծաղիկ հասակում ապրեց նա անկյանը,  
Արար-աշխարհում մեռավ տրտմագին,—  
Ահա, ինչպես են հիշում պոետին...

Պոլեժակի պոեզիայի բնութանուր բնկճվածության, հուսահատության, հոգնածության իշխող մոտիվներում որոշակի դրսևորված են ռազնոչինեց պոետի դեմոկրատական, ազատախոհական տրամադրությունները, լսվում են նրա բողոքի ու զայրույթի հնչյուններն՝ ընդդեմ տիրող կարգերի և ստրկական պայմանների: Պոլեժակը խորապես զգում է կյանքի հակասությունները և դառնությամբ նկատում, որ մարդիկ «կամ ստրուկներ են կամ դահիճներ»: Պոլեժակը հակադրվում է շրջապատին, ինչպես և ազնվական գրականության սկզբունքներին: Արդեն «Սաշկա» պոեմում ազնվական գրականության «քաղցր երգերին» ու ռոմանտիկական պատկերներին նա հակադրում է իրական կյանք իր ուսու պատկերներով: Եվ այդ հակադրությունը որոշակի արտահայտություն է գտել նաև նրա կովկասյան պոեմներում: Կովկասի ռոմանտիկական պատկերումը խորթ չէ Պոլեժակին: Նրա մի շարք բանաստեղծություններ («Չերքեզական ռոմանս», «Փարթամ հեղեղվում է Քերեքը պայծառ» և այլն) այդ ուղղության ուժեղ արձագանքներն են հանդիսանում: Բայց Պոլեժակի «Էրպելի» և «Չիր-Յուրտ» կովկասյան պոեմներում Մաուլինսկուն հատուկ ռոմանտիկական պաֆոսը մենք չենք նկատում: Այստեղ ռոմանտիկական ոգևորության փոխարեն զգալի տեղ են գրավում ռեալիստական պատկերները: Նրա պոեմները մեծ մասամբ նկարագրական բնույթ ունեն: Ռազմական արշավանք-

ները, պատերազմական գործողությունները՝ զինվորների ծանր կյանքը և նրանց խիզախությունը՝ Կովկասի բնության ընդհանուր ֆոնի վրա՝ կազմում են այդ պոեմների հիմնական մոտիվները, Կովկասի գեղեցիկ և փառահեղ պատկերների միջից նա տեսնում է այլ աշխարհ, տանջված ու այլանդակված մարդուն, ուստի զինվորին, որը, ինչպես պոետն է նկատում,—

Որպես մի դե ալլանդակ,—  
Քրտնած, հոգնած, փոշոտված,  
Պաքսիմաթն էր թրջում նա  
Ճահճի ջրում աղտեղված...

Պոետի դառն կյանքը Կովկասում նախապայման է հանդիսացել Կովկասի նոր ըմբռնման համար։ Այդ երկրի փառահեղ նկարագրությունը, որն այնպես վարպետությամբ տրված է Պուշկինի և Լեոմոնտովի ստեղծագործություններում, Պուլեժանը չի ընդունում, նա հակադրվում է դրան և Կովկասին նայում է՝ նրա լեռներում տանջվող զինվորի հայացքով։ Կովկասի հիանալի պատկերները չեն ոգևորում՝ դառն ճակատագրով սպանված զինվորին և ոչ էլ զարմացնում են։ Նա պատրաստ է տեսնել դրանց մեջ «դատարկ հրաշքներ» կամ «ալլանդակություն, ուրիշ ոչինչ»։—

Եվ պատկերները այս դյուլթիշ, բոլոր՝  
Կտակաղներ, լեռներ, անդունդներ խոր,  
Դիտում եմ ահա հոգով քարացած,  
Դիտում եմ կամքիս իսպառ հակառակ,  
Ընկճված՝ բախտի դառը լծի տակ.  
Եվ հավատա ինձ, տեսնում եմ զազրիշ  
Ալլանդակություն, և ուրիշ ոչինչ...

(Թարգմ. Հ. Մազմանյանի)

Պուլեժանի պոեմները պոլեմիկական բնույթ ունեն և

արտացոլում են հեղինակի անձնական կյանքի մռայլ պայմաններն ու արամադրությունները: Դրանով էլ պայմանավորված է ռեալիզմի ուժեղ տարրի առկայությունը նրա պոեմներում: Կովկասի պոլեժեյան ըմբռնումը նոր երևույթ էր ուսւ գրականության համար:

Քերահավատ լինելով դեպի Կովկասի ուսմանտիկական պատկերները՝ Պոլեժակը, սակայն, խորապես համակրում էր Կովկասի ժողովուրդներին, որոնք կորցնում էին իրենց ազատությունը—ժողովուրդների դահիճ Նիկալայի քաղաքականության հետեանքով: Այդ քաղաքականության զոհը դարձավ նաև ինքը, ուսւ նշանավոր պոետը: Նրա մասին խոր համակրանքով են խոսել ուսւ ահանավոր քննադատները: «Այդ եռանդուն տաղանդը, անհավասար և անարդյունավետ պայքարի զոհը՝ չէր կործանվի կյանքի այլ պայմաններում,— գրում է Դորբուլուբովը: Աշխարհին նա կարող էր պարգևել ոչ թե անեծքի ու շարության հնչյուններ, այլ մաքուր, հանգիստ ձգտումների փարթամ հնչյուններ, որովհետև Պոլեժակի տաղանդը, բացի արտակարգ ուժից, տարբերվում է նույնպես անսովոր կրթոտությամբ ու շեշտակիությամբ» (Դորբուլուբով—Հատ. I, էջ 281):

Պոլեժակի կովկասյան մոտիվների այս համառոտ բնութագրից հետո, մենք վերջապես, կարող ենք խոսել Միխայել Լերմոնտովի մասին:

## VII

Ռուս ոչ մի գրողի մոտ Կովկասն այնքան խոր ու բազմակողմանի արտահայտություն չի ստացել, ինչպես Լերմոնտովի ստեղծագործությունների մեջ: Ոչ մի գրող այնքան ոգեշնչված սիրով չի երգել Կովկասը, որքան Լերմոնտովը: Այս հարցում նրա հետ կարող է մրցել միայն Պուշկինը: Կովկասը, իրոք, եղել է նրա երկրորդ հայրենիքը, մխիթարաբանն ու ապավինը, իսկ Լերմոնտովը նրա հոգեվորդին, որդեգիրը, ինչպես այդ պատկերավոր ձևով որակել է մեք մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը: «Հաղար հաղարավոր



մեծ մարդիկ են եկել անցել Կովկասից, բայց դրանք բոլորը Կովկասի համար եղել են անցվորներ, ախոյաններ, բարեկամներ կամ հյուրեր, իսկ որդեգիրներ՝ նա շատ քիչ է ունեցել,— դրոմ է Թումանյանը։ Այդ երջանիկ քչերիցը եղան երկու մեծ ռուս բանաստեղծները—Պուշկին ու Լերմոնտով... Երբ նրանք իրենց ժամանակի ռուսական կյանքից ու իրենց հիասթափության անասլատից քշված, հալածված դիմում էին դեպի հարավ, նրանց խոռված ու դադազած սրտերին հեռվից, ամպերի միջից առողջ ու պայծառ ժպտացին Կովկասի ձյունափառ դադաթները՝ հոյակապ ցնորքների նման, նրանք էլ իրենց հոգու ամբողջ ուժով ու աշխուժով փաթաթվեցին Կովկասին, որդեգրվեցին Կովկասին, ու ախպերացան մեզ կովկասցիներին»։

Իրոք, Կովկասը բացառիկ դեր է խաղացել նրա կյանքում և բացառիկ կարևոր տեղ է դրավում նրա ստեղծագործությունների մեջ։ Կովկասյան մոտիվները կարմիր թելի նման անցնում են նրա համարյա բոլոր կարևոր գործերի միջով, այդ լինի պոեմը, փոքրիկ լիրիքական բանաստեղծություն, թե արձակ գրվածք։ Հանգամանքները նպաստել են դրան։ Դեռ մանկության շրջանում, առաջին անգամ 1825 թվին, Լերմոնտովը իր տատի հետ միասին այցելել է Կովկաս։ Հանգստացել է հանքային ջրերում և բուռն մանկական ջերմ սիրով կապվել այդ երկրի հետ, սիրել նրա բնության դեղեցկությունը։ Այդ այցելությունները կրկնվել են և Կովկասը խորը կերպով տպավորվել է պատանու հիշողությանը։ Լերմոնտովը հաճախ է հիշում իր ստեղծագործությունների մեջ Կովկասից ստացած պատանեկական շրջանի անջնջելի տպավորությունները և որդիական սեր է արտահայտում Կովկասի նկատմամբ։

Քեզ, ով Կովկաս, հզոր արքա այս երկրի,  
Քեզ եմ նորից անհոգ երգս նվիրում.  
Նրան օրհնիր դու իբրև քո զավակի,  
Տուր հովանի քո ձյունապատ լեռներում,

Անկասելի բախտը վաղուց իմ հոգին  
Շղթայել է քեզ հետ անվերջ ցնորքով.  
Յուրա հյուսիսում—քեզ խորթ, օտար բնավին,  
Քոնն հմ, Կովկաս, ես միշտ սրտով ու մտքով  
(Թարգմ. Ա. Մատուրյանի)

Տարիներ հետո՝ 1837 թ., Լերմոնտովն այցելում է Կովկաս արդեն որպես աքսորյալ, որպես Պուշկինի մահվան առթիվ գրած մերկացնող բանաստեղծության հեղինակ և Կովկասի ձյունապատ լեռները մտերմաբար ժպտում են աքսորյալ պոետին, մխիթարում ու ապավեն են դառնում նրա խռովահույզ հոգուն։ Երկրորդ անգամ նա աքսորվում է 1840 թ. և այլևս չի վերադառնում հայրենիք, Կովկասում էլ սպանվում է՝ ոստիկանության կողմից նախապատրաստված դավադրության, մենամարտի միջոցով։ Այսպիսով, Լերմոնտովի մանկական շրջանը, ինչպես և դիտակցական տարիները, անցել են Կովկասի կախարդական բնության ծոցում և հպարտ ու ազատասեր ժողովուրդների շրջանում։ Այս բոլորը խորը կերպով ներդաշնակում էին Լերմոնտովի տրամադրություններին և ստեղծագործական ներշնչում տալիս նրան։ Կովկասը, ինչպես ասում է Բելինսկին, դարձավ Լերմոնտովի ջերմագին սիրած պոետական հայրենիքը։ Դրան, անշուշտ, նպաստեցին Պուշկինի, Մառլինսկու, Պուլիժանի և Լերմոնտովի այլ նախորդների՝ Կովկասին նվիրված երկերը, որոնք արդեն պատանեկական շրջանում նրա մեջ դարձեցնում էին հետաքրքրություն Կովկասի նկատմամբ և նպաստում, հատկապես Պուշկինը, նրա Կովկասյան մոտիվների ձևակերպմանը։ Լերմոնտովը Կովկասում եղած ժամանակ լուրջ կերպով ուսումնասիրել է տեղի ժողովուրդների կյանքն ու կենցաղը, նրանց ավանդություններն ու ստեղծագործությունները և այդ բոլորը առատորեն ու մեծ վարպետությամբ օգտագործել է իր անմահ հորինվածքներում։ Արդեն վաղ շրջանում Լերմոնտովը Պուշկինի Կովկասի գերու ազդեցությամբ ստեղծում է իր պատանեկական պոեմները «Չերքեզները» և «Կովկասի գերին», երկուսն էլ գրված 1828 թ.։

Այս գրվածքների մեջ հեղինակը ցայտուն գույներով պատ-  
կերում է լեռնականների խաղաղ կյանքն ու ռազմական  
գործողությունները, համակրանքով է խոսում նրանց քա-  
ջության ու խիզախության մասին: Ազդվելով իր մեծ նա-  
խորդի ստեղծագործությունից՝ Լերմոնտովը, սակայն, ար-  
դեն այդ շրջանի գործերում հանդես է բերում ինքնուրույ-  
նություն, դեպքերի նկարագրության ու բնավորությունների  
կերտման ասպարիզում ցուցադրելով իր պոետական տա-  
ղանդը:

Լերմոնտովը համակրում է լեռնականներին, հարգան-  
քով է խոսում ազատության համար մղած նրանց պայքարի  
մասին և քննադատում է ցարիզմի նվաճողական քաղաքա-  
կանությունը: 1830 թ. գրած գողտրիկ «Կովկաս» բանաստեղ-  
ծության մեջ Լերմոնտովը շատ որոշակի է արտահայտել  
այդ տրամադրությունները.

Կովկաս, երկիր դու հեռավոր—  
Օթևան պարզ ազատության,—  
Դու էլ կոչում արյունահորդ,  
Դու էլ ես լի դժբախտությամբ:  
Մի՞թե ժայռերն, այրերը քո  
Մառախուղիդ քողի ներքո  
Նույնպես լսեն պիտի մեկ օր  
Ճիշեր կրքոտ, զոդանջ փառքի,  
Հընչեղ ոսկու և կապանքի:  
Ո՛չ, մի սպասիր օրերն անցած  
Հայրենիքիդ համար, շերքեզ.  
Հնումն ազատությամբ շոյված՝  
Նա կործանվում է հայտնապես:

(Թարգմ. Գ. Աբովի),

Այս մոտիվը հաճախ է կրկնվում Լերմոնտովի ստեղծա-  
գործությունների մեջ: Մեծ պոետը խոր ցավով է պատմում

լեռնականների ազատությունից զրկվելու մասին: Նա սիրում էր այդ ժողովուրդներին և նրա սերը ջինջ ու անկեղծ բնույթ ունեւր: Այդ մասին են վկայում նրա անմահ գրվածքները: Լեռնադէպարտմէն այդ ստեղծագործությունների մեջ է գրըսեւորել դեպի լեռնականների կյանքն ու աւանդություններն ունեցած իր բուն հետաքրքրությունը: Նրա «Կալլա» (մարդասպան), «Բաստունչի աուլը» և «Հաշի—Աբրեք» պոեմները դրա լավագոյն ապացույցը կարող են հանդիսանալ: Հեղինակը վառ պոետական գույներով ու բնորոշ կերպարներով պատկերում է լեռնականների մեջ դարերի ընթացքում խտացած սովորությունները, արշան վրեժի դաժան աղաթը: Այդ վրեժառությամբ կուրանալով մարդ ոչնչացնում է մի ամբողջ սերունդ և հետո սոսկում է իր կատարած հանցանքի դաժանությունից և միայնակության մեջ է անցկացնում օրերը (Կալլա): Մյուսը վրեժ է լուծում ոչ թէ հանցավորից, այլ նրա համար՝ ամենից սիրելի էակից, որպէսզի տանջալից ցավ պատճառի հանցավորին (Հաշի—Աբրեք): Կամ նկարագրում է հերոսի ըմբոստությունը քարացած սովորությունների ու կնոջ ստրկացած վիճակի դեմ (Բաստունչի աուլը): Այս բոլորը մեծ քանաստեղծը պատկերում է բարձր արվեստով, զուգորդում է կյանքի կենցաղի բնորոշ փաստերով և ստեղծում է լեռնականների մեջ իշխող սովորությունների ու նրանց դեմ խուլ ըմբոստացումների ցայտուն պատկերը:

Կենցաղի նկարագրության ու ազգային բնավորությունների կերտման տեսակետից կարեւոր տեղ է գրավում «Մեր ժամանակի հերոսը», «Բեւան» հատվածը ամբողջությամբ նվիրված է լեռնականների կյանքի ու կենցաղի ռեալիստական նկարագրությանը: Այդ մասում նկարագրված Աղամաթի և Կազբիշի ռեալ ու ամբողջական բնավորությունների մասին Բելինսկին շատ որոշակի է արտահայտվել. «Պրանք այնպիսի տիպեր են, ասում է քննադատը,— որոնք կարող են հավասարապէս հասկանալի լինել և անգլիացուն, և գերմանացուն, և ֆրանսիացուն, ինչպէս հասկանալի են նրանք ռուսին: Ահա թէ ինչ է նշանակում ֆիզուրաները



նկարագրել իրենց ամբողջ հասակով, ազգային ֆիզիանոմիայով և ազգային զգեստով»:

Այս բոլորի հետ միասին, Լերմոնտովը բացառիկ ուշաձգրության է արժանացնում կովկասցիների դեպի զենքն ու ռազմական գործողություններն ունեցած սերը և ազատության ձգտումը: Կովկասցիները ռազմասեր և ազատասեր ժողովուրդ են. այսպես են պատկերված նրանք Լերմոնտովի մոտ:

Նրանց աստվածն է—լուկ ազատություն,  
Նրանց օրենքը—պատերազմ, արյուն:  
Եվ մտածում են խորհում օր-դիշեր,  
Նրանք արտակարգ ու անգութ գործեր՝

Մատաղ հասակից նվիրված իրանց,  
Թաքուն ու վայրագ ասպատակությունց:  
Այնտեղ հանաք չէ սպանել թշնամուն.  
Անսուտ չէ և վրեժ, և մտերմություն.

Այնտեղ սովոր են բարիքին՝ բարիք,  
Արյան՝ տեղ արյուն պարգևել մարդիկ.  
Այնտեղ, սիրո պես խորն է, անսահման  
Եվ զգացմունքը շար առելություն...

(Թարգմ. Ա. Մատուրյանի):

Այսպես լակոնիկ է բնորոշել այդ ժողովուրդների երկու հիմնական հատկանիշները, պատերազմի և ազատության ձգտումը, որոնք հետագայում հաստատել է Տոլստոյը:

Լեոնականների պայքարը իրենց ազատության ու անկախության համար խոր արտահայտություն է գտել «Ժողովիլ բեկ» պոեմում: Դա թեև գրված է պատանեկական տարիներին (1832 թ.), բայց աչքի է ընկնում պոետական վարպետությամբ ու քաղաքական նպատակասլացությամբ, ցածրիզմի նվաճողական քաղաքականության ուժեղ քննադատությամբ: Պատահական չէ, որ պոեմը լույս տեսավ բանաստեղծի մահից հետո:

անդժի մահից շատ հետո, այն էլ ցենզուրական զգալի կըր-  
 ճատումներով: Այս գրվածքի մեջ կերմոնտովը ծավալուն  
 ներպով նկարագրել է ոչ միայն լեռնականների հերոսական  
 պայքարը, այլև այն բոլոր դառնություններն ու տանջանք-  
 ները, որ բերում է պատերազմն իր հետ: Կերմոնտովի հա-  
 մակրանքը, անկասկած, Իզմայիլ բեկի կողմն է, որ քաջա-  
 բար կռվում է իր հայրենիքի ազատության համար: Կերմոն-  
 տովը կովկասյան թեմատիկայի վրա լուծում է իրեն հուզող  
 տանջալից հարցերը, ստեղծում է կերպարներ, որոնք ար-  
 տացուում են իր տրամադրությունները, մտքերն ու հույզե-  
 րը: Իզմայիլ-բեկը այդ կերպարներից է. դա Կերմոնտովի  
 սիրած խոովարար, հպարտ, կյանքից հիասթափված և մի-  
 այնության մեջ տառապող հերոսի նախատիպն է, Արբենի-  
 նի, Պեչորինի, Մծիրիի նախատիպը: Բացի այդ հատկանիշ-  
 ներից, Իզմայիլ-Բեկն օժտված է նաև այլ հատկություննե-  
 րով. դա նրա քաջությունը ու հայրենիքի նկատմամբ ունե-  
 ցած սերն է: Այդ հատկանիշները կան նաև հիշյալ հերոս-  
 ների մոտ, օրինակ Մծիրիի, բայց այն կոնկրետ ձևը չու-  
 նեն, ինչպես այդ մենք տեսնում ենք Իզմայիլ-Բեկի մոտ:  
 Նա սոսկ պատսիվ հայրենասեր չէ, այլ զենքը ձեռքին պայ-  
 քարում է իր հայրենիքի անկախության համար: Նա ազա-  
 տության մասին վերացական երազող չէ, այլ դործնական  
 կյանքում իր արյան դնով պաշտպանում է հարազատ ժողո-  
 վրդի ազատությունը: Սրանով էլ նա տարբերվում է Կերմոն-  
 տովի մյուս հերոսներից: Նա չունի այն փիլիսոփայական  
 խորությունը, որով աչքի են ընկնում Դեմոնը, Մծիրին կամ  
 Պեչորինը: Իզմայիլ-Բեկը դրանց նախնական վարիանտն է  
 դործնական հատկանիշներով, ռազմական հոգով: Նրա կյան-  
 քի հետաքրքիր ուղին այդ է հաստատում: Փոքրուց որպես  
 պատանդ ապրել է ռուսների մոտ, կրթություն է ստացել  
 Պետերբուրգում, որպես սպա ծառայել է ռուսական բանա-  
 կում, ընդունել է քրիստոնեություն, բայց այդ բոլորով հան-  
 դերձ չի մերվել ռուսական կուլտուրայի հետ: Փախել է  
 հայրենիք և հայրենակիցների հետ միասին մասնակցում է

ցարիզմի դեմ մղվող պայքարին: Այդ կովի մեջ նա աչքի է բնկնում իր ընդունակութիւններով, խելքով ու քաջությամբ և մասսայականութիւն է վայելում հայրենակիցների շրջանում: Այս բոլորը շարժում են մեծ եղբոր Ռուստամ-Բեկի նախանձը, որի դավաճանական գնդակից սպանվում է Իգմայիլ-Բեկը: Այս պոեմայի մեջ, Լեւոնտովը նկարագրում է Կովկասի տարբեր ժողովուրդների մեջ գոյութիւն ունեցող բարեկամութիւնը ու փոխադարձ կապերը: Պոետական ցայտուն գույներով ու խոր համակրանքով հեղինակը պատկերում է լեռնականների կյանքն ու կենցաղը և ուժեղ քրննադատութեան է ենթարկում նրանց դեմ մղվող դաժան պատերազմը: Այդ բոլորին նա հակադրում է կովկասցիների նախապատերազմյան ազատ, խաղաղ կյանքը, երբ «օտարի հողի սահմանների մոտ, խաղաղ աուլները ծաղկում էին, և պարծենում փոխադարձ բարեկամութեամբ. այնտեղ յուրաքանչյուր ճանապարհորդ գտնում էր հյուրասեր օթեան և լեռնականը երջանիկ ու ազատ էր»:

Դաժան պատերազմը սկսվելուց հետո արմատապես փոխվում է կյանքի պայմանները: Լեռների բնակիչների մեջ խոսում է զայրույթն ու ատելութիւնը՝ իրենց ազատ կյանքի վրա ձեռք բարձրացնող բռնակալի դեմ: Նրանց երակների մեջ եռում է ռազմական կորովի արշուճը և նրանք պատրաստ են փառքով մեռնելու իրենց հայրենիքի ազատութեան համար:

Կովկասցու համար ազատ կյանքից բարձր ու վեհ բան գոյութիւն չունի, դրա համար նա պատրաստ է զոհելու ա՜մեն ինչ, իր արշուճն ու կյանքը, բայց ազատութեանից չզրկվել:

Անդորրութիւն է սիրում լեռնեցին,  
Հայրենի հողն է սիրում կաթողին,  
Սակայն հերոսին է՛լ ավելի շատ  
Թանկ է, սիրելի իր կյանքը ազատ:

Այս տողերը բնորոշում են կովկասցու ամբողջ հոգե-

կան կառուցվածքը, նրա մարտական ու ռազմական շունչը  
և այդ բոլորը ցայտուն կերպով արտահայտություն է ստա-  
ցել նաև լեռնականների ժողովրդական երգերի մեջ: Լեռմոն-  
տովը իր պոեմների մեջ հիշում է այդ տիպի երգերը, նրանց  
մեջ դովերգվում է ազատությունը և ռազմական խիզախու-  
թյունը.

Շատ աղջիկներ կան մեր այս սարերում,  
Գիշեր ու աստղեր—նրանց աչքերում:  
Ինչպիսի բախտ է—նրանց հետ ապրել,  
Բայց ազատությունը թանկ է առավել:

Դու կին մի՛ առ, կտրիճ տղա,  
Խոսքիս ականջ դիր.  
Այդ փողերով, կտրիճ տղա  
Նժույգ-ձի գնիր:

(Թարգմ. Հ. Մաղմանյանի):

Մի այլ երգի մեջ փառաբանելով հաստատակամությունը  
ու սիրո հավատարմությունը՝ ժողովուրդն ասում է.

Լուսինն է լողում  
Հանգիստ ու խաղաղ,  
Ռազմի է գնում  
Քաջասիրտ տղան,

Հրացանն է լցնում  
Իգիթը անահ.  
Աղջկան ասում է—  
Սիրելիս, գնա

Եվ արևելքին  
Եվ մարգարեին—  
Աղոթիր կրկին  
Դու հավատարիմ:



Ով որ վհատվի  
Թշնամուց, մենակ  
Նա կնախատվի,  
Մեռնի անարգ:

(Թարգմ. Ս. Տարոնցու):

Հերոսական, մարտականը ռազմական ոգին—ահա թե  
Կովկասցու որ գծերն են ամենից առաջ գրավում մեծ բա-  
նաստեղծին: Եվ այդ գծերը նրանց հերոսական պայքարի  
հետ միասին՝ նա դրսևորել է պոետական վառ ու ցայտուն  
գույներով, խոր սիրով ու համակրանքով: Այդ նա էր ոգե-  
վորված բացականչում՝ դիմելով սիրելի Կովկասին.

Օհ իմ վեհ Կովկաս, ես սիրում էի  
Ռազմատենչ բարքերը քո զավակների.  
Սիրում երկինքդ կապուտակ, անհուն,  
Եվ այն սքանչելի, ահեղ մոնչունը

Քո հանկարծահաս փոթորիկների,  
Եվ չորս կողմերից քեզ ձայն են տալի  
Խորունկ քարայրեր, սեպ սեպ բըլուրներ,  
Որպես գիշերվա քաջ պահապաններ:

(Թարգմ. Ա. Ծատուրյանի):

Այս սրտառու, տողերում արտահայտություն է գտել  
ուրա ժողովրդի առաջավոր զավակների դրական վերաբեր-  
մունքը դեպի Կովկասի ժողովուրդը, այն էլ նրանց դեմ  
մղվող կռվի ամենարորբեղված շրջանում: Լերմոնտովի պոե-  
մը և նրա մյուս գրվածքներն այդպիսի համակրանքի ցայ-  
տուն արտահայտությունն են հանդիսանում: Լերմոնտովը  
գիտակցում էր, որ ցարական բանակը բռնությամբ ու դա-  
ժանությամբ էր ճանապարհ հարթում Կովկասի լեռներում:  
Հետագայում Լերմոնտովը որոշ խմբագրություն է մտցնում  
իր վերաբերմունքի մեջ, մեղմում է այն «Վեճ» բալլադայում:  
Քայց նրա բացասական դիրքը պատերազմի, ցարիզմի նվա-  
ճողական քաղաքականության նկատմամբ մնում է անշ-

խախտ, Լերմոնտովը շարունակում է հերոսական դրվագներ մշակել լեռնականների մարտական կյանքից: Այս տեսակետից նրա «Փախստական» պոեմը մի ցայտուն գործ է: Հեղինակն այդ փոքրիկ պոեմը համարում է «Լեռնային լեզենդ»: Հարուներ, պոեմի հերոսը, փոխանակ վրեժ լուծելու հորը և եղբորը սպանողներից, խայտառակ ձևով փախչում է մարտի դաշտից և փորձում է ապավինել բարեկամի սիրած աղջկա և մոր խանդավառ ընդունելությանը: Բայց նրանք երեքն էլ առանձին առանձին չեն ընդունում նրան, խայտառակում են և բոլորից մերժված ու հուսահատված նա ինքնասպան է լինում: Փախստականի վախճանը բնորոշ է: Այստեղ Լերմոնտովը խտացրել է կովկասյան ժողովուրդների հիմնական գծերը՝ ազատության, հայրենիքի համար փառքով մեռնելը և նրանց այրող արհամարհանքը վախկոտների ու հայրենիքի դավաճանների հանդեպ:

Չկա ոչ ոք լեռներում, որ ամօթանքը տանի,  
Կվռնդե վախկոտին՝ մեր լեռնուհին գեղանի:

Ազատախոհության ու հայրենասիրության ջատագովությանն են նվիրված Լերմոնտովի լավագույն գործերը, որոնք կովկասյան ծագում ունեն: Ես նկատի ունեմ «Մծիրին» և «Դեք» ընդհանրացող պոեմները: Հեղինակն իր Դեին փոխադրում է Կովկասի բարձրասլաց լեռները և կոնկրետ մարդկային գծերով օժտում նրան: Խռովահույս ու հպարտ Դեք, որը հավերժական թշնամության մեջ է երկնքի ու երկրի բռնակալությունների հետ, համարում է իրեն ազատության ու ճանաչողության աստված: Նա հանգստություն ու մխիթարություն է փնտռում Կովկասի բնության գեղեցկության և չքնաղ վրացուհու՝ Թամարայի սիրո մեջ: Լերմոնտովի Դեք փիլիսոփայական խորը կերպար է, որի վերլուծությունը մեր նպատակի մեջ չի մտնում: Կասենք միայն այսքանը, որ պոեմի մեջ հեղինակը Կովկասի բնության նկարագրության

առաջարկելով հասնում է չգերազանցված կատարելության։  
 Նրա սերը դժպի բնության հրաշալիքները, որոնք ցայտուն  
 նկարագրությամբ զարդարված են նրա նախորդ պոեմներն  
 ու բանաստեղծությունները, այստեղ արվեստի կատարելու-  
 թյանն են հասել, խտացվել ու կենդանի շունչ առել։ Բնու-  
 թյունը նրա մոտ խորը կերպով արձագանքում է պոետի ու  
 նրա հերոսների հոգեկան ապրումներին, նրանց վշտերին ու  
 խնդություններին և սիրո ու երջանկության զգացմունքով է  
 լցնում ընթերցողների սրտերը։ Բնության լեռմոնտովյան  
 նկարագրությունները, հիացմունք են պատճառել իր ժամա-  
 նակին ուսման մեծ քննադատ Բելինսկուն։ Այս տեսակետից  
 որքան բնորոշ են նրա խոսքերը «Թերեքի նվերներ» բանաս-  
 տեղծության մասին, որոնք իր հերթին հավասարապես կա-  
 րող են վերաբերել նրա մյուս գրվածքներին։ «Թերեքի նվեր-  
 ները» հանդիսանում է Կովկասի պոետական գովերգությու-  
 նը,— գրում է Բելինսկին։— Միայն հույների փառքամ կեն-  
 դանի երեակայությունը կարողանում էր այդպես անձնավո-  
 րել բնությունը, տալ նրա համր և ցրված երևույթներին  
 պատկերներ ու անձնավորում... Թերեքը և Կասպին մար-  
 մնավորում են իրենցից Կովկասը, ինչպես նրա բնորոշ երե-  
 վույթներ...»։

Արվեստի այդ ուժը ամբողջ գեղեցկությամբ փայլում է  
 նաև նրա «Մծիրի» պոեմի մեջ։ Մծիրին ուժեղ բնավորու-  
 թյամբ, հպարտ հոգու տեր է։ Մեծանալով վաճում, զրկված  
 ազատությունից ու հեռու հայրենիքից, Մծիրին, խորը կեր-  
 պով տանջվում է աննկատելի վշտից— իր հայրենի երկրի,  
 կարոտից, որտեղ մարդիկ այնպես ազատ են ապրում։

Նս լոկ մի մըտքի ուժ եմ իմացել,  
 Մի, բայց բոցավառ կիրք եմ ունեցել,  
 Նա ինչպես մի որդ ապրել է իմ մեջ,  
 Կըրծել է հոգիս, մաշել մինչև վերջ։  
 Իմ ցնորքները թոցրել, տարել է։

Այս նեղ խցերից անդորրն աղոթքի  
Այն վեհ աշխարհը կըռվի, աղմուկի,  
Ուր որ ժայռերը թագնվում ամպերում,  
Ու մարդիկ այնպես ազատ են ապրում:

Մծիրիի կրակոտ խոստովանության մեջ մարմնացած է նրա բնավորության ուժն ու խորությունը, ազատության բուռն ծարավը և հայրենիքի մաշող կարոտը: Պատմելով վանքի խցերից դուրս ապրած երեք ազատ օրերի տպավորությունների մասին՝ հերոսն իր ժամանակի հասարակության ստրկական վիճակն է ակնարկում, երբ ասում է.—

Մըտքումըս վաղուց, վաղուց դրել եմ՝  
Մի անգամ արձակ դաշտերին նայեմ,  
Տեսնեմ՝ աշխարհքը սիրո՞ւն է արդյոք,  
Ինչո՞ւ ենք, տեսնեմ, գալի մենք աշխարհք,  
Ազատ ապրելո՞ւ, թե՞ բանտի համար:

(Թալուգ. 2. Թումանյան)

Մծիրին ռոմանտիկ հերոս է խռովահույզ հոգով, նա ցանկանում է հողմազայր մրրիկներ զրկել ու ձեռքերով ջանքեր բռնել: Այսպիսի կրակոտ բնավորությունը կաշկանդված էր վանքի նեղ ու մռայլ պատերի մեջ: Լերմոնտովն իր բնավորությանից շատ գծեր է փոխանցել իր հերոսին: Ինչպես Մծիրին, նա տանջվում էր օտարության մեջ, զրկված հայրենիքից ու ազատությունից, և բողոքում է ու շանթեր է արձակում՝ ցարական մռայլ իրականության դեմ: Այս առումով հասկանալի է դառնում, թե ինչու Բեռլինակին Մծիրիին համարել է Լերմոնտովի ստվերը և բարձր է գնահատել պոեմի արվեստը: «Չնայած Մծիրիի գաղափարի անհասունությանը և բովանդակության որոշ ձգձգվածությանը, մանրամասնությունները և այդ պոեմի շարադրությունը հիացնում են իրենց կատարմամբ: Կարելի է ասել առանց չափազանցության, որ բանաստեղծը գույները վերցրել է ծիածանից, ճառագայթները արևից, փայլը կայծակից,



որոնք ամպից, բվվոցը քամուց,— որ ամբողջ բնությունն ինքն է նյութ բերել և հանձնել նրան, երբ նա գրել է այս պոեմը» (Բելինսկի, հ. 1-ին, էջ 516):

Մեզ մնում է խոսել երկու այլ գրվածքի մասին և դրանով եզրափակել Լերմոնտովի կովկասյան մոտիվների բնութագրումը: Ես նկատի ունեմ «Վեճ» բալլադան և «Վալերիկ» ընդարձակ բանաստեղծությունը: Դրանք երկուսն էլ բացառիկ կարևոր են մեզ հետաքրքրող հարցի լուսարանության համար: «Վալերիկ» հայտնի բանաստեղծությունը, որն սկսվում է «Я к вам пишу, случайно, право» բառերով գրված է 1840 թ., երբ Լերմոնտովը երկրորդ անգամ աքսորվեց Կովկաս և մասնակցեց Վալերիկ գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտին: Այդ ճակատամարտից ստացած տալավորություններն էլ արտացոլվել են հիշյալ բանաստեղծության մեջ: Դժվար է հիշել մի այլ պոետական երկ, որի մեջ այնքան լակոնիկ ու այնքան ցայտուն գույներով պատկերված լինեն պատերազմական գործողությունները: Այս տեսակետից Լերմոնտովի «Վալերիկը» կարող է համեմատվել միայն Ն. Տոլստոյի զինվորական պատմվածքների հետ, որոնց վրա զգացվում է Լերմոնտովի ազդեցությունը: Լերմոնտովը զարմանալի պարզությամբ ու էպիկական հանգստությամբ է նկարագրում կռվի տեսարանները: Կարգալով նրա բանաստեղծությունը, կարելի է տեսնել պատերազմն իր իսկական արտահայտությամբ՝ արյամբ, տանջանքով ու մահվամբ: Բանաստեղծությունը էպիստոլյար ձև ունի: Հեղինակն իր սիրած աղջկան պատմում է տեղի ունեցած ճակատամարտի ու իր ապրումների մասին, և նրա պատմությունը շատ պարզ ու հասարակ ոճ ունի, առանց ոգևորության նշույլի: Բայց ընթերցողն զգում է Լերմոնտովի արվեստի խորությունը և ռեալիստական ընդհանրացումների ուժը:

Լիրիքական նախաբանին հաջորդում են ռեալ տեսարաններ, դեպքերի էպիքական նկարագրություններ, որոնք հրեմն ընդհատվում են հեղինակի միջամտությամբ, լիրիքական շեղումներով:

Ահա համախմբված են զինվորները և զրուցում են անց-  
յալի մասին, թե ինչպես հնում ջարդել են իրենց հակառա-  
կորդ լեռնականներին և որ այդ կովից «իրենց էլ է բաժին  
հասել»։ Իսկ դետի մոտ խաղաղասեր թաթարը նամազ է  
անում՝ աչքերը վեր չբարձրացնելով. նրան արձագանքում  
են ուրիշները։ Հեղինակը չի թագցնում իր խոր համակրան-  
քը դեպի լեռնականները և ընդհատելով էպիքական պատ-  
մությունն ասում է.

Սիրում եմ գույներ նրանց դեմքերի,  
Դեղնավուն, ինչպես սրնքակալներ,  
Ու փափախները, թևերը վտիտ,  
Նայվածքն աչքերի—խորամանկ, միմյա  
Ու կոկորդային խոսվածքը նրանց։

Հեղինակը շարունակում է ընդհատված պատմություն-  
նը։ Լսվում է կրակոց, բարձրանում է տագնապ և ճակա-  
տամարտն սկսվում է։ Փայլում են սվինները, լսվում են  
հրացանների կրակոցները, հրանոթների ու նռնակների  
պայթյունները, բայց հակառակորդը շարունակում է դիմա-  
դրել։ Գործը հասնում է սվինամարտի, որը տևում է երկու  
ժամ և տեղի է ունենում դետի հոսանքում։ Հոսող մարդկա-  
յին արյունից դետի ջուրը կարմրում է.—

Ալիքները այն պղտոր  
Եվ տաք էին և բոսոր։

Այդ ճակատամարտը մեծ զոհեր է խլում, կապիտանն  
սպանվում է. գեներալը վիրավորվում, իսկ սպանված զին-  
վորների արյունոտ դիակները հավաքում են մի տեղ,  
բայց կոփը շարունակվում է, աններդաշնակություն ստեղ-  
ծելով Կովկասի գեղեցիկ բնության հետ։ Հեղինակը տալիս  
է այն հակադրությունը, որ կա պատերազմի սարսափների  
և բնության գեղեցկության միջև.

Ու սրտի խորին, անհուն տխրությամբ  
Ես խորհում էի՝ մարդ ողորմելի,—

Ի՞նչ է նա ուզում,— երկինքն է պայծառ,  
Ամենքի համար շատ տեղ կա երկրում,  
Բայց իզուր տեղը ու միշտ, անդադրում  
Լոկ նա է գժտվում, և ինչի՞ համար:

Այս տողերում հեղինակն արտահայտել է պատերազմի  
խմաստին վերաբերող իր խոհերը: Ինչպես ճիշտ նկատված  
է քննադատական գրականության մեջ, Լեւոնտովի այդ  
պացիֆիստական հայացքները, որոնք զուգադիպում են  
Մաուլինսկու համանման տրամադրություններին, նիկո-  
լաեյան ռեակցիայի պայմաններում առաջադիմական երե-  
վույթ էին: Դա յուրահատուկ ու խիստ դատավճիռ է հանդի-  
սանում ցարիզմի կողմից հրահրվող արյունահեղ պատե-  
րազմի նկատմամբ, որի նպատակը Կովկասի բռնի նվաճումն  
էր: Պատերազմի նկատմամբ Լեւոնտովի ունեցած այդ  
տրամադրությունները հետագայում զարգացրել ու խորացրել  
է Լեվ Տոլստոյը իր զինվորական պատմվածքներում ու  
«Պատերազմ և խաղաղություն» վեպում:

Լեւոնտովի «Վալերիկ» բանաստեղծությունը, որ եր-  
բեմն պոեմ է համարվում, արվեստի մի կատարյալ գործ է:  
Այստեղ էպիկական հանդիստ, խաղաղ նկարագրությունը եր-  
ջանիկ կերպով զուգորդված է լիրիքական խոր ապրումների  
հետ: Նրա նկարագրած պատերազմական տեսարանները  
ոեալ են ու համոզիչ, պատկերները՝ արտահայտիչ ու ցայ-  
տուն, զգացմունքները՝ ջերմ ու անկեղծ: Այս գրվածքի մեջ  
Լեւոնտովի ռեալիստական արվեստը հասնում է իր ան-  
նման կատարելությանը, որից այն կողմը դժվար է պատ-  
կերացնել պատերազմի ոեալ նկարագրություն՝ բանաստեղ-  
ծական երկի մեջ:

Այլ բնույթի գործ է Լեւոնտովի «Վեճ» բալլադան:  
Այստեղ տրված է էլբրուսի և Կադրեկի զրույցը:

Ինչպես Թերեքն ու Կասպին, այնպես էլ Կադրեկն ու  
էլբրուսը մարմնավորում են Կովկասը: Էլբրուսը զգուշաց-  
նում է արևելքից սպասվող վտանգի մասին, բայց Կադրեկը

այդ կողմում միայն անշարժութիւնն ու խաղաղ քուն է տես-  
նում: Վտանգը սպասւում է հյուսիսից և Կազբեկը դիտում  
է ռուսական զորքի հաղթական երթը դեպի արեւելք՝ Կովկասը  
նվաճելու.

Եվ մռայլած Կազբեկը ծեր  
Իր խոհերից շար,  
Ուզեց հաշվել ոսոխներին—  
Նրանց թիվ չըկար:

Տխուր նայեց նա իր ցեղի  
Լեռներին համայն,  
Քաշեց գլխարկը հոնքերին,  
Լռեց հավիտյան:

(Թարգմ. Գ. Սարգսի)

Ոմանք այս բանաստեղծութիւնն մեջ տեսնում են հակա-  
սութիւնն Լեւոնտովի ընդհանուր կոնցեպցիայի նկատմամբ՝  
Կովկասի նվաճման հարցում. բայց այստեղ դժվար է հա-  
կասութիւն նշել: Մեջ բերված տողերը շատ որոշակի են  
դարձնում Լեւոնտովի վերաբերմունքը: Կովկասի գրավումը  
պատմական փաստ էր, պատմական փաստ էր և նրա ըն-  
դերքի հարստութիւնների օգտագործումը, արդյունաբերու-  
թյան զարգացումը: Այս դրվածքի, ինչպէս և «Կազակուհու  
օրորոցի երգը» հիանալի բանաստեղծութիւնն մեջ, Լեւոն-  
տովը դրսևորում է իր հայրենասիրութիւնը և ռուսական  
դէմքի նկատմամբ ունեցած սերը: Կովկասի լեռների նվա-  
ճումը դժվար գործ էր և այդ դժվարութիւնը ռուսական բա-  
նակը հաղթահարեց: Դա հիմք դարձավ արդյունաբերութիւն  
զարգացմանը, ընդերքի հարստութիւնների օգտագործմանը:  
Լեւոնտովը այդ բալլադայի մեջ չի արդարացնում նվաճ-  
ման քաղաքականութիւնը,— դա երևում է Կազբեկի վերա-  
բերմունքից,— այլ արձանագրում է պատմական փաստը իր  
առաջադեմ արդյունքներով, որը ձեռք էր բերված, ինչպէս  
Բելինսկին էր ասում Պուշկինի պոեմի կապակցութեամբ.



ռուս մարտիկների արյունով ու նրա հերոսների սխրագործութեամբ:

Լերմոնտովը բազմաթիվ բանաստեղծություններ է գրել Կովկասում և կովկասյան մոտիվներով, որոնց բոլորի մասին այստեղ խոսել հնարավոր չէ. դա նույնիսկ կարող է կրկնություն լինել այն ամենի, ինչ մենք ասացինք: Հայտնի է, որ Կովկասը անսպառ աղբյուր է եղել Լերմոնտովի ստեղծագործությունների համար: Կովկասից դուրս դժվար է պատկերացնել Լերմոնտովին: Կովկասյան թեմատիկան ու կերպարները միջոց են եղել Լերմոնտովի համար արտահայտելու իրեն հուզող հարցերը և նրա կովկասյան լիրիկան լի է այդ հուզող արամադրություններով: Նա առատ կերպով օգտագործել է ժողովրդական ավանդություններն ու երգերը, ուսումնասիրել է կովկասյան ժողովուրդների, ոչ միայն լեռնականների, այլև կազակների կյանքն ու ժողովրդական ստեղծագործությունները: Այս բոլորը հարստացրել են նրա ստեղծագործությունները, ընդարձակել սահմանները և խորացրել երևույթների մարմնավորման արվեստը: Կովկասում և կովկասյան թեմատիկայի օգնությամբ Լերմոնտովը պոետական վարպետության ու արվեստի կատարելության հասավ: Նա իր անմահ ստեղծագործությունների մեջ մարմնավորեց Կովկասի փարթամ բնությունը և ժողովրդի կյանքի ու պայքարի հերոսական գծերը, Կովկասի ռեալիստական ու ռոմանտիկական պատկերները: Նրա ստեղծագործությունների մեջ այդ երկու գծերն էլ այնքան միաձուլվել ու միասնական են հանդես գալիս, որ շատ հաճախ դժվար է սահմանազատումներ կատարել: Կովկասը ծիածանի գույներով է փայլում Լերմոնտովի ստեղծագործությունների մեջ: Շնորհիվ Պուշկինի և Լերմոնտովի, ինչպես և հետագա շրջանի կլասիկների, Կովկասը դարձավ հարազատ ռուս մարդու և այն բոլորի համար, ովքեր կարդում են նրանց ստեղծագործությունները, ովքեր դաստիարակվում են նրանցով: Լերմոնտովը ծավալեց Պուշկինի սկսած գործը և ընդմիջտ իր ստեղծագործությունների մեջ փայփայեց սիրելի Կովկասի հոյակապ կերպարը:

Լերմոնտովը մեծ պոետ էր և նրա հանճարի ձևավորման ու ծաղկման գործում որոշիչ դեր է խաղացել Կովկասը: «Մենք կտեսնենք,— ասում է Բելինսկին,— որ բուրմունքի թարմությունը, ձևի գեղարվեստական փարթամությունը, պատկերների պոետական փայլը և ազնիվ պարզությունը, էներգիան, լեզվի հզորությունը, ոտանավորների աղամանդյա ամրությունը և մետաղյա հնչելությունը, զգացմունքների լիառատությունը և գաղափարների խորությունն ու բազմազանությունը, բովանդակության անընդգրկելիությունը,— Լերմոնտովի պոեզիայի հարազատ բնորոշող նշաններն են և նրա ապագա մեծ զարգացման գրավականը» (Բելինսկի, նույն տեղ, էջ 560):

Լերմոնտովի ինչպես ողջ ստեղծագործությունը, այնպես էլ նրա կովկասյան մոտիվները, խոր հետքեր են թողել ուսումնականության զարգացման վրա: Բազմաթիվ գրողներ տարբեր ձևերով արձագանքեցին Լերմոնտովի հովկասյան մոտիվներին:

Այս տեսակետից ուշագրավ են պոետ Յակով Պոլոնսկու կովկասյան բանաստեղծությունները, որոնք գրված են 40—50-ական թվականներին, երբ հեղինակը պաշտոնական ծառայության մեջ էր Թիֆլիսում: Պոլոնսկու ստեղծագործությունների մեջ մենք չենք նկատում Լերմոնտովին հուզող հասարակական քաղաքական հարցերի արժարժումը: Նա հանդես է գալիս որպես պաշտոնական վերաբերմունքի արտահայտիչ: Կովկասը նա ընկալում, վերընդունում է անձնական ապրումների և էստետիկական տրամադրությունների պրիզմայով: Նա հանդես է բերում հետաքրքրություն դեպի կովկասցիների կյանքն ու կենցաղը, նույնիսկ Վրաստանի անցյալից գրում է դրամա («Дареджан, царица Имеретинская»): Բայց նա գլխավորապես սահմանափակվում է բնության ու կենցաղի նկարագրությամբ: Այսպես են նրա «Զրոսանք Թիֆլիսում», «Վրացուհին», «Վրացական երգ», «Քարվան» և այլ բանաստեղծությունները: Ընդհանրապես պետք է նկատել, որ Պոլոնսկու ստեղծագործությունների

հիմնական թեման եղել է վրաստանը: Մեզ համար հետա-  
քրքիր է նաև պոետի վերաբերմունքը դեպի Սայաթ-Նովան:  
Վերջինիս ազդեցությունը ու նրա նմանողությունը նա գրել է  
մի բանաստեղծություն, որը կոչվում է «Սայաթ-Նովա»: Այդ  
բանաստեղծության հետ միասին նա մի ընդարձակ հոգված  
է գրել Սայաթ-Նովայի մասին, որը 1851 թվին տպվել է  
«Կովկազ» թերթում: Պոլոնսկին առաջինն էր, որ ուռա ըն-  
թերցողներին ծանոթացրեց Կովկասի մեծ պոետի կյանքին  
և ստեղծագործություններին:

Պոլոնսկուց բացի, Պուշկինի և Լերմոնտովի կովկաս-  
յան մոտիվներն իրենց խոր արձագանքն են գտել նաև Լև  
Տոլստոյի ստեղծագործությունների մեջ: Սակայն մեծ գրողը  
լինելով այլ էպոխայի ծնունդ և այլ աշխարհայացքի տեր,  
տարբեր մոտեցում է հանդես բերել Կովկասի նկատմամբ:

## VIII

Լեվ Տոլստոյը առաջինն էր ուռա գրողների մեջ, որ խոր-  
տակեց Կովկասի մասին ստեղծված ռոմանտիկական ու էք-  
զոտիկական պատկերացումը և տվեց այդ երկրի ռեալ նկա-  
րագիրը: Կովկասի ռեալիստական պատկերման ցայտուն  
տարրերը, ինչպես մենք նշել ենք, ուռա գրականության մեջ  
տեղ են գտել նաև մինչև Տոլստոյը: Հիշենք Պոլեժակին և  
Լերմոնտովին: Բայց ռեալիզմը, որպես իշխող որակ, որպես  
հիմնական մեթոդ լեռնային աշխարհի պատկերման գոր-  
ծում, հանդես է գալիս Տոլստոյի մոտ: Արդեն առաջին զին-  
վորական պատմվածքներում («Արշավանք», «Հանդիպում ջո-  
կատում մոսկովյան ծանոթի հետ», Սևաստապոլյան պատ-  
մվածքներ և այլն) Տոլստոյը որոշակի ռեալիստ արվես-  
տագետ է ներկայանում ընթերցողին: Նրան զբաղեցնում են  
ոչ թե վերացական ռոմանտիկական հերոսները, այլ իրա-  
կան մարդիկ իրենց խորը հոգեկան ապրումներով և բարո-  
յական դեմքով:

«Այդ երկու դժերը՝ հոգեկան աշարհի գաղտնի շարժում-  
ները խորապես գիտենալը և բարոյական զգացմունքների  
անմիջական մաքրությունը, — գրում է Չերնիշևսկին Տոլստոյի  
առաջին շրջանի գործերի մասին, — որոնք այժմ տալիս են

կոմս Տոլստոյի ստեղծագործություններին առանձնահատուկ ֆիզիոնոմիա, կմնան նրա տաղանդի էական գծերը, որպեսզի նոր կողմեր էլ երևան նրա հետագա զարգացման ընթացքում: Չերնիշևսկու այդ կանխագուշակումը հաստատվեց Տոլստոյի հետագա, հասուն շրջանի գրական գործունեությանը: Իրոք, մարդկային հոգու դիալեկտիկայի նկարագրությունը: և բարոյական զգացմունքների մաքրությունը հանդիսացան մեծ գրողի տաղանդի էական առանձնահատկությունները: Այդ հիմնական գործերը գրսևորվել են նրա դեռևս սկզբնական շրջանի գրվածքներում, Կովկասին նվիրված նրա ստեղծագործությունների մեջ:

Կովկասյան պատկերները մեծ գրողին զբաղեցրել են ոչ միայն այն ժամանակ, երբ նա ապրում էր այնտեղ (1851—53 թ. թ.) և, որպես ռուսական բանակի սպա՝ մասնակցում էր ճակատամարտերին, այլ կարելի է ասել, իր ամբողջ կյանքի ընթացքում: «Արշավանք» պատմվածքից հետո նա 1862 թվին ավարտում է դեռևս Կովկասում սկսած «Կազակներ» ընդարձակ վիպակը, 1872 թվին լույս է ընծայում «Կովկասի գերին» պատմվածքը, և 1904 թվին հիմնականում ավարտում է դեռևս 1896 թվին սկսած նշանավոր «Հաջի Մուրադ» վիպակը: Այս փաստերը վկայում են, որ Պուշկինի և Լերմոնտովի նման Կովկասյան տպավորություններն ու կերպարները չեն հեռացել մեծ վիպասանի ստեղծագործական հորիզոնից, սկսած նրա գրական գործունեության սկզբնական շրջանից մինչև կյանքի վերջին տարիները: Այդ թեմատիկայի հիման վրա Տոլստոյն արծարծել է իրեն հուզող շատ հարցեր, որոնք մարմնավորվել են իրական գեղարվեստական պատկերների մեջ: Իդեական այն բեկումն է, որ ապրեց Վեվ Նիկոլաևիչը իր կյանքի ընթացքում՝ ազնվականության դիրքերից նահապետական գյուղացիության դիրքերն անցնելով՝ արտահայտություն է գտել նաև Կովկասին նվիրված նրա գրվածքներում:

Իր զինվորական պատմվածքներում հեղինակը շոշափում է այն հարցը, թե ի՞նչ իմաստ ունի պատերազմը, ինչ



է քաջությունը, և ինչ է վախկոտությունը: Այս հարցերին նա պատասխանում է պատերազմական գործողութիւնների և կոնկրետ անձնավորութիւնների նկարագրութեան միջոցով: «Արշավանք» պատմվածքում խիզախ կապիտան Խոսովը պատասխանելով հեղինակի առաջադրած հարցին, ասում է. — «Ոչ, քաջը նա չէ, որ քիթը խոթում է այնտեղ, որտեղ նրան չեն հարցնում... Քաջը նա է, որ իրեն պահում է ինչպես հարկն է»: Հեղինակը արշավանքի, մարտական գործողութիւնների ընթացքում հետևում է կապիտանի վարքագծին, և նշում է. — «Նա պահում էր ճիշտ այնպես, ինչպես միշտ ես նրան տեսնում էի»: Միայն նրա հայացքի վրա նկատելի էր իր գործով զբաղվող հանգիստ մարդու ուշադրութիւնը: Արտաքինից նա մարտական տպավորութիւն չի թողնում, բայց հոգեբան արվեստագետի խորաթափանցութեամբ Տոլստոյը նկատում է նրա մեջ այնպիսի հատկութիւններ՝ պարզութիւն, հանգիստ շարժում, միահավասար ձայն և այլն, որոնք հերոսական են դարձնում նրան և հաստատում քաջութեան իր բնորոշումը: Մինչդեռ հեղինակը նկարագրում է նաև այլ սպաների. նրանք աշխատում են քաջ ձևանալ և անտեղի զոհվում են կամ աշխատում են նմանվել իրենց կարգացած զրքերի հերոսներին, Մաուլինսկու և Լերմոնտովի ուսմանտիկական կերպարներին: «Դա մեր երիտասարդ սպաներից, քաջ ջիգիթներից մեկն էր, պատմում է Տոլստոյը իր մի այլ հերոսի մասին, — որոնք կրթել են Մաուլինսկու և Լերմոնտովի համաձայն: Այդ մարդիկ նայում են Կովկասի վրա ոչ այլ կերպ, քան մեր ժամանակի հերոսների, Մուլա-Նուրերի և այլ պրիզմայի միջոցով և իրենց ողջ գործունեության մեջ նրանք ղեկավարվում են ոչ թե սեփական հակումներով, այլ այդ նմուշների օրինակով»: Տոլստոյը պսակադերժ է անում նման ուս սպաներին: Նրանց մոտ քաջութիւնը՝ դա ձև է, առանց կոնկրետ բովանդակութեան, արտաքին զարդ: Ստեղծելով զինվորականների տարբեր տիպեր, Տոլստոյը նրանց մեջ խորապես տարբերում է իսկական քաջութիւնը, որը ուս ռազմիկի էական

հատկությունն է, կեղծ, երևույթական քաջությունից ու վախ-  
կոտությունից: Մեծ վիպասանի մոտ քաջությունը չի հա-  
կադրվում մարդկանց ինտելեկտուալ հատկություններին,  
ինչպես այդ անում են գոհհիկ մտածողները, այլ, ընդա-  
կառակը, քաջությունն ուղիղ համեմատական է մարդու  
մտավոր կարողությանը: Որքան մարդ գաղափարական է և  
գիտե, թե ինչի համար է ինքը կռվում, այնքան նա քաջ է ու  
համարձակ իր գործողությունների մեջ:

«Հիշում եմ,— պատմում է «Հանդիպում...» պատմված-  
քի մի հերոսը,— ես մասնակցեցի Գուսակովի դեմ ուղղված  
վեճին և ծայրահեղության մեջ ընկա ապացուցելով, որ խել-  
քը և կրթությունը միշտ հակառակ հարաբերական են քա-  
ջությանը և հիշում եմ, թե ինչպես Գուսակովը հաճելի է  
խելոք կերպով ապացուցում էր ինձ, որ քաջությունը հան-  
դիսանում է խելքի և որոշ զարգացման անհրաժեշտ արդյուն-  
քը»: Սովետական ժողովրդի հայրենական մեծ պատե-  
րազմի հերոսների անմահ գործունեությունը հպատատում  
է Տոլստոյի հայացքների ճշմարտությունը: Միայն գաղա-  
փարապես կոփված, իր հայրենիքի աղատության ու անկա-  
խության կարևորությունը գիտակցող մարտիկն է ընդունակ  
մեծ սխրագործությունների:

Շոշափելով այդ հարցերը՝ երիտասարդ վիպասանն այն  
կապում է պատերազմի հետ: Լերմոնտովի նման Տոլստոյն  
էլ բացասաբար է տրամադրված դեպի պատերազմը, ո՞րն  
աններդաշնակություն է ստեղծում «հանգստացնող գեղեց-  
կությամբ և ուժով շնչող բնության» հետ:

«Պատերազմ. ի՞նչ անհասկանալի երևույթ է: Երբ բա-  
նականությունը քեզ հարց է տալիս՝ անհրաժեշտ է նա,  
ներքին ձայնը միշտ պատասխանում է՝ ո՛չ: Մի հանգամանք  
այդ անբնական երևույթը դարձնում է բնական, իսկ ինքնա-  
պահականման զգացմունքը՝ արդար»: Այս տողերից երևում  
է, որ Լև Տոլստոյը որքան էլ բացասաբար է տրամադրված  
դեպի պատերազմը՝ անբնական համարելով այն, բայց և

այնպէս իր գործունեության սկզբնական շրջանում վերջին հաշվով արդարացնում էր պատերազմը՝ լեռնականների դեմ, համարելով այն ինքնապաշտպանության միջոց: Այսպիսի մոտեցումը որոշակի տուրք էր պատերազմի պաշտոնական մեկնաբանությանը, որ տվել է երիտասարդ գրողն իր գործունեության վաղ շրջանում: Այդ երիտասարդական «մեղքերը» հետագայում նա քաղել է նրանով, որ անողորմ քննադատության է ենթարկել Կովկասի բռնի նվաճման նիկողաեյան քաղաքականությունը: Այս մասին դեռ խոսք կլինի՝ «Հաջի Մուրադի» վերլուծության ժամանակ: Այստեղ միայն պետք է նշել, որ Լեւի Տոլստոյը անձամբ դիտելով ռուս ռազմիկների վարքագիծը՝ պատերազմի պայմաններում, գեղարվեստական ընդհանրացման է ենթարկել իր տպավորությունները: Արդեն Կովկասյան պատմվածքներում ու սեփոստոպոլյան ակնարկներում Տոլստոյը առանձին գրծերով տալիս է ռուս ռազմիկի հայրենասիրության ու քաջության առանձնահատկությունները: Հեղինակը խոր տարբերություն է դնում քաջությունը տպավորիչ խոսքերով արտասանելու ֆրանսիական սովորության և ռուս կապիտան իշխովի քաջության միջև, որը ուժեղ խոսքեր չի արտասանում գործելիս: «Նախ այն պատճառով, որ ուժեղ խոսք ասելով նա կվախենար դրանով փշացնել մեծ գործը, ապա նրա համար, որ մարդ երբ իր մեջ զգում է մեծ գործ կատարելու ուժ, ոչ մի խոսք հարկավոր չէ: Դա, իմ կարծիքով ռուսական քաջության առանձնահատուկ և վեհ գիծն է», եզրակացնում է Լեւի Տոլստոյը: Այդ բոլորի մեջ չի կարելի շտեմանել մեծ արվեստագետի խոր հայրենասիրությունը և ազգային հպարտության զգացմունքն ռուսական քաջության նկատմամբ, որոնք այնքան ցայտուն ձևով մարմնացան նրա անմահ «Պատերազմ և խաղաղություն» վեպում:

Լեւի Տոլստոյի պատերազմին դեմ էր և նույնիսկ առաջին շրջանում նա թշնամություն չի ունեցել լեռնականների նկատմամբ: Արդեն «Կազակներ» վիպակում նա շատ բաներ

վերանայում է իր հայացքների մեջ և խոր համակրանքով է խոսում լեռնականների մասին: Առաջին իսկ պատմվածքներում ու վիպակներում Տոլստոյի հիմնական մեթոդը՝ մարդկանց բնավորությունների գծագրման ու դեպքերի նկարագրության ասպարիզում եղել է ռեալիզմը: «Կազակներն» այդ տեսակետից բնորոշ գործ է: Այստեղ Կովկասի մասին եղած ռոմանտիկական պատկերացման խորտակումը հասցրված է իր վախճանին: Արտասովոր հերոսների փառավոր ու էկզոտիկ պատկերներին հակադրված են իրական դեմքեր ու ռեալ կյանքը:

Վիպակի հերոս Ալենինը հարուստ ազնվական երիտասարդ է: Հիասթափված ու հոգնած անբովանդակ կյանքից՝ նա ցանկանում է հեռանալ բարձր աստիճան հասարակությունից՝ ղինվորական ծառայության մեկնելով Կովկաս: Ճանապարհին մտքերով փոխադրվում է «առասպելական Կովկասը»: Այդ երկրի մասին նրա ունեցած հայացքները ձևակերպվել են Մառինսկու ռոմանտիկական վիպակների ազդեցության տակ: «Այժմ արդեն պատմում է Տոլստոյը, — նրա երևակայությունը ապագայումն էր, Կովկասում: Բոլոր երազներն ապագայի մասին միանում էին Ամմալաթ բեկերի, չերքեզուհիների, լեռների, փլվածքների, ռարսափելի հեղեղատների և վտանգավոր պատկերներին: Այդ բոլորը պատկերում է մութ, անորոշ, բայց հրապուրող փառքը և սպանացող մահը կաղմում էին այդ ապագայի հետաքրքրությունը»:

Այսպիսի ռոմանտիկական պատկերացում ուներ Ալենինը Կովկասի մասին, երբ նա բնակություն հաստատեց Թերեքի կազակների ստանիցայում և մոտիկից ուսումնասիրեց կազակների պարզ կյանքն ու կենցաղը և սիրեց այն: Այդ պարզ կյանքը, բնության հետ ձուլված մարդկանց կյանքը հեղինակը հակադրում է բարձր աստիճան հասարակությանն ու բուրժուական քաղաքակրթությանը:

«Ձեզ մոտ կեղծ է, ամեն ինչ կեղծ է» — ասում է ծերունի Երոշկան Ալենինին, և վերջինս համաձայն է այդ



հաղթակացությանը: Ալեհինը համակրում է կազակների կյանքի պարզ ձևերն ու բնականությունը, նա ցանկանում է ձուլվել կազակներին, ապրել նրանց հետ մի կյանքով: Ալեհինն զգում է իրեն շրջապատող կազակների առավելություններն իր նկատմամբ նրանց գեղեցկությունը, ուժն ու անկախությունը, նրանց բնավորությունների ամբողջականությունը: Այս միջոցով հեղինակը բացահայտում է իր հերոսի երկվությունը:

Զգալով հանդերձ բարձրաստիճան հասարակության աշխանդակ ու զզվելի կողմերը՝ Ալեհինը, սակայն, անկարող է դտնվում, շնայած իր բուռն ցանկությանը, ձուլվել կազակների պարզ ու նահապետական կյանքին: Հին տրագիկոսներն ու սովորությունները կաշկանդում են նրան: Դա էլ հանդիսանում է նրա տրագիկոսն: Նա ցանկանում է կտրել կապերը բարձրաստիճան հասարակության հետ, բայց լինելով բնավորությամբ թույլ ու անկազմակերպ՝ նա անկարող է լինում հաղթահարել իրեն սնուցած հասարակության ճնշումը և չի կարողանում համակերպվել նոր շրջապատին: Նրա փորձերը ամուսնանալու Մարինայի հետ, որին նա սիրում էր, անհաջողությամբ են վերջանում: Մերժվելով կազակուհուց, որը սիրում էր Լուկաշկային, նա հեռանում է ստանիցայից խորապես միայնակ ու հիասթափված: Դա Ալեհինի անձնական տրագիկոսն է, որը վարպետությամբ նկարագրել է մեծ ռեալիստը: Այդ տիպը որոշ ինքնակենսագրական գծեր է պարունակում իր մեջ:

Ալեհինը մոտիկից ծանոթանալով կովկասյան ժողովուրդների կյանքի պայմաններին, անմիջապես շփվելով կազակների հետ և դիտելով նրանց ու աբերքների փոխհարաբերությունը, այլ պատկերացում է կազմում այդ երկրի մասին: Երևակայական Կովկասի պատկերները փրվում են դիպչելով իրական կյանքին, ռոմանտիկան տեղիք է տալիս ռեալիզմին:

«Կովկասը նրան ներկայացավ բոլորովին այլ կերպ, քան Երևակայում էր: Նա այստեղ ոչինչ չգտավ,— պատմում է

Տոլստոյը, որ նման լիներ իր երազներին և Կովկասի՝ իր լսած ու կարդացած նկարագրութեանը: Չկան այստեղ յափընջիներ, հեղեղատներ, Ամմալաթ բեգեր, հերոսներ ու շաքոբոծներ, — մտածում էր նա: Մարդիկ ապրում են, ինչպես բնությունն է ապրում, մեռնում են, ծնվում, զուգավորվում են, նորից ծնվում, կռվում են, խմբվում, ուտում, ուրախանում են և կրկին մեռնում, ու ոչ մի պայման բացառությամբ այն անփոփոխելի պայմանների, որ դրել է բնությունը արեւին, խոտին, գազանին, ծառային: Սրանք ուրիշ օրենքներ չունեն...»:

Ստեղծելով իրական կյանքի պատկերներ՝ հեղինակը խորը համակրանքով է ներկայացնում կազակներին, որոնք նրա մոտ դուրս են եկել ուժեղ ու ամբողջական բնավորություններ: Հատկապես Տոլստոյը հիանում է Լուկաշկայի կերպարով, որը քաջ ու խիզախ կազակ է և արժանի է Մարինայի սիրուն: Կազակների դրական բնավորությունների հետ միասին, բնավորություններ, որոնք հակադրված են Ալեքսինի ներքին թուլությանը, — Տոլստոյը համակրանքով է պատկերել նաև արբեկներին, լեռնականներին, որոնք խիզախությամբ վրեժ են լուծում կազակներից սպանված շերքեզի համար: Դժվար չէ նկատել, որ արբեկների ու կազակների այդ ընդհարումը արտաքին պատճառներից է բխում, արհեստական ուժերի արդյունք է:

Իրականում այդ երկու ռազմասեր ժողովուրդների միջև գոյություն ունի սեր ու բարեկամություն:

Չնայած այդ բարեկամությանն ու հարազատությանը՝ կազակների ու լեռնականների միջև տեղի էին ունենում ընդհարումներ, որոնք արտաքին ուժի արդյունք էին և կատարվում էին իշխող դասակարգերի, ցարիզմի դրդմամբ: Տոլստոյը նկարագրելով մի այդպիսի ընդհարում, բնավ բացասական վերաբերմունք չունի դեպի լեռնականները: Ընդհակառակը՝ «Կազակը, — ասում է Տոլստոյը, — իր խառնվածքով ավելի քիչ է ատում իր հղբորն սպանող ջիգիթ լեռնականին, քան զինվորին, որ մնում է նրա տանը որպեսզի պաշտպանի նրա ստանիցան... նա հարգում է թշնամի լեռնակա-

ներն, բայց արհամարհում է իրեն օտար ու ճնշող զինվորին»:

Դեպի Կովկասցիներն ունեցած այդ դրական վերաբերմունքն ավելի խոր ու ցայտուն կերպով դրսևորել է «Հաջի Մուրադ» վիպակում, որի մասին մենք դեռ կխոսենք: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել մեծ գրողի մի այլ գրվածք, որը Կովկասի ռեալիստական պատկերման մի ցայտուն արտահայտություն է հանդիսանում: Ես նկատի ունեմ մանուկների համար գրած նրա «Կովկասի գերին» պատմվածքը: Վերնագրով և նկարագրված էպիզոդով նա հիշեցնում է Պուշկինի հայտնի պոեմը: Սակայն Տոլստոյը գերության մեջ եղած ուսւ սպայի դեպքը ռեալիստորեն է նկարագրել: Պատմվածքի հերոս Ժիլինը հասարակ ուսւ սպա է և անստարքեր է պատերազմի ու քաջագործությունների նկատմամբ: Մորից նամակ ստանալով, նա շտապում է վերադառնալ տուն, բայց գերի է ընկնում:

«Տոլստոյը, ինչպես նկատում է էյխենբաումը, կարծես թե Պուշկինի հետ վեճի կամ մրցման է մտնում: Նա ուզում է ցույց տալ, որ միևնույն նյութը կարելի է պատմել հասարակ, առանց բանաստեղծական գեղեցկացումների ու շափազանցությունների, այնպես որ բոլորը կարողանան այն հասկանալ և՛ կրթվածները, և՛ ոչ կրթվածները, և՛ հասակավորները և՛ երեխաները»:

Տոլստոյը ռեալիստական ցայտուն գույներով նկարագրում է Ժիլինի դեմքը, ապրումներն ու զբաղմունքները՝ գերության մեջ և նրա փախուստի փորձերը, որից միայն երկրորդն է հաջողությամբ վերջանում: Ինչպես Կովկասին նվիրված մյուս գրվածքներում, այնպես էլ այս պատմվածքի մեջ, Տոլստոյը հակադրվում է Կովկասի «պայմանական, չափազանցած ու փառահեղ» նկարագրության տրադիցիային:

Տոլստոյի անողոր ռեալիզմը ավելի ցայտուն է արտահայտվել նրա լավագույն գրվածքներից մեկում — «Հաջի Մուրադ» վիպակում: Այդ գրվածքը նվիրված է լեռնականների պայքարի նկարագրությանը:

Հաջի Մուրադը Շամիրի գլխավոր գորավարն էր և քաջ

մարտիկ: Բանսարկությունների պատճառով Շամիրը կասկածում է նրա հավատարմությանը և ցանկանում է նրան ձերբակալել: Խուսափելով Շամիրի և նրա մարդկանց հետապնդումներից՝ Հաջի Մուրադն անձնատուր է լինում ռուսներին, տեսակցում է փոխարքա Վորոնցովի հետ և շփվում է նրա շրջապատի մարդկանց հետ: Նա ցանկանում է ռուսների օգնությամբ պատժել Շամիրին և ազատել գերության մեջ մնացած իր ընտանիքը: Բայց Հաջի Մուրադի հույսերը չեն արդարանում: Նա փորձում է փախչել ռուսներից՝ ընտանիքն ազատելու համար: Նրան հետապնդում են և նա ուժեղ դիմադրություն ցույց տալուց հետո հերոսաբար մեռնում է: Վիպակում նկարագրված է Հաջի Մուրադի կյանքի այդ պատմությունը և դրանում ակնբախ երևում է հեղինակի՝ դեպի լեռնականներն ու Հաջի Մուրադն ունեցած համակրանքը: Այդ վերաբերմունքը նա արտահայտում է գեղարվեստական կոնտրաստների իր սիրած պրիոմի միջոցով:

Շամիրին նա հակադրել էր Նիկոլայ Թադավորին: Վերջինիս կյանքը նկարագրված է սարկազմով և ատելությամբ: Նա անողորմ քննադատության ու ծաղրի է ենթարկել նրա ռազմական ծրագրերը և մերկացրել այլասերված կենցաղն ու դաժանությունը: «Նրա ամբողջ կյանքը, — գրում է Տոլստոյը Նիկալայի մասին, — սկսած այն զարհուրելի ժամից, երբ նա հրաման տվավ կարտեշով կրակել Սենատի հրապարակում հավաքված ամբոխի վրա, մի անընդհատ և սարսափելի ոճրագործություն է»:

Լեռնականների դեմ շարունակվող պատերազմը, ըստ Տոլստոյի, այդ ոճրագործությունների թվին է պատկանում: Վաղուց հաղթահարած լինելով երիտասարդական շրջանի ըմբռնումները կովկասյան պատերազմի մասին՝ Տոլստոյը հետագայում այդ պատերազմը առանց վարանելու դատապարտում է, և սիրով է խոսում իրենց անկախությունը պաշտպանող կովկասյան ժողովուրդների, նրանց քաջության ու հերոսության մասին: Այս տեսակետից հատ-



Վապես ուշադրավ է Հաջի Մուրադի կերպարի կերտումը, որը կատարված է մասամբ իր անձնական տպավորությունների և մասամբ էլ ուսումնասիրած նյութերի հիման վրա: Յայտուն է դժագրած Հաջի Մուրադի դիմանկարը: Նա հասն է գալիս որպես խելոք ու քաջ ռազմիկ և միաժամանակ վեհանձն ու հպարտ անձնավորություն: Հաջի Մուրադի նրկատմամբ եղած այդ համակրանքը որոշակի արտահայտություն է ստացել վիպական: Զինվորները երբ լսում են Մուրադի ռուսների կողմն անցնելու մասին, աշխույժ արձագանքում են դրան. նրանցից մեկն ասում է «Շամիլի առաջին հրամանատարն է եղել: Իսկ հիմա վախ չկա»: Իսկ երկրորդն ավելացնում է. «Բայց կտրիճ է, ինչ ասել կուզի, ջիզիթ է»: Զինվորների հետ միասին, Հաջի Մուրադի քաջասրտությունը, խելքն ու վեհանձնությունն են դրվատում նաև բարձր աստիճան հասարակության ներկայացուցիչները, փոխարքա Վորոնցովի «հյուրերը»: Բայց ավելի հետաքրքիր է ռուս սպայի կնոջ՝ Մարիա Դիմիտրևիչնայի և երիտասարդ ռուս սպա Բուտլերի վերաբերմունքը: Առաջին իսկ հանդիպումներից Բուտլերը և Հաջի Մուրադը փոխադարձաբար համակրում են իրար և բարեկամանում, իսկ Մարիա Դիմիտրևիչնան հարգանքի ակններև զգացմունքներ է տածում դեպի Հաջի Մուրադը: «Մի շաբաթ մեզ մոտ ապրեց, բացի լավությունից ուրիշ ոչինչ չտեսանք,— ասում է նա,— վարվեցող է, խելացի և արդարամիտ»: Երբ վերջում բերդ են բերում Հաջի Մուրադի կտրված գլուխը այդ երիտասարդ կինը արտասվաթոր աչքերով ու զայրույթը սրտում ասում է սպաներին.— «Դուք բոլորդ մարդասպաններ եք, տանել չեմ կարող, մարդասպաններ, ճշմարիտ... ավելի ոչինչ»:

Այս բոլորի մեջ պարզ արտահայտված է համակրանքի զգացմունքը դեպի Հաջի Մուրադը, բայց դա հարցի մի կողմն է, և հեղինակը դրանով չի սահմանափակվել: Հաջի Մուրադի կերպարն ավելի կենդանի ու ջերմ դարձնելու համար, Տոլստոյը հատուկ ուշադրություն է դարձրել նրա հոգեբանական ապրումների ու կենցաղային սովորություննե-

բի նկարագրության վրա: Իր հերոսի վարքագիծը մեծ գրողը պատճառաբանել է այդ տվյալներով: Հաջի Մուրադին զբաղեցնողը նրա մտորումների առարկան՝ իր ընտանիքն է, Շամիլի մոտ պատանդ մնացած որդին և դերության մեջ տառապող կինը՝ մյուս երեխաների հետ միասին: Ընտանիքի ճակատագրին վերաբերող ապրումները հիմնական տեղ են գրավում Հաջի Մուրադի մոտ, այդ հոգեբանական ապրումների համար հեղինակը ստեղծել է համապատասխան կենցաղային ֆոն և օգտագործել է լեռնականների ժողովրդական պոեզիան, որի մասին Տոլստոյը հիացմունքով է արտահայտվել համարելով այն «անսովոր բանաստեղծական գանձ»: Այդ երգերից մեկը, որը նվիրված է վրիժառությանը, ազատ փոխադրությամբ մեջ է բերված վիպակի 20-րդ գլխում:

«Գերեզմանիս հողը կշորանա, և դու ինձ կմոռանաս, մա՛յր իմ հարազատ: Շիրիմների խոտով գերեզմանոցը կծածկվի, և խոտը կխլացնի վիշտդ, հա՛յր իմ ծերունի: Քրոջս աչքերում արտասուքը կցամքի և վիշտը նրա այտիցը կթռչի...

Տաք ես դու, ո՛վ գնդակ, և մահաբեր, բայց արդյոք դո՞ւ չէիր իմ հավատարիմ ստրուկը: Սե՛ հող, դու ինձ կծածկես, բայց արդյոք ե՞ս չէի ձիով քեզ կոխտտում: Սառն ես դու, ո՛վ մահ, բայց ես քո տներն էի:

Հողն իմ մարմինը կվերցնի, երկիրը հոգիս կընդունի: Իր ժամանակին բանաստեղծ Ֆետը այդ երգի արձակ թարգմանությունը վեր է ածել չափածոյի.—

Станет насыпь могилы моей просыхать,—  
И забудешь меня ты, родимая мать;  
Как заглушит трава все кладбище в конец,  
То заглушит и скорбь твою, старый отец;

А обсохнут глаза у сестры у моей,  
Так и вылетит горе из сердца у ней.

Ты, горячая пуля, смерть носишь с собой,  
Но не ты ли была моей верной рабой?

Земля черная, ты ли покроешь меня?  
Не тебя ли топтал я ногами коня?  
Холодна ты, о, смерть, даже смерть храбреца;  
Но я был властелином твоим до конца.

Свое тело в добычу земле отдаю,  
Но зато небеса примут душу мою.

Լեռնականների այդ երգը խոր արձագանք է գտնում Հաջի Մուրադի խռովահույզ հոգում և նրա մեջ վերակենդանացնում անցյալի հուշերը: Նման միջոցներով հեղինակը մաքսիմալ էֆեկտի է հասնում հերոսի կերպարի կերտման ասպարիզում, այն դարձնելով ջերմ ու կենդանի:

Այս բոլորը որոշակիորեն հաստատում են Տոլստոյի դեպի կովկասյան ժողովուրդները ունեցած համակրանքը և հատկապես Հաջի Մուրադի անձնավորությունն ունեցած բուն հետաքրքրությունը:

Նրա համար լեռնական ժողովուրդների քաջությունն ու հերոսությունը կասկածից դուրս է եղել: Այդ երևում է ոչ միայն Հաջի Մուրադի և նրա կողմնակիցների մահը նկարագրելիս, որոնք հակառակորդի գերազանց ուժերի դեմ կռվում են մինչև վերջին շունչը, այլև հեղինակի համակրանքն արտահայտող՝ Բուտլերի կերպարի միջոցով: Բուտլերը ուսու բանակի սպա է. Պետերբուրգում եղած ժամանակ նա թղթախաղում տանուլ է տալիս իր վերջին ունեցածը և թղթախաղի դալթակությունից խուսափելու համար, գլխարկից դուրս դառնալով ծառայության է մեկնում կովկաս: Այս նոր վայրն իր պատերազմական գործողություններով համընկնում են Բուտլերի տրամադրություններին: Ընդհանրապես կովկասը, նրա քաջ զավակներն ու գեղատեսիլ բնությունը իրենց արտասովոր պոեզիայով ներդաշնակում են

հերոսի կենսութիւն ու ուժանտիկ բնավորութեանը: Նա շատ ուրախ է, որ դուրս է եկել Պետերբուրգի բարձրաստիճան սպայական միջավայրից և ապրում է «այստեղ, այս սքանչելի երկրում, կտրիճ կովկասցիներէ շրջանում»:

«Բուտլերը նայում էր այդ սարերին, լիաթոք օդ էր ծրծում և ուրախանում, որ նա ապրում է, ապրում է հենց ինքը և այն էլ այդ գեղատեսիլ վայրում»: Բուտլերին չեն զբաղեցնում պատերազմի սարսափները: Նա այդ մասին բնավ չի էլ մտածում և աշխատում է չխորտակել պատերազմի մասին ունեցած «իր բանաստեղծական պատկերացումը»: Նա վայելում է շրջապատի համակրանքն իր քաջութեամբ ու ազնվութեամբ: Պատերազմը, կռիվը նրա տարերքն է, նա մահից չի վախենում: Հեղինակն ասում է. «Բուտլերի միակ մխիթարութիւնն այդ ժամանակ ռազմական պոեզիան էր, որին նա անձնատուր էր լինում ոչ միայն ծառայութեան ժամանակ, այլև մասնավոր կյանքում: Չերքեզի շորեր հագած՝ նա ձիով ջիզիթութիւն էր անում»: Այս տողերի մեջ զգացվում է Տոլստոյի դրական վերաբերմունքը դեպի այդ երիտասարդ ուռւ սպան. ջերմութեամբ կերտելով նրա կերպարը՝ հեղինակը զգալի տեղ է հատկացնում նաև ուռւ զինվորների կովկասյան կյանքի նկարագրութեանը:

«Հաջի Մուրադը» և Տոլստոյի կարևոր գործերից է: Պատմական ու գեղարվեստական մեծ արժանիքների հետ միասին այդ վիպակն ունի միաժամանակ փիլիսոփայական էություն, որ պարզորոշ արտահայտված է առաջաբանի մեջ: Տոլստոյը Հաջի Մուրադի կյանքը համեմատում է այն վայրի ծաղիկի հետ, որը հեշտութեամբ անձնատուր չի լինում իրեն պոկողին և թանգ է ծախում իր կյանքը: Հեղինակը ճանապարհով անցնելիս, տեսնում է թաթար կոշված գեղեցիկ ծաղիկը և ցանկանում է քաղել ու միացնել իր ծաղիկփնջին: Բայց ծաղիկը դիմադրում է, նա հեշտութեամբ չի ցանկանում զրկվել իր կյանքից և ծախոտում է իրեն քաղողի ձեռքերը: «Նրբ, վերջապես, ծաղիկը պոկեցի, պատմում է Տոլստոյը, — ցողունն արդեն զգզված էր և ծաղիկն



էլ աշնպես թարմ ու գեղեցիկ չէր թշնամ: Բացի դրանից իր կոպտությամբ և տձեռությամբ փնջի քնքույշ ծաղիկներին չէր հարմարվում: Ես ափսոսացի, որ զուր տեղը փշացրի այն ծաղիկը, որն իր տեղումը լավ էր, ու դեն ձգեցի: «Բայց կյանքի որպիսի՝ եռանդ և ուժ», մտածեցի ես հիշելով այն ձիգները, որ դործադրեցի ծաղիկը պոկելու վրա: «Ի՛նչպես էր նա բռնուն ուժով պաշտպանվում և ի՛նչ թանգ ծախեց իր կյանքը»:

Այս տողերում բացահայտված է վիպակի խոր փիլիսոփայական իմաստը, այն է՝ ծաղկի նման Հաջի Մուրադը և ընդհանրապես յուրաքանչյուր մարդ «պաշտպանում է կյանքը մինչև վերջը», ինչպես գրել է Տոլստոյն իր օրագրում 1896 թվի հուլիսի 19-ին: Այս գաղափարը արմատապես հերքում է Տոլստոյի կրոնաբարոյագիտական ուսմունքը, չարին չհակառակվելու սկզբունքը: Գուցե հենց դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ հեղինակն անհրաժեշտ չի գտել հրապարակել այդ վիպակը իր կենդանության ժամանակ: Այս ենթադրությունը շատ հավանական է: Իրոք, խոր համակրանքով ու սիրով է կերտված Հաջի Մուրադի կերպարը, որն աշնպես համարձակությամբ «պաշտպանում է իր կյանքը մինչև վերջ» և աղաղակող հակասության մեջ չարին չհակառակվելու տոլստոյական ուսմունքի հետ: Բայց այդ հակասությունը նորություն չէ: Մեծ գրողի գեղարվեստական ստեղծագործությունների օրեկտիվ իմաստի և նրա կրոնաբարոյագիտական ուսմունքի միջև եղած այդ հակասությունը ժամանակին նշել է Մաքսիմ Գորկին՝ ուսու գրականության մասին կարդացած իր դասախոսությունների մեջ: «Տոլստոյի ողջ գեղարվեստական ստեղծագործությունները գրված ահռելի ու հիանալի ուժով,—ասում է Մաքսիմ Գորկին,—նրա բոլոր վեպերն ու վիպակներն արմատապես թխտում են նրա կրոնական փիլիսոփայությունը»: Համարձակ «ապագակ» Հաջի Մուրադի կյանքի պատմությանը նվիրված այս վիպակը, որը միաժամանակ ցայտուն հակացարակա՛ն բովանդակություն ունի, այդ թեզի լավագույն ապացույցը կա-

դող է հանդիսանալ: Գորկու այդ խոսքերով կարող ենք եզրափակել ևև Տոլստոյի Կովկասին նվիրված ստեղծագործությունների բնութագիրը: Այդ ստեղծագործություններն իրենց անողոր օհալիզմով և խորը գաղափարականությամբ նոր էջ բաց արին Կովկասի ժողովուրդների կյանքի ու հերոսական պայքարի գեղարվեստորեն պատկերման պատմության մեջ: Այդ երկերը, ինչպես մի կաթիլ ջուր անդրադարձրել են հեղինակի աշխարհայացքի մեջ տեղի ունեցած խոր բեկումը, որը հանճարեղ կերպով բացահայտված է մեծ գրողին նվիրված Լենինի հոդվածներում: Կովկասի ժողովուրդների պայքարի ու պատերազմական տեսարանների այդ ռեալիստական նկարագրությունները կարևոր տեղ են գրավում ոչ միայն հեղինակի, այլև ռուսական և եվրոպական գրականության մեջ:

## IX

Կովկաս այցելած ռուս գրողների մեջ կարևոր դեմք է հանդիսանում Վալերի Բրյուսովը, նրա անունը հայ գրականությամբ ու պատմությամբ զբաղվողներին շատ լավ հայտնի է: Մեր գրականությունը շատ բանով է երախտապարտ այդ ականավոր պոետին ու խոշոր գիտնականին: Բրյուսովը հայկական պոեզիայի իր հայտնի թարգմանություններով, իր խմբագրած պոեզիայի անտոլոգիայով և ներածական ակնարկով հայկական պոեզիան դարձրեց ռուս և այլ ժողովուրդների սեփականությունը: Նրա ջանքերի շնորհիվ հայկական պոեզիան ազգային սահմաններից դուրս եկավ և գրավեց իր պատվավոր տեղը համաշխարհային պոեզիայի պատմության մեջ: Այդ բոլորը բավական լուրջ նախապատրաստական աշխատանքի արդյունք էր: 1916 թվին Վ. Բրյուսովը գալիս է Թբիլիսի և ձեռնարկում է հայկական պոեզիայի թարգմանությանը: Բրյուսովի աշխատանքները՝ զուգորդվում էին հայ ժողովրդի պատմության ու կուլտուրայի բազմակողմանի ու խոր ուսումնասիրությամբ: Այդ նպատակով նա նույնիսկ սովորում է հայերեն լեզուն: Թե պատասխանատվության ինչպիսի զգացմունքով ու սիրով է նա մոտեցել ստանձնած գործին, այդ երևում է հայ

ժողովրդի պատմության ու պոեզիային նվիրված նրա փայ-  
լուն ուսումնասիրություններից: Ես նկատի ունեմ «Հայ ժո-  
ղովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը» աշխա-  
տությունը և «Հայաստանի պոեզիայի» անսովորաշատ ներա-  
ծական ակնարկը: Այս աշխատությունների մեջ Վ. Բրյուսո-  
վը հանդես է բերում գիտնականի խոշոր էրոդիցիա և պոե-  
տական բարձր ճաշակ՝ գրական արժեքների գնահատության  
ասպարեզում: Մոտիկից ծանոթանալով և ուսումնասիրելով  
իրեն զբաղեցնող նյութը, Բրյուսովն անկեղծ կերպով ոգե-  
վորվում է հայկական կուլտուրայի ու գրականության ան-  
մահ գանձերով: Նա ոչ միայն ըստ արժանվուն գնահատեց  
հայ ժողովրդի հերոսական պայքարն իր ազատության ու ան-  
կախության համար, այլև վեր հանեց հայկական կուլտու-  
րայի համաշխարհային նշանակությունը, ցույց տվեց այդ  
ժողովրդի դերը մարդկային կուլտուրայի զարգացման պատ-  
մության մեջ: «Մինչդեռ հայերը, — գրում է Բրյուսովը, —  
մեր և ողջ աշխարհի ուշադրությանն ավելի բարձր իրավունք  
ունեն այն բարձր կուլտուրայով, որ հայ ժողովուրդը մշա-  
կել է իր անկախ գոյության երկար դարերի ընթացքում, և  
այն բացառիկ հարուստ գրականությամբ, որ կազմում է  
Հայաստանի թանկարժեք ավանդը մարդկության գանձարա-  
նին»: Այս է այն հիմնական եզրակացությունը, որին հան-  
գում է Բրյուսովն իր ուսումնասիրության ընթացքում: Հայ  
ժողովրդի հերոսական պայքարի և նրա ստեղծած բարձր  
կուլտուրական արժեքների նկատմամբ ունեցած այդ ոգևո-  
րությունն իր բանաստեղծական արտահայտությունն է ստա-  
ցել Բրյուսովի պոեզիայում:

«Девятая Камена» («9-րդ Կամենա») գրքի մեջ բա-  
նաստեղծությունների մի ամբողջ շարք նա նվիրել է կով-  
կասյան ժողովուրդներին: Բրյուսովը պատմական տեսան-  
կյունով է նայել հարցին: «Բաքվում», «Բաքու», «Թբիլիսիում»  
և այլ բանաստեղծությունների մեջ Բրյուսովն ուշադրությոն  
է դարձնում այդ քաղաքների հեռավոր պատմական անցյա-  
տին և ոչ արդիականությունը: Նա ոգևորված է կովկասյան  
ժողովուրդների պատմական հերոսկայով: «Թբիլիսիում»

բանաստեղծութեան մեջ, նա վերհիշում է պատմութեան խաչ-  
տարդետ ավանդությունները, Թամար թագուհու դարն իջ  
աղմկոտ գործերով և Սայաթ-Նովայի ժամանակները:—

Վերհուշերի մեջ, երազանքներում  
Փնտրել բեկորներն անցած դարերի,  
Թամարի դարը գործերով թնդուն  
Նվ դարը՝ գերող Սայաթ-Նովայի:

Ավանդություններն հիշել շարիշար,  
Դարերի հնամուրն այն խայտանկար,  
Ու խոր հայացքով նայել վերստին  
Ձյունապատ լեռանց սուր դագաթներին:

Նվ ստեղծում է ցայտուն պատկերներ. —

Արարատի դեմ կանգնած է փառքով,  
Ձյունապատ, շողուն լեռը—Արագած,  
Ու որպես մի կույս թափով պսակված,  
Նայում է ծերին անփթիթ աչքով:

«Հաղթանակ Կարի մոտ» («Победа при Каррах») բա-  
նաստեղծութեան հիմքում ընկած է պատմական եղելութու-  
նը: Բրյուսովը գովերգում է հայկական զորքերի հաղթու-  
թյունը հռոմեական լեգիոնների դեմ, և նկարագրում է, թե  
ինչպես հռոմեական զորավար Կրասոսի զուլի: Նվեր տարվեց  
Արտաշես հայկական թագավորին: Հայ ժողովրդի պատմու-  
թեան այդ հերոսական դրվագը ցայտուն գույներով ու հը-  
պարտութեամբ է նշված հիշյալ բանաստեղծութեան մեջ:

Ընդհանրապես պետք է նկատել, որ Բրյուսովը ոչ մի-  
այն իր պատմական ու գրական ուսումնասիրությունների,  
այլև իր բանաստեղծությունների մեջ անկեղծ ոգևորությամբ  
է խոսում հայ ժողովրդի պայքարի և նրա կերտած բարձր  
կուլտուրայի ու գրականության մասին: Այդ տեսակետից  
ուշագրության արժանի է նրա «Հայերին» ուղերձը, որի մեջ  
նա բանաստեղծական վառ պատկերներով դրսևորել է իբ-



ջերմ սերն ու համակրանքը հայերի նկատմամբ, բացատրել  
իր դրական վերաբերմունքը: Այդ ցայտուն բանաստեղծու-  
թյամբ հեղինակը վերհիշում է հայ ժողովրդի հեռավոր  
անցյալը և այն փոթորիկները, որոնք եկել ու անցել են  
հրա խռովահույզ լեռներով:

Իրարամերժ զույգ աշխարհքի  
Մեջտեղն եք միշտ եղել կանգուն.  
Ձեր հայրենի ասքի խորքից  
Դարերն են հին արձագանքում:

Գլխովն են ձեր անցել անդու  
Փոթորիկներ միշտ նորանոր—  
Նվ Կյուրոսի որտա՞ր խույ,  
Ալեքսանդրի դռույթը գոռ:

Բայց այդ բոլորը չեն ընկճել հայերին: Հայ ժողովուրդը  
ոչ միայն մարտական դիմադրություն է ցույց տվել ահեղ  
փոթորիկներին, երբ ցեղեր շղիմանալով հիմնահատակ կոր-  
ծանվեցին, այլև անշեշ է պահել ստեղծագործական հուրը.—

Ընդվրդումով Հռոմի հրպարա  
Յաժ բերեցիք դուք զենքն ու զարդ.  
Հուստինյանի մարտին ահեղ  
Գընդերն ելան ձեր փառահեղ:

Հողմից գարնան ծաղիկն ինչպես—  
Թեքվել է ձեր գլուխը վես.  
Տեսաք Չինգիզ, Թեմուրն անգույթ,  
Կիսալուսնի խրախճանքը մութ:

Ձեր շուրջն երկու աշխարհ եռուն  
Բնաջինջ եղան խուլ պալքարում.  
Բայց չըզորեց ոչ մի շար բախտ  
Ընկճել մարտիկ ոգին ձեր հաղթ:

Նա ղերթ հըղկված քարն ակմաղի  
Շողքերն ամեն պահեց իր մեջ—  
Եվ վարդի բույրը Շիրազի  
Եվ հոմերյան ճաճանչն անշեշ:

Այս բոլորից հետո Բրյուսովն անդրադառնում է հայերի  
արդի տխուր միջակին (բանաստեղծությունը գրված է  
1916 թ.) և հավատ է հայտնում, որ «Տիգրանի հաղթական  
ազգը» նոր սխրագործություններով կանմահացնի իրեն և  
խուլ փոթորիկներից ու մութից դուրս կգա «աստղի նման  
հավերժ պայծառ» և նրա երգը կհնչի «հավետ անմեռ».

Հիմա այս մեր աշխարհում նոր—  
Փոթորկածուկի ու անհանգիստ,  
Տեսքովը հին դարերի խոր  
Կանգնած եք սեզ, խոհուն ու խիստ:

Բայց ինչ եղել է, կա անմեռ՝  
Որպես պարզե, կամ դաս անանց—  
Հպարտ կրում եք դուք մինչդեռ  
Ձեր հին պըսակը հաղթանակն է:

. . . . .

Ձույգ աշխարհի գանձն ընդերքի  
Ձուլած մի նոր բարձր երգի  
Քրնարը քո հավետ անմեռ  
Հընի վրա հնչում է դեռ:

Բրյուսովի երազանքը իրագործվեց: Հայ ժողովուրդը  
նոր փոթորկից դուրս եկավ հաղթանակով: Սոցիալիստական  
ռեոլուցիան, սովետական կարգերը ապահովեցին նրա և նրա  
նման մյուս փոքր ժողովուրդների ազգային վերածնունդը,  
ստատեսական ու կուլտուրական վերելքը՝ Սովետական Միության



Բրյուսովի ժամանակակիցներից դեպի Կովկասը, մասնավորապես դեպի Հայաստանը հատուկ սեր է տածել Յուրի Վեսելովսկին։ Ոչ միայն իր բանասիրական հոգվածներով, այլև իր բանաստեղծություններով նա մեծ գործ է կատարել հայկական կուլտուրայի մասսայականացման գործում, արտահայտելով ջերմ սեր ու նվիրվածություն այդ ժողովրդի նկատմամբ։ Նա իր հոգվածներով, նվիրված հայ կուլտուրայի ներկայացուցիչներին, ինչպես և հայերենից կատարած իր թարգմանություններով հիմք դրեց այն արժեքավոր ձևնարկությանը, որն իր փայլուն շարունակությունը գտավ Վ. Բրյուսովի բեղմնավոր գործունեության ու Մ. Գորկու դեպի հայ կուլտուրան ունեցած հոգատար վերաբերմունքի մեջ, նպաստելով հայ և ռուս ժողովուրդների գրական կուլտուրական կապերի ամրապնդմանը։ Այս առումով ուշագրավ են նաև Հայաստանին նվիրված նրա ոտանավորները («Հայ ժողովրդին», «Հայերին» և այլն), թեև գրական տեսակետից նրանք զիջում են ոչ միայն Պուշկինի ու Լերմոնտովի երկերին, այլև Բրյուսովի նույն թեմայով գրած ոտանավորին։

## X

Մաքսիմ Գորկու անվան հետ է կապված Կովկասի նոր մեկնաբանությունը։ Կովկասը Գորկու կյանքում և ստեղծագործությունների մեջ պահպանելով հանդերձ իր բնական ուղմանտիկան, հանդես է գալիս, որպես ռևոլուցիոն պայքարի թատերաբեմ, որպես մարտական գործողությունների ռեալ վայր։ Այն վերացական ուղմանտիկական շղարշը, որով պարուրված էր Կովկասը էկզոտիկորեն տրամադրված գրողների գրվածքներում, Գորկին անողոր կերպով պատռում, դեն է գցում։ Նա Կովկասին նայում է ռեալիստ արվեստագետի և ռևոլուցիոն մարտիկի աչքերով։ Ինչպես իր ամբողջ գործունեությամբ, այնպես և Կովկասին նվիրված իր հոգվածներով ու ակնարկներով, Գորկին նոր մոտեցում



է հանդես բերում, նոր խոսք է ասում ուս գրականության պատմության մեջ:

Շարունակելով Պուշկինի և Լերմոնտովի լավագույն տրագիցիաները դեպի Կովկասն ունեցած նրանց բոցավառ սերը, և Լեւ Տոլստոյի անողոր ռեալիզմը, Գորկին այդ բուրիւն ավելացնում է իր ռեալիզմին ոգին և Կովկասը նրա մոտ հնչում է այլ ակորդներով և լուսավորում այլ, ավելի պայծառ ու հզոր լույսով: Գորկիով սկսում է ավելի բարձր էտապ Կովկասի գեղարվեստական յուրացման ասպարի-դում:

Կովկասը շատ է զբաղեցրել Մաքսիմ Գորկուն, եղել է նրա ստեղծագործական և, կարելի է ասել, ռեալիզմին գործունեության օրրանը: Իր գրական գործունեության արշա-լույսին Գորկին շրջագայել է Կովկասում և 1891 թ. աշնանը բնակություն է հաստատել Թբիլիսիում, որտեղ մնացել է մինչև 1892 թ. վերջերը: Այստեղ, հենց սկզբից Գորկին կապվում է ռեալիզմինորեն տրամադրված շրջանների հետ, լինում է քաղաքական հայացքների համար աքսորված մարդկանց շրջանում (հիշենք Կալուժնինի հետ ունեցած նրա բարեկամությունը, որը կարևոր դեր է խաղացել Գորկու կյանքում) և բանվորություն է անում Թբիլիսիի երկաթուղային արհեստանոցում: Այդ շրջանում նա շրջագայում է Վրաստանում, ուսումնասիրում տեղի ժողովուրդների կյանքը և իր նախնական գործունեությամբ նպաստում է աշխատավորների ռեալիզմին գաղափարական դարձնելին: Պատահական չէ, որ 1898 թ. Գորկուն էտապով բերում են Նիժնի-Նովգորոդից և ձերբակալում Թբիլիսիի Մետեխի բանտում: Թբիլիսի, Բագու, Մայկոպ և Կովկասյան այլ քաղաքներ Գորկին մինչև ռեալիզմին՝ մի քանի անգամ է այցելել. նա շատ լավ գիտեր ժողովուրդների կյանքը, բարքերը, ուսումնասիրել էր նրանց փոխհարաբերությունները և ծանոթ էր այդ ժողովուրդների ռեալիզմին ոգուն: Իր գործունեության ընթացքում Գորկին շատ մեծ ծառայություններ է մատուցել Կովկասյան ժողովուրդներին, ամեն կերպ

աշխատել է մասսայականացնել նրանց կուլտուրական հա-  
րըստությունները, բարձր է գնահատել նրանց գրական մեծ  
արժեքները: Բավական է հիշել, որ դեռևս 1916 թ. Գորկու  
խմբագրությամբ լույս տեսավ «Հայ Գրողների» ժողովածուն:  
Նա պատրաստվում էր խմբագրելու վրացական գրականու-  
թյան ժողովածուն: Այդպիսի ժողովածուներ նվիրվելու էին  
նաև ադրբեջանական, թաթարական և կովկասյան մյուս  
ժողովուրդների գրականություններին: Մինչև իր կյանքի  
վերջը Գորկին լուրջ հետաքրքրություն էր հանդես բերում  
դեպի կովկասյան ժողովուրդների գրականությունը՝ բարձր  
գնահատելով այն: Հիշենք, որ գրողների համագումարում  
Գորկին 20-րդ դարի Հոմերոս անվանեց Դադստանի ժողո-  
վրդական երգիչ Սուլեյման Ստալսկուն: Գորկին անձնական  
կապերով, նամակներով կապված էր Վրաստանի ու Հա-  
յաստանի մի շարք գրողների ու գրականագետների հետ:  
Այս փաստերը բավական են ասելու թե Գորկին ինչպիսի  
սեր է տածել դեպի կովկասյան ժողովուրդները և նրանց  
գրականությունը: Բայց կան և այլ փաստեր, պերճախոս  
վկայություններ, որոնք այդ տեսակետից պակաս հետա-  
քրքրություն չեն ներկայացնում, ընդհակառակը ընդարձա-  
կում ու խորացնում են մեր գիտելիքները այդ մասին:

Արդեն առաջին այցելության շրջանում Գորկին լուրջ  
կերպով ուսումնասիրում է տեղի ժողովուրդների կյանքն ու  
բարքերը, ուշադրությամբ լսում է նրանց ավանդություննե-  
րը: Այժմ արդեն հայտնի է, որ Գորկին դեռևս առաջին  
շրջանում Կովկաս եղած ժամանակ մոտիկ ծանոթությու-  
ններ է հաստատել նաև Թբիլիսիի հայկական-գրական կուլ-  
տուրական շրջանների հետ: Նա ծանոթ է եղել «Մշակ»-ի  
խմբագիր Գրիգոր Արծրունուն և բժիշկ Ս. Վարդանյանցին:  
Վերջինիս գրչին են պատկանում հետաքրքիր հուշեր Գորկու  
այդ շրջանի կյանքի մասին: Ինչպես նշվում է Գորկու մա-  
սին վերջերս հրապարակված նյութերում, մեծ գրողը Կով-  
կասում եղած ժամանակ հավաքել է ֆոլկլորային նյութեր:  
Բացի «Մական Զուպրա» գրվածքից, Գորկին այստեղ է ձեռ-

նարկում գրել Գանկույի լեզենդան և «Աղջիկը և մահը» նշանովոր երկը: Նա ֆուլկլորային նյութերով հարստացնում էր իր ստեղծագործությունները: Հայկական «Մշակ» թերթից նա գրի է առնում պարսկական ավազակ Նարիի մասին եղած լեզենդը: Մի այլ լեզենդ ավազակ Քերիմի մասին Գորկին լսում է հայ հրապարակախոս Արծրունուց:

Գորկու հետաքրքրության սահմանները աչքի են ընկնում իրենց ընդարձակությամբ ու բազմազանությամբ: Արդեն այդ շրջանի կովկասյան ապավորությունները հիմք են դառնում Գորկու առանձին ակնարկների համար: Հայտնի է նրա «Ուղեկից» ակնարկը: Նրա հերոսն է ազնվական թափափուկ Շաքրոն: Շաքրոն բացասական երևույթ է, բայց նա բնորոշ չէ Կովկասի ժողովուրդների վրացիների համար, որոնք ռևոլուցիոն գործիչների փայլուն պլեադա են ստեղծել: Այդպիսի տիպեր կարելի է գտնել և այլ ժողովուրդներ մեջ, բայց դրանով չեն բնորոշում նրանց հատկանիշները: Այդ լավ էր դիտակցում Գորկին: Կարևորն այն է, որ Գորկին հեռանալով Կովկասի վերացական ռոմանտիկական պատկերումից, ռեալիստի խորաթափանցությամբ կարողացել է բացահայտել բացասական երևույթներ ու խոցելի տեղեր՝ Կովկասի ժողովուրդների կյանքում: Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում Գորկու «Ավազակները Կովկասում» ակնարկը: Այստեղ նկարագրված է երկու ավազակների մահապատիժը, կախելու պրոցեսը՝ Գորիում, որին ականատես է եղել ինքը մեծ գրողը՝ վրաստանում կատարած իր շրջագայության ժամանակ: Մահվան դատապարտված մարդիկ իրենց պահում են հպարտ, համարձակ և չեն ընկձվում մահվան դիմաց: Նախքան մահվան օղակներն իրենց վզեր հագցնելը նրանք պարում են: Այդքան խոր կերպով արհամարհում էին մահը և իրենց շրջապատող դահիճներին:

Գորկին նայում է այդ մահվան դատապարտվածներին ոչ որպես ավազակների և խորապես ցավակցում ու համակրում է բռնակալության զոհերին: Որքան էլ ակնարկը գրված լինի էպիկական հանգստությամբ, Գորկու զգայուն

սրտի բաբախումը հասնում է ընթերցողին: Կովկասյան մոտիվների տեսակետից ուշագրավ է «Շաթերի տոնը» ակնարկը: Այստեղ Գորկին նկարագրել է դարձյալ իր տեսածը, մահմեդական շաթերի շախսեյ-վախսեյ կրոնական տոնը, որին նա ականատես է եղել Թբիլիսիում ապրած ժամանակ: Գորկին բավական հանգամանորեն նկարագրել է շաթերի երթը, խոշտանգումների պրոցեսը, թագցնելով իր զարմանքն ու զայրույթը այդ բարբարոսական սովորության առթիվ: «Այդ երեք օրը արժանի են նկարագրության,— կարդում ենք Գորկու մոտ,— օրեր, որոնց ընթացքում արևելքի մարդկանց կրոնական ֆանատիզմը զարգանալով աղատ և անկաշկանդ, հասնում է իր բարձրագույն կետին, ընդունում է անմիտ կատաղության ձև, հաճախ խեղանդամ է դարձնում և սպառնում իր ստրուկներին»: Գորկին անողոք քննադատության է ենթարկում կրոնական հետամնացության ու ֆանատիզմի այդ հիվանդոտ սովորությունը, որակում է այն «որպես արսափելի ու զգվելի մրցություն»: Մեծ արվեստագետին զարմացնում է մարդկանց ինքնախոշտանդման ասպարիզում հանդես բերած «երկաթյա համբերությունը»:

Գորկու քննադատության նշանակությունը մեծ էր, կրթոտությունը հասկանալի: Կրոնական ֆանատիզմը կաշկանդում էր մասսաների ռևոլուցիոն զարթոնքը, խանգարում էր նրանց ազատագրության գործին և Գորկին քննադատության ծանր մուրճով փշրում է տգիտության, հետամնացության կրոնական խավարի կաշկանդող շղթաները: Գորկու հետագա ակնարկներում («Մարդու ծնունդը» և այլն) մենք հանդիպում ենք Կովկասի գեղեցիկ բնության ցայտուն պատկերների, որոնք նկարագրված են խոր սիրով ու համակրանքով: Իսկ «Կալինին» ակնարկի հերոսը, որ մանկությունից լսել է Կովկասի մասին, ասում է.— «Կովկասը, եղբայր, բոլորին ձգում է: Այստեղ ապրելը լավ է, արևոտ է, ձմեռը կարճ է, շար չէ ինչպես մեզ մոտ, մրգերը առատ են, ընդհանրապես ապրելն ուրախ է»:

Գորկուն Կովկասին կապողը միայն գրական ստեղծա-



դործական հարցերը չէին անշուշտ: Կովկասը Գորկու հա-  
 մար ամենից առաջ ռևոլուցիոն պայքարի կենտրոն էր: Յա-  
 րահան ռեակցիոն կառավարութիւնը, օգտագործելով կով-  
 կասիան ժողովուրդների ազգային բազմազանութիւնը,  
 տմեն կերպ հրահրում էր ազգային անտագոնիզմ, անվստա-  
 հութիւն, և ազգային շարդեր էր կազմակերպում իր իշ-  
 խանութիւնը հաստատուն դարձնելու նպատակով: Այդպիսի  
 մի արյունալի ռճրագործութիւն էր 1905 թ. հայ-թրքական  
 կոտորածները, որը ցարական կառավարութիւն, ոստիկա-  
 նութիւն պրովոկացիոն գործունեութիւն արդյունքն էր  
 «Կովկասյան դեպքերի մասին» հոգւածում, որը ներկայաց-  
 նում է «Կասպի» թերթի խմբագրի հարցման պատասխանը,  
 Գորկին հրապարակախոսի բուռն կրքոտութեամբ մերկաց-  
 նում ու անարգանքի սյունին է դամում ցարական կառավա-  
 րութիւնն այդ սև գործը: Ռևոլուցիոն պաշտօնով զբաղած այդ  
 փայլուն հոգւածի մեջ Գորկին շանթ ու կայծակ է թափում  
 երկրի իշխող դասակարգերի ու նրանց կամակատարների  
 դէմ: Ընդհանրացնելով կովկասյան արյունալի տրագե-  
 դիան՝ նա գրում է. — «Նրանք բացահայտ հրահրում են, ինչ-  
 պես շներ, ուռններին՝ հրեաների, լեհերի ու ֆինների դեմ,  
 թուրքերին՝ հայերի ու վրացիների դեմ, քաղցած բթացած  
 գլուղացուն՝ ուսանողների և անգամ երեխաների դեմ»: Կովկասում տեղի ունեցած սարսափելի դեպքերը նորու-  
 թիւն չէին ցարական Ռուսաստանի տերերի համար: Այդ  
 շատ լավ հայտնի էր և Գորկուն, որը զայրացած ասում էր.  
 «Ինձ թվում է, որ ամբողջ երկրի համար միանման խայտա-  
 ռակ՝ Բազմի և Նրեանի արյունալի տրագեդիան իր մոտիվ-  
 ներով չի տարբերվի Քիշինիւլում և Վարշավայում, Ժիտոմի-  
 րում և Լոձում տեղի ունեցող համանման տրագեդիաներից:  
 Յախիջկանում, Կուրսկում, Ռիգայում և Իվանովո-Վոդնեսեն-  
 սկում, բոլոր տեղերում նկատելի են մի խումբ մարդ-  
 կանց զզվելի աշխատանքը, որոնք խելագարվել են երկրի  
 վրա իրենց իշխանութիւնը կորցնելու սարսափից, մարդիկ,  
 որոնք ձգտում են արյունով ծածկել ցայտուն կերպով խփող

ժողովուրդների՝ կյանքի ձևեր ստեղծելու իրավունքի գիտակ-  
 ցության հուրը»։ Գորկու այս նամակը ուղարկվեց իր  
 գնդական և հասնում։ Նա կոչ է անում ուսանողական կազմա-  
 թյան բոլոր ժողովուրդներին՝ ինտերնացիոնալ համերաշ-  
 խությանը կոչել ընդհանուր թշնամու՝ ցարիզմի և կապի-  
 տալիզմի դեմ։ «Հարկավոր է, որպեսզի Կովկասի ու Ֆին-  
 լանդիայի, Լեհաստանի ու Ռուսաստանի բոլոր լավագույն և  
 ազնիվ մարդիկ միանան բարեկամների մի ընտանիքում»։  
 Ահա Գորկու մարտական ուղարկված եզրակացությունը։  
 Գորկին խորապես վշտացել էր պատահածի, արյունալից  
 տրագիկիայի առթիվ։ «Նա այնպես ջերմ եմ սիրում այդ  
 հիանալի երկիրը, — կարդում ենք Գորկու այդ նամակի  
 մեջ, — որ մարմնավորում է հսկայական գեղեցկություն և  
 ուժ, ես սիրում եմ նրա լեռները՝ թևավորված ձյուներով,  
 հարթություններն ու ձորերը, որոնք լի են արագընթաց եր-  
 գող գետերի աշխույժ աղմուկով, և նրա գեղեցիկ հպարտ  
 զավակներին։ Լինելով Կովկասում, ես ամեն տեղ տեսնել եմ,  
 ինչպես բարեկամաբար և խաղաղ աշխատում էին վրացի-  
 թաթարի ու հայի հետ, ինչպես մանկանման աշխույժ և  
 պարզ կատակում էին նրանք, երգում ու ծիծաղում, և այն-  
 պես դժվար է հավատալ, որ այդ պարզ, հիանալի մարդիկ  
 այժմ բուխ ու անիմաստ կերպով ջարդում են իրար, են-  
 թարկվելով նրանց հրահրող շար և խավար ուժերին»։ Այս  
 տողերը լի են լիրիքական ջերմությամբ։ Գորկին վկայում  
 է կովկասյան ժողովուրդների մեջ գոյություն ունեցող ներ-  
 քին օրգանական բարեկամությունը և ինքը հանդես է գա-  
 լիս այդ բարեկամության, աշխատավորների ազատագրու-  
 թյան ջերմ պաշտպան։ Գորկին մտադրվում է գեղարվեստա-  
 կան մի երկ ստեղծել Կովկասի ուղարկված շարժման պատ-  
 մությունից։ Նա ցանկանում է ստեղծել ուղարկված բոլշևի-  
 կի տիպը և արվեստագետի ուշադրությունը բևեռվում է Կա-  
 մոյի կողմը։ Նրա լեզվադար կյանքը գեղարվեստական  
 ստեղծագործության առատ նյութ էր տալիս Գորկու հզոր  
 միտքը աշխատել է այդ ուղղությամբ, նույնիսկ նա գրել է

մի ակնարկ-հիշողութիւն՝ Կամոյի մասին, որտեղ շատ բարձր է դնահատում հայ ժողովրդի ծոցից դուրս եկած աչդ լեզենդար ռեուլուցիոններին: Կամոն աչքի է ընկնում իր պարզությամբ ու ճշմարտացիությամբ, անսահման քաջությամբ, ու ռեուլուցիոն զգացմունքների խորությամբ, պայծառությամբ: Նա ռեուլուցիոն ռոմանտիկ էր այս բառի լավագույն հմաստով: Ճինձ համար, ասում է Գորկին, Կամոն այն ռեուլուցիոններն էր, որոնց համար ապագան իրական է ներկայից: Դա բոլորովին չի նշանակում, թե նրանք երազողներ են, դա նշանակում է, որ նրանց դասակարգային ռեուլուցիոնութիւնը, էմոցիոնալության ուժն այնպես ներդաշնակ և ամուր է կառուցված, որ սնուցանում է նրանց բանականութիւնը, հող է ծառայում նրա աճման համար, կարծես ընթանում է նրա առջևից: Կամոն գրավում է Գորկոն իր ռեուլուցիոն խանդավառությամբ, անսահման նվիրվածությամբ ու բնավորության ամբողջականությամբ: Դա նոր ուժի, բարձրացող դասակարգի մարմնացումն էր հանգիստում Գորկոս համար, նրա գրական հերոսը, կովկասցին, որի մասին մեծ արվեստագետը խորին հարգանքով է խոսում:

Ռեուլուցիայի հաղթանակից ու սովետական կարգերի հաստատումից հետո կովկասյան ժողովուրդները նոր կյանքով սկսեցին ապրել, որի բնորոշ գիծը եղավ ժողովուրդների բարեկամութիւնն ու փոխադարձ վստահության միջոցառումը: Կովկասի ժողովուրդները սովետական ազատարար արևի տակ, չտեսնված ծաղկման հասան տնտեսական շինարարության ու ազգային կուլտուրայի զարգացման բնագավառներում: Այդ բոլորը Գորկին անձամբ դիտեց 1928 թվին Կովկաս կատարած իր վերջին այցելության ժամանակ: Դրա արդյունքը եղավ Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի մասին գրած նրա վալյուն ակնարկները: Ընդհանրապես Գորկին լուրջ ուշադրությամբ հետևում էր կովկասյան ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական վերելքին, ծորձագանքում դրանց և անմիջապես օժանդակում ազգային

գրականությունների դարգացմանը: Ժողովուրդների ստալինյան համերաշխությունը իր ստեղծագործական նշանակությամբ մարմնացել է Կովկասում: Այդ տեսնում էր մեծ արվեստագետը և Հայաստանի տասնամյակի առթիվ գրած ուղղությանի մեջ նշում.— «Անդրկովկասի ժողովուրդների ու արդյունաբերական և կուլտուրական հաջողությունները ցույց են տալիս, թե ինչպես հսկայական են բանվոր դասակարգի էներգիայի պաշարները, որը կառուցում է նոր կյանք: Թող ավելի հզոր և համարձակ ձևով էներգիան մարմնավորվի, էլյանքում»: Գորկին Անդրկովկասի, նրանց ժողովուրդների և նրանց ստեղծագործական աշխատանքների մասին արտահայտել է շատ հետաքրքիր կարծիքներ, թողել է պատիվ բերող դնահատականներ: Սեր ու ջերմություն է զգացվում Գորկու վերաբերմունքի մեջ, Կովկասի ժողովուրդների ազգային կուլտուրաների մասին արտահայտած կարծիքների մեջ: «Աշխուժորեն աղմկում է սիրելի վրացի ռոմանտիկ ժողովուրդը, որը սիրահարված է իր երկրի գեղեցկությամբ, ներքա արևային գինով և հիանալի երգերով».— կարդում ենք Գորկու՝ Վրաստանի մասին գրած ակնարկում: Իսկ Հայաստանից ստացված տպավորությունների մասին Գորկին գրում է՝ «Ինձ մոտ մնաց ամենահիանալի տպավորություն Երևան կատարած այցելությունից և Հայաստան կատարած շրջագայությունից: Հայաստանն, ասում է Գորկին,— խոշոր ապագա ունեցող երկիր է: Շատ օգտակար հանածոներ ունի, որոնց վրա այժմ լուրջ ուշադրություն են դարձրել: Հայաստանի ժողովուրդը թողնում է եռանդուն ժողովրդի տպավորություն, որն անկասկած գիտե ինչ է անում, գիտե ինչ խնդիրներ նա պետք է լուծի»: Ադրբեջանում Գորկու ուշադրությունը գրավում է տարբեր ազգերի հատկապես հայերի ու ադրբեջանցիների ջերմ եղբայրությունը և այն հաղթական շինարարությունը, որ ծավալվում է այնտեղ: «Բագուն, գրում է Գորկին,— բանվորների պետության կառուցման պրոցեսի հաջողության, նոր կուլտուրայի ստեղծման անկասկածելի և հիանալի տպացույցն է,— այսպես է իմ



տպալորութիւնը»։ Հետաքրքիր է Գորկու վերաբերմունքը նաև դեպի Դադատանը, լեռների այդ երկիրը, որը, ինչպես Սուլեյման Ստալսկին է գրել Մաքսիմ Գորկուն, Սովետական Իշխանության օրոք դարձել է՝ «ժպտուն այգիների, կենսութալս կոլխոզների և խելոք ու առողջ պատանիների երկիր»։ Գորկին Ստալսկուն խորհուրդ էր տալիս հավաքական ուժերով գրել մի գիրք Դադատանի պատմության մասին, որի մեջ «արտահայտել ցարական միապետության դեմ, Թերեքի նահանգի թալանչի վաճառականների ու կուլակների դեմ լեռնականների մղած երկարատև արշունալից պայքարի պատկերները։ Դադատանի այդ մարտական սպաքարը պետք է գրի առնվի, բայց ինձ թվում է, որ լավ կլինի, եթե նրա մասին գրեն իրենք՝ լեռնականները։ Հավանաբար Դադատանում ծերունիների, հին մարդկանց հիշողութիւնների մեջ տհաճ պանվիլ են մարտական երգեր, պատմվածքներ, լեգենդներ, — ահա թե ինչը պետք է կազմի ձեր երկրի պատմության հիմքը»։

Գորկին բազմաթիվ թելերով կապված էր Կովկասի ժողովուրդների հետ. նրանց ունեցիկն պայքարի ու հաղթանակների հետ։ Մեծ արվեստագետը և ունեցիկն մարտիկն ու սոցիալիստական երկրի բոցաշունչ հայրենասերը կովկասյան ժողովուրդների բարեկամն էր։ Նրա պայծառ հիշատակը միշտ վառ կմնա կովկասյան ժողովուրդների, նրանց արվեստագետների սրտերում, որոնց կուլտուրայի ծաղկման ու գրականության մասսայականացման համար այնքան շատ բան է կատարել Ալեքսեյ Մաքսիմովիչը։

## XI

Մաքսիմ Գորկու մարտական գրական տրագիցիաները Կովկասի նկատմամբ իր խոր արձագանքը գտավ սովետական էպոսայի մեծ պոետ Մայակովսկու, և մյուս պոետների ստեղծագործութիւնների մեջ։ Մայակովսկու գրվածքներում քիչ տեղ չեն գրավում Կովկասի լեռնոնտովյան մոտիվ-

ների ռեալիստական պատկերումը: Հիշենք նրա «Թամարան  
և Դեբ», «Սեաստոպոլ-Յալտա» և «Կլադիկավկադ-Թիֆլիս»  
բանաստեղծությունները:

Եթե առաջին երկու դրվածքներում լերմոնտովյան մո-  
տիվներն ստանում են ռեալիստական մեկնաբանություն և  
ռոմանտիկական հերոսները Թամարան ու Դեբ հանդես են  
գալիս իրական աշխարհային հակամենքով, ապա վերջին  
բանաստեղծության մեջ նա ոչ առանց յուսուրի հիշում է  
Կովկասում անցկացրած մանկական տարիները և իրեն հա-  
մարում է նոր սովետական տիպի վրացի: Այս բոլորը հար-  
ցի մի կողմն է միայն: Մյուս, ավելի կարևորը՝ դա Կովկա-  
սի գորկիական ըմբռնումն է և դրսևորումը: Մայակովսկին  
Կովկասի համար հարազատ մարդ էր. չէ որ չքնադ վրաս-  
տանք նրա ծննդավայրն է եղել: Նա չի սահմանափակվել  
միայն մանկական տպավորություններով, հաճախ է այցել-  
ել Կովկաս, ուսումնասիրել է նրա ռեոլուցիոն պայքարը և  
սոցիալիստական շինարարության հաղթանակները: Կովկա-  
սը սովետական մեծ պոետի ստեղծագործությունների մեջ  
մարմնանում է որպես ռեոլուցիոն պայքարի և սոցիալիս-  
տական հաղթական շինարարության մի կարևոր կենտրոն:  
Այս տեսակետից հատկապես բնորոշ է նրա կրակոտ բա-  
նաստեղծությունը «26-ի գործի մասին»: Բազմի կոմունար-  
ները ներկայացված են որպես կովկասյան ժողովուրդների  
ռեոլուցիոն զարթոնքի և հաղթանակների արտահայտիչներ:  
Մայակովսկու փայլուն բանաստեղծության մեջ նրանց հա-  
վաքական կերպարը կերտված է Հոկտեմբերյան Սոցիալիս-  
տական մեծ ռեոլուցիայի ընդհանուր ֆոնի վրա:—

Ամպրոպը

Աճում էր օրեց-օր,

Պալատի պատուհանները

Թափվում էին շառաշումով:

Եվ առաջին արևելքում

Ադրբեջանը կանգնեց

Հոկտեմբերյան

Բարիկադների վրա:

Պայքարի թմբուկով

Հասավ

Կամքը

Դարերով մոռացված լեռնցիներին,

Եվ նավթային արդյունաբերության ներքին  
խավերին:

Միլիոնների ուժը

Ապստամբությամբ էր խփում.

Բայց նրանց,

Ով կարողանում էր վարել,

Պայքարում կոփվածները—

Դրանք կազմում էին 26:

Կովկասյան լեռներում

Կովկասյան տափաստաններում,

Աշխատանքային բեռ կրողներ,—

Ձեզանից

Ով ծանոթ չէ Ստեփանին,

Ով չգիտի Ալյոշային:

Նրանց ձայնը—

Բանվորական ներքին խավի

ձայնն է.

Նրանց խոսքը—

Միլիոնների խոսքը:

26 կոմունարները կովկասյան ժողովուրդների եղբայ-  
րության ու համատեղ պայքարի կենդանի խորհրդանշանն  
են հանդիսանում, նրանց ինտերնացիոնալիստական ոգու  
մարմնացումը: Դավաճանությունը նրանց դրոշին՝ սրբա-  
պղծություն է: Ստալինյան բարեկամությամբ զոդված Կով-  
կասի ժողովուրդները միշտ բարձր կպահեն արյունով օծված  
Բազմի կոմունարների մարտական դրոշը, հավատարիմ կը-  
մնան նրանց եղբայրական գերեզմանին և սրբությամբ

կապահալանեն նրանց ռեզուլցիոն ավանդը ամենամեծ փորձությունների ժամանակ, ինչպես այդ նրանք պահպանեցին հայրենական մեծ պատերազմի ահեղ օրերին:

Սովետական մյուս պոետներից Կովկասը կարևոր տեղ է գրավում ն. Տիխոնովի ստեղծագործությունների մեջ: Այս տեսակետից նա հանդիսանում է ռուսական կլասիկ պոեզիայի լավագույն տրադիցիայի շարունակողը մեր օրերում: Բորիս Պաստերնակը նույնպես ունի Կովկասին նվիրված առանձին լիրիքական բանաստեղծություններ (Դեմոն և այլն): Բայց դրանք լերմոնտովյան մոտիվների առանձին կողմերի արձագանքն են: Կովկասը նրան հետաքրքրում է զուտ էսթետիկական, բնության գեղեցկության պատկերման տեսակետից: Պաստերնակի բանաստեղծությունների նրբությունն ու վարպետությունը ինչպես և սերը դեպի Կովկասը կասկածից դուրս է: Բայց նրա մոտ լերմոնտովի խռովահույզ տրամադրություններն ու պայքարի տենչը չենք զգում: Այլ բնույթ ունեն Տիխոնովի բանաստեղծությունները: 1924 թ. նա եղել է Կովկասում, ծառայել է Հայաստանի սահմանապահ զորքերում և մոտիկից ուսումնասիրել է Կովկասը նրա ժողովուրդների առօրյան՝ սովետական տարիներին: Այդ ուսումնասիրությունների արդյունքն է հանդիսացել Հայաստանին ու Վրաստանին նվիրված պոեմներն ու բանաստեղծությունները, որոնց մեջ նկարագրված է այնտեղ կատարվող շինարարությունը և սովետական կյանքը: «Ճանապարհ» պոեմում յուրահատուկ ձևով տրված է էլեկտրոկայանի շինարարությունը՝ Վրաստանում: Իսկ «Կարմիրները Արաքսում» պոեմի մեջ հեղինակը պատկերում է սովետական սահմանապահների կյանքը Հայաստանում, հայ ժողովրդի շրջանում: Երկու պոեմն էլ գրված են 1924 թ.: Հետագայում Տիխոնովը ստեղծեց Կախեթիայի մասին փալուն բանաստեղծությունների մի շարք: Այստեղ պոետական վարպետությամբ ու ռեալիստական պատկերներով պատմում է Կովկասյան ժողովուրդների ռեզուլցիոն



պայքարի մասին: Հիշում է այն մարտական շրջանը, երբ  
Կիրովը ազատագրում էր Կովկասը թշնամիներից:

Դրոշների պես շողացին քեզնով  
Օսական երկրի ձյուները, Կիրով,—  
Երբ էսկադրոններն ուժգին թափ առած,  
Այդ ձյուններն էին ճեղքում սրընթաց:

Իսկ մյուս բանաստեղծությունների մեջ («Տինանդալի»,  
«Գիշերային խնջույք Ալավերդում», «Սղնախի աշտարակնե-  
րը» և այլն), պոետը կենդանի ռեալիստական պատկերնե-  
րով տալիս է սոցիալիստական շինարարության և ուրախ  
կյանքի նկարագիրը: Տեղի ազգաբնակչության կենցաղն ու  
առանձին տիպեր ցայտուն արտահայտություն են ստացել  
սովետական ռուս պոետի գրչի տակ: Ինչպես ռուս նշանա-  
վոր գրողները, ինչպես Գորկին ու Մայակովսկին, Տիխոնով-  
ը նույնպես կապված է Կովկասի հետ, ոգևորություն է  
փնտռում նրա լեռներում: Նա սիրում է այդ երկրի զավակ-  
ներին և այն եռացող ստեղծագործական կյանքը, որ հիմ-  
նահատակ խորտակում է հին կենցաղը, արևելյան անշար-  
ժությունն ու ծովությունը և Կովկասը դարձնում է նոր կյան-  
քի, սոցիալիստական եռացող կյանքի անխորտակելի մի  
ամրոց: Այս տեսակետից որքա՞ն բնորոշ է Տիխոնովի «Հա-  
յաստան» գողտրիկ բանաստեղծությունը: Նրա յուրաքան-  
չուր տողից ցայտում է ռուս պոետի սիրո անկեղծ զգաց-  
մունքները Սովետական Հայաստանի նկատմամբ, որը Վա-  
հան Դրիգորյանի հաջող թարգմանությամբ հնչում է այս-  
պես.

Լեռների վրա և ձորերում խոր,  
Տարածվել է նա՝ խոյացել է վեր,  
Ինչպես մի ոսկե հուրհրան խնձոր՝  
Գեղատեսիլ մեր Հայաստանը վեհ:

Փռւլած է ընդեմ Արարատների  
 Եւ Արադածի դեմ ամպակուտակ,  
 Կարծես ժրաշան նա մի քույր լինի,  
 Իսկ աշխատանքը՝ եղբայր երկվորյակ:  
 Եւ Դիլիջանի անտառներին զով,  
 Զանգեզուրին, որ ունի հանքահոր,  
 Եւ Զորագէտին՝ լույսերի հորդ ծով,  
 Տիրում է պայծառ օրը յուշալոր:  
 Կանգնած է ընդդեմ ասիականութեան,  
 Ուր ծուլութունն է բոլորին տիրում,  
 Հանց անառիկ բերդ ջանասիրութեան,  
 Այդ Հայաստանն է ուրախ ու ժպտուն:

Մայակովսկու, Տիխոնովի, ինչպես և մյուս սովետական պոետների մոտ բացակայում են Կովկասի վերացական ուժմանտիկական պատկերները: Կովկասը նրանց գրվածքներում հանդես է գալիս իրական և հաղթական գծերով:

## XII

Ավարտելով Կովկասին նվիրված ռուսական գրականութեան հիմնական երկերի բնութագիրը՝ կարելի է այդ բոլորը ամփոփել ու ընդհանուր եզրակացություններ հանել:

Կովկասը ռուս գրականութեան զարգացման գործում կարևոր դեր է խաղացել: Այդ երկիրը ռուս գրականության համար եղել է ոչ թե սոսկ ռոմանտիկական հիացմունքի առարկա, այլ մի կարևոր թեմա, որի միջոցով նա արծարծել է իր ժամանակի հուզող հարցերը, ժողովուրդների փոխհարաբերության ու համակեցության կենսական խնդիրները: Ի պատիվ ռուս գրողների և գրականության պետք է նշել, որ նա իր հիմնական մասով առողջ ու առաջադիմական դիրք է գրավել այդ հարցում: Ռուս գրականությունը անողոր քրննադատության է ենթարկել ցարիզմի նվաճողական պլանները և աղգերի մեջ փոխադարձ թշնամություն հրահրելու

ռեակցիոն քաղաքականութիւնը: Այդ գրականութիւնը մի կարևոր վիայութիւն է նախ այն մասին, որ կովկասյան բազմազգ ժողովուրդների միջև եղել է սերտ բարեկամութիւն, հակառակ ցարիզմի կողմից հրահրւող ազգային անվստահութեան և այդ բարեկամութիւնը այսօր սովետական կարգերում դարձել է մարտական ու անխորտակելի: Երկրորդ, որ կովկասյան ժողովուրդների և ռուս ժողովրդի բարեկամութիւնը պատմական ու դրական փաստ է: Բելինսկու այն կարծիքը, թե Պուշկինը սրբագործեց Կովկասի գործնականորեն գոյութիւն ունեցող հարազատութիւնը՝ Ռուսաստանի հետ, խոր ճշմարտութիւն է և այն կարող է վերաբերվել այն ամբողջ գրականութեանը, որ նվիրված է Կովկասին: Ռուս գրականութիւնը դեպի Կովկասն ունեցած իր սիրով ու համակրանքով հաստատում է նշանավոր քննադատի այդ կարծիքը: Մարդ հիշում է Լերմոնտովի սրտառուչ տողերը.—

Իմ հայրենյաց քաղցրակարկաչ երգի պես  
Սիրում եմ ես Կովկասը:

Այս տողերում արտահայտված է ռուս մեծ ժողովրդի վերաբերմունքը: Իրոք Կովկասը ռուս գրականութեան ու ժողովրդի համար հարազատ է, ինչպես հայրենի ստեպների երգը և հանդիսանում է նրա տաղանդների «պոետական հայրենիքը»: Կովկասը ռուս գրականութեանը պատկեր է իր ժողովուրդների ռազմաշունչ բնույթով ու անցյալի հերոսկայով, դեպի ազատութիւնն ունեցած իրենց բոցավառ սիրով: Ինչպես ճիշտ նկատում է Իլյա Էրենբուրգը՝ «Ռուսական պոեզիայի օերը դեպի Կովկասը—դա ազատութեան սեր է: Կովկասի ժայռերի և մարդկանց մեջ ռուսական առաջին ռոմանտիկները մոլեգնութիւն էին որոնում: Կովկասի կրծքին էին հպվում, որպես ոգեշնչման աղբյուրի, Պուշկինն ու Լերմոնտովը, Մայակովսկին ու Տիխոնովը: Կովկա-

սը նրանց համար ոչ թե դեկորացիա էր, ոչ թե պելլաժ, այլ անվեհերութեան և անհաշտութեան դպրոց»:

Կովկասի ժողովուրդների հերոսական դժերը դրսևորելով հանդերձ ուս պրականութիւնը, սակայն, չի սահմանափակվել դրանով: Մշակելով կովկասյան թիմատիկան, ուս գրողները միաժամանակ հանդես են բերել ջերմ հայրենասիրութիւն, կերտել են ուս զինվորների հերոսական դիմքեր, որոնք դաժան մարտերում փառք են նվաճել ուսական զինքի համար: Նրանք չեն համակրել, այլ ուժեղ քննադատութեան են ենթարկել ցարիզմի բռնի քաղաքականութիւնը, բայց Կովկասի նվաճումը և այն ուսական կայսրութեանը միացնելը ունեցավ օրեկտիվորեն դրական նշանակութիւն նրա ժողովուրդների համար, Ռուսաստանի ռազմական հզորութեան ամրացման համար: Դա էլ հենց ազգային հպարտութեամբ է լցրել շատ ուս գրողների սրտերը: Բայց նրանց հայրենասիրութիւնը նեղ ազգայնական բնույթ չի կրել և չի հակադրվել ժողովուրդների բարեկամութեան ու համատեղ գործունեութեան սկզբունքին: Ընդհակառակը, ժողովուրդների բարեկամութիւնը հղել է և մնում է ուս առաջավոր գրականութեան փայփայած գաղափարը, նրա վեհութեան փայլուն արտահայտութիւնը. դա ցայտուն կերպով երևում է Կովկասին նվիրված գեղարվեստական երկերից:

Կովկասը վաղուց արդեն հարազատ է դարձել ուս դրականութեան և այդ դրականութեան հիման վրա դաստիարակված ընթերցողների համար, յուրաքանչյուր ուս մարդու համար: Եվ այդ սերն ու հարազատութիւնը որոշակի պարզութեամբ դրսևորվել է Կովկասի հերոսական պաշտպանութեան ժամանակ, որին մասնակցում էին ռուսներն ու ուկրաինացիները, բելոռուսներն ու ուզբեկները: Իր հպարտութեան, Կովկասի համար մարծնչում է ամբողջ Ռուսաստանը»:

Ժողովուրդների այս եղբայրական դաշինքի և մարտա-



կան բարեկամության մեջ է մարմնացած սովետական կարգերի ուժը, նրա հզորությունն ու անխորտակելիությունը:

Սովետական իշխանության ժամանակ Կովկասն արմատապես փոխեց իր դեմքը. սրա ժողովուրդներն ապրեցին ազգային վերածնունդ, տնտեսական ու կուլտուրական աննախընթաց վերելք: Կովկասյան ժողովուրդները Սովետական Միության եղբայրական ընտանիքում գրավելով իրենց պատվավոր տեղը, Ստալինյան Կոնստիտուցիայի արևի տակ կառուցեցին իրենց ազատ ու երջանիկ կյանքը: Կովկասի հպարտ և ազատասեր ժողովուրդները Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին, ուստի մեծ ժողովրդի գլխավորությամբ միահամուռ ուժերով ու հերոսաբար պայքարում էին այդ կյանքի համար՝ գերմանական հափըշտակիչների դեմ: Այդ հերոսական պայքարը խոր արձագանք է դնում սովետական գրականության մեջ, գրականություն, որը շարունակում ու զարգացնում է ուստի կլասիկ գրականության լավագույն տրադիցիաները՝ Կովկասի նկատմամբ. սովետական գրականությունը ջերմ պատկերներով ու անկեղծ զգացմունքներով փառաբանում է ժողովուրդների ստալինյան բարեկամությունը, որպես անհաղթելի զենք, և գովերգում է հարազատ հերոսական Կովկասը:

Այս ծանր տարում, այս ահեղ օրը մենք ձեզ, ընկերներ, նամակ ենք գրում, մեր սրտից հիմա գրում ենք նրանց, Ուլքեր եղել են Դոնի, Կուբանի անաճ զավակներ, Ում որ Կովկասը տվել է արծվի արյուն ու հայացք: Մեր թշնամիներն անցան Կուբանի արձակ դաշտերով, Ուր բարձրացել է, հասակ է առել բերքը լիովին: Դեպի Կովկաս են խցկվում նրանք ազա՛ գնդերով, Ուր ամեն շշուկ և ծանոթ է մեզ, և մոտ մեր սրտին, Ուր ճամբարների ամեն մի քարը սիրելի է մեզ, Ուր կովկասցու հետ բարեկամության երգեր ենք երգել, Եվ որ նրա հետ մենք եղբայրության բաժակն ենք խմել:

(Ա. Սաֆրոնով—Նամակ դեպի հարավ», «Պրավդա», 15 սեպտեմբերի 1942 թ., թարգմ. Հ. Մաղմանյան):

Կովկասը՝ լեռնային այդ արքայութիւնը, որն այնքան  
ոգեշնչված սիրով գովերգվել է ռուս գրականութեան մեջ, և  
որի հոյակապ ու հերոսական կերպարն ոգևորում էր սովե-  
տական հայրենասերներին իրենց արդար կովում,— այդ  
լեռնային արքայութիւնն անմատչելի դարձավ գերմանա-  
կան արյունարբու հորդաներին: Իրագործվեց այն, ինչ ասել  
էր իր ժամանակին Սերգեյ Միրոնովիչ Կիրովը Կովկասի  
հերոսականութեան մասին. «Մենք պետք է ասենք,—նշում է  
Կիրովը,— որ ոչ միայն գեղեցկութիւն է թաղնված Կովկա-  
սի լեռներում, այլև հպարտ ժայռերի այդ շղթան կհանդի-  
սանա այն հզոր պատվարը, որին դիպչելով կջախջախվեն  
ռեակցիայի բոլոր ուժերը»:

Ով ընթերցել է Պուշկինի և Լերմոնտովի Կովկասին  
նվիրված ստեղծագործութիւնները,— ա չի կարող չսիրել  
այդ երկիրը և ծանր օրերին չկանդնել նրա ազատութեան  
պաշտպանների դիրքերում:

Ռուսական գրականութիւնը Սովետական Միութեան  
բազմամիլիոն ընթերցողներին դաստիարակել է և դաս-  
տիարակում է սիրո և նվիրվածութեան ոգով հպարտ և հե-  
րոսական Կովկասի նկատմամբ: Իր այդ հատկութեամբ ռուս  
գրականութիւնն ունեցել է ակտիվ մասնակցութիւն նրա  
հերոսական պաշտպանութեանը: Եվ դա ռուս ժողովրդի  
պանծալի գրականութեան խոշորագույն ծառայութեաննե-  
րից է, ժողովուրդ, որը բոլշևիկյան պարտիայի ղեկավարու-  
թեամբ և մեծ Ստալինի առաջնորդութեամբ հերոսաբար  
գլխավորեց Սովետական Միութեան ժողովուրդների  
ազադագրական պատերազմը ընդդէմ ֆաշիստական ավա-  
զակների և իր տիտանական պայքարով ու ստեղծագործա-  
կան հանճարով լուսավորում է աշխարհի բոլոր ժողովուրդ-  
ների համար ազատ և երջանիկ կյանքի ուղին:

— — —




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026240


9420 5 m.



317/41



9425 5 00.



317/41